


ՍԻՈՆ  
Կրօնական Գրական  
Բանասիրական



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐՈՒՍԱԿԷՐԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆՈՐ  
ԵՐԶԱՆ 1960

17.  
ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية، دينية، أدبية، ثقافية، للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology  
Printed in JERUSALEM

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |                          |     |
|---|--------------------------|-----|
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ  |                          | երկ |
| — Ս. Ծննդեան պատգամ   |                          | 1.  |
| ԿՐՕՆԱԿԱՆ  |                          |     |
| — Վարդանանց պատերազմը   | Ն. Գ.                    | 4   |
| — Ասուծոյ հայրութիւնը   | ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ          | 7   |
| ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ   |                          |     |
| — Դեռ   | ԱՐՍԷՆ ՆՐԿԱԹ              | 11  |
| — Սասմոյ Մըհեր  | Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ             | 12  |
| ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ   |                          |     |
| — Նաւեկացիք եւ հեռագայ հայ գրականութիւնը                            | Մ. ՄԿԻՆԱՆ                | 16  |
| ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ   |                          |     |
| — Խնդրակատար Ս. Ասուածածնի վանք                                     | Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ          | 22  |
| ԳՐԱԽՕՍԱԿԱՆ  |                          |     |
| — «Հայ Դրի եւ Գրչութեան Պատմութիւն»                                 | ՄՍԵՐՈՊ ՎՐԻ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ | 24  |
| — «Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի Համեմատութեամբ 562 Լեզուներ» | ԱՆՈՒՇԱԿԱՆ ՎՐԻ. ԶՂՋԱՆԵԱՆ  | 27  |
| Հին Էջեր  |                          |     |
| — Տալ   | Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ    | 31  |
| ՊԱՏՄԱԿԱՆ  |                          |     |
| — Հին Վաղարշապատը՝ Էջմիածին   | ՎԱՐԱԶԻՍ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ      | 34  |
| «ՍՈՒՆ»Ի ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  |                          |     |
| — Միջինք  | Ն. Ե.                    | 37  |
| Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ  |                          |     |
| — Հեռագիրներ  |                          | 38  |
| — Եկեղեցական-Բեմական  |                          | 38  |
| — Պատգոհական  |                          | 41  |
| — Զեռնագրութիւններ Ս. Աթոռոյս հովանիին ներքեւ                       |                          | 43  |
| ԶՆԿՈՅՑ Գալուստ Կիւլպենկեան Հիմնադրութեան                            |                          | 46  |

ՍԻՈՆ-ի Տարեկան Բաժնեգիրքն է՝  
 թղթ երկիրներու համար՝ Անգլ. Շրիին 20  
 Redaction of the Armenian Monthly SION  
 Armenian Patriarchate,  
 P. O. B. 4001  
 Old City - Jerusalem  
 Via Amman (Jordan)

تصدرها - بطريكية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النياحة الاسقف هاياكوزن أبراهاميان  
 يناير - فبراير ١٩٦٠ تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ١ - ٢

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.  
 Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.  
 Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

# —≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Գ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1960

← Յուճուար — Փետրուար →

Թիւ 1-2

**ԽՍՐԱԳՐԱԿԱՆ**

## Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍ

Ազգ իմ սիրելի, ժողովուրդ Հայոց, որ ի Յորդանան, և ի Հայրենիս, և ի Սփիւռս աշխարհի:

Կը խօսիմ Ձեզի, այս պահուն, յանուն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, աշխարհի ամենէն նուիրական մէկ Սրբավայրէն, Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան այն քարայրէն, ուր մօտ 2000 տարիներ առաջ ծնաւ աշխարհի Տէրն ու Փրկիչը՝ սփռնչելի Աստուածորդին:

Կը խօսիմ Ձեզի այն Սրբավայրէն, ուրկէ երկնքի հրեշտակներ, առաջին անգամ ըլլալով, աւետեցին համայն մարդկութեան աստուածային խաղաղութեան պատգամը: —

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ու խաղաղութեան այս երգը, որքան իրաւամբ, որքան տեղին այդ օրերուն մանաւանդ, տառապող այն մարդկութեան համար՝ որ յանուն ճշմարտութեան, իմաստասիրական անվերջ և աննպատակ խուզարկութիւններէ ու բազմատեսակ ու անիմաստ չաստուածներու մնոտի պաշտամունքներէն յոգնած, հոգեկան անհուն ծարաւն ու անձկազին սպասումը ունէր, իր կեանքը խանդավառող Աստուածային հրաշալի առաջնորդութեան մը:

«Փառք ի բարձունս Աստուծոյ»:

Վասնզի ի լրումն ժամանակաց, սքանչելի գիշեր մը, այս Ս. Քարայրին մէջ, կը յայտնուի նոյնինքն մեր Տէրն ու Փրկիչը, տարակոյսներու մէջ խաբխափող մարդկութեան բերելու համար Աստուածային այդ հրաշալի առաջնորդութիւնը:

«Փառք ի բարձունս Աստուծոյ»:

Վասնզի Աստուած ինքն իսկ կ'իջէր մեզի իր յաւիտենական ճշմարտութեամբ, իբրև գերազանց Հայր ամենեցուն, այնքան բարեգութ, այնքան մարդասէր, անոխակալ և նախախնամող:

«Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

77/2

1934 թ ա հ

Վասնզի նոյնինքն Աստուած կ'իջնէր բերելով մեզի, տառապող ու իրար չհանգուրժող, իրար բզբտող մարդու որդիներուս, զերազանց ու սուրբ եղբայրութեան երաշխիքը: Եղբայրութեան մը՝ որ կերպաւորուած, ձև ու մարմին, կեանք ու թուիչք ստացած էր իր Սուրբ Հայրութեան Խորհուրդին մէջէն:

«Խաղաղութիւն և հաճութիւն ի մարդիկ յա»:

Որովհետեւ իր ամենասուրբ յայտնութեամբ, մարդը, այլևս, Աստուածային զերազանց զօրութեան յարարերաբար, կը դադրէր ըլլալէ սարուկ, զերի, զետնաքարէ ոչնչութիւն, նախաքրիստոնէական ըմբռնումներու համաձայն՝ դատապարտուած մը հոգեկան և ֆիզիքական մահուան: Այլ ընդհակառակը, մարդը կը ստանար նոր նշանակութիւն, որով Աստուծոյ Ս. Հայրութեան Խորհուրդին մէջ եղբայրացած, ան կը բարձրանար հոգեկան ստրկութեան հանգամանքէն, ու արժանի կ'ըլլար Աստուածային սիրոյ զերազոյն վայելքին, և իբրեւ որդեգիր Հօր Աստուծոյ, ան կը ղեկավարէր երկնաւոր թագաւորութեան երջանիկ քաղաքացի:


Արդարեւ Քրիստոսի ծնունդով ժողովուրդներ, որոնք կը նստէին խաւարի մէջ, տեսան մեծ լոյսը: Զի Աստուած ընդ մեզ եղաւ, ապրեցաւ մեր մէջ, շաղխեց մեր հոգիները իր սուրբ սիրով, ու մարդը ատակ դարձուց նոր ու փառաւորեալ կեանքի մը:

Այս պահուն սակայն, այս սրբազան խոկումներուն քովն ի վեր, մեր մտքերը չեն կրնար չխնդուելի նաև մթաստուեր գաղափարներով, երբ կ'անդրադառնանք որ, հրեշտակներու խաղաղութեան այնքան սրտագրաւ երգէն 2000 տարիներ յետոյ, խաղաղութիւնը, հաճութիւնն ու սէրը տակաւին չեն գտած իրենց արդար արձագանքը մարդոց հոգիներէն ներս: Վասնզի մեր աշխարհին մէջ մինչև այսօր չեն դադրած վէճն ու կռիւր, կրակն ու աւերը, ու մարդիկ կը տառապին իրերհակացուցութեան պակասէն:

Ու տակաւին մեր ալ ազգային ու եկեղեցական կեանքէն ներս անմիաթարական երեւոյթներ կը տաղնապեն մեր սիրտն ու միտքը, որովհետեւ մեր ալ ազգային տունէն ներս, անհանդուրժողութիւնը, կազն ու կռիւր կը փոթորկեն բարեւոք զործունէութիւնը մեր վանքերուն ու եկեղեցիներուն, մեր դպրոցներուն ու ազգային հաստատութիւններուն և վերջապէս ազգասէր ու եկեղեցաւնէր յառաջադրութիւններով մարմին առած մեր բոլոր կազմակերպութիւններուն:

Աւետարանի սուրբ խաղաղութիւնն ու հաճութիւնը չենք կրնար գտնել տակաւին անհատ մարդերու հոգիներէն ներս, ուր վրէժն ու ատելութիւնը, նախանձն ու չարութիւնը կը զործեն իրենց աւերը, արգիլելով մարդը, միայն ու միայն զեղեցիկը, բարին և ճշմարիտը իրագործելու իր զերազանց ու աստուածային կոչումին արդար ուղիէն:

Այս պատկերին առջև որքան արդար է ըսել, թէ խաղաղութեան և մարդոց միջև հաճութեան հրեշտակային պատգամը տակաւին մինչև այսօր չէ կրցած իջնել երկինքներու իր բարձունքներէն ու սաղմնաւորուել մարդոց սրտերէն ներս: Սակայն քրիստոնէին մեծագոյն առաքելութիւնն է «յամենայն ժամ կալ յաղօթս» և յուսալ ի Տէր վրան բարեկարգութեամբ ամենայն աշխարհի:



Ու այսօր, Ս. Ծննդեան այս գիշերին, ահաւասիկ մենք, Միաբանութիւն Սրբոց Յակոբեանց և հաւատացեալ ժողովուրդ մեր, ու դուք, հայազարմ հաւատացեալներ և ջերմեռանդ ունկնդիրներ, ձեր հոգեկան ու մարմնաւոր լսելիքներով միացած մեզի անխառն ու սրբազան յուզումով, հա թուրս ծնրադիր երկիւղածութեամբ, մարմնացեալ Փրկչին Ս. Ծննդեան Սրբավայրին առջև, արտասուածքս աչօք և հառաչմամբ սրտի, կը վերառաքենք մեր աղօթքները:

Ո՛վ Տէր, Դուռն անքնին ծնունդ Հօրդ երկնաւորի, հրաշալի Յայտնութեան այս գիշերին, ընդունէ մեր ի խորոց սրտի աղօթքները, ու մարդկային տկար արարածներուս հոգիներէն ներս, ու մասնաւորապէս մեր տառապալիո՞ծ ժողովուրդի շարքերէն ներս, շնորհափայլէ Քու աստուածային ողորմութեանդ անստուեր նշոյները: Հալեցուր մեղքին կապարը, հալածէ չարիքին իշխանը, վանէ խաւարն ու տարակոյսը, փարտէ տաքնապին ու չարիքին յուսահատութիւնը, և թող թագաւորէ ամենուրեք Քու ամենակար քաւիչ Ս. Այդ ու փոխակերպէ մեզ բոլորս, ըլլալու համար երկնառաք խաղաղութեանդ և հաճութեանդ մաքրամաքուր բնակարանները:

Ո՛վ Տէր, Ծննդեանդ այս Սուրբ Դիշերին, այցի ելիր Քու սրբազնասուրբ Հայաստանեայց եկեղեցիին, որուն կերտումին համար Դուռն այնքան գորովալի, իջար նոյնիսկ երկինքներու Քու անմատոյց բարձունքներէդ, ու Արարչագործ ձեռքովդ իսկ կերտեցիր զայն հրաշքի մը պէս հայու հողէն ու հայու սրտէն: Վերստին ծաղկեցուր անոր երբեմնի փառքին պատմուճանը, վերածելով զայն միայն ու միայն հոգեւոր առաքելութեան բոցարծարծ վառարանի:

Ո՛վ Տէր, կը պաղատինք Քեզի, Ս. Ծննդեանդ այս տօնին օրը, շնորհափայլ ծաղկեցուր իշխանութեան գաւազանը մեր եկեղեցւոյ Հաւատոյ Հօր՝ Ամենայն Հայոց Սրբազնազոյն և Վեհափառ Հայրապետին, որպէսզի ան իր շատ պատասխանատու ու դժուարին պարտականութեան խնդրումին մէջ, միշտ Աստուածային ներշնչումի կրակովը հրազինուած, առաջնորդէ ի բարին հանուրը Հայաստանեայց գաւակներուդ հօտը:

Ո՛վ Տէր, կ'աղօթենք Քեզի տակաւին, շնորհէ Քու քաղցր ու Աստուածային հովանիդ, Սուրբ Երկրի և համայն Յորդանանի մեր սիրեցեալ, կորովի և իմաստուն Վեհապետին՝ Հիւսէյն Առաջինին, որպէսզի երկար ու երջանիկ արեւշատութեամբ ըլլայ հօր ու անպարտելի պաշտպանը Յորդանանի և համայն Հաշիմական Թագաւորութեան սրբազան հողին:

Ու ըրէ մեզ բոլորս Քու Աստուածային փառքիդ ու կամքիդ հրաշալի անօթները, որպէսզի Ս. Փառքիդ մէջ փառաւորուած, ամէնքս ի միասին օրհնենք Քու Սուրբ Անունդ, ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյն, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Մեծ աւետիս է մեզ բոլորիս. —

Քրիստոս ծնաւ եւ յայնցեցաւ:

## ԿՐԹՆԱԿԱՆ

### ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Որոշ Վարդանանց տօնը տարուէ տարի յարաճուն հանդիսաւորութեամբ կը կատարուի ամէն տեղ: Հայաստանեայց Եկեղեցին և Հայ Ազգը ամբողջութեամբ այս մեծ տօնին մէջ կը տեսնեն մեր զգալին ողբին լուսափայլ ճառագայթումը: Այդ մեծ կոյւր գլխաւորող հերոսները կը հանդիսանան մարմնացումը զազափարապաշտ հայութեան տեսլական տրամադրութեան: Հայ ժողովուրդը անոնց մէջ կը տեսնէ իր ոգեկան բարձր յատկութիւններուն հոյակապ մարմնաւորումը:

Այս ավերակ հտակաւ անդրադարձումները վարդանանց պատերազմին շուրջ նպատակ ունին արծարծել մեր մէջ ազգասիրական և հայրենասիրական այն վեհ ոգին, որ գիտակից անձնագոյութեամբ միայն կրնայ ծաղկել և բարգաւաճիլ:

1. — Գեպէք. — Մեր ազգային պատմութեան մէջ արձանագրուած ամենէն նշանաւոր գէպէքերէն մին է Վարդանանց Պատերազմը: Ան կը յուզէ իւրաքանչիւր հայուն սիրտը և միտքը: Այդ պատերազմին պատմութիւնը ծանօթ է ամենուրեք և թարմ մեր յիշողութեան մէջ: Հարկ չենք տեսներ անդրադառնալու անոր մանրամասնութիւններուն: Կը բաւէ միայն յիշել որ հայերը, հակառակ իրենց խիզախութեան, չկրցան տէրը դառնալ պատերազմի դաշտին:

2. — Հայ բանակիի պարտութեան պատճառները բազմաթիւ էին: Առաջին գծի վրայ կուգար ոյժերու անհասարարութիւնը: Պարսկական զօրքերու թիւը կ'աճէր 300.000-ը, մինչ հայկական բանակը կը հաշուէր միայն 66.000 հոգի: Պարսից բանակը օժտուած էր նաև պատերազմական փիղերով: Ասկից զատ — ցաւալի իրողութիւն — Սասանեան բանակին յարած էին նաև այն դաւաճան հայերը, որոնք Վասակ Սիւնիի առաջնորդութեան տակ պիտի կուռէին իրենց ազգին, հայրենիքին և Եկեղեցիին:

Գէմ: Հայոց պարտութեան ուրիշ մէկ պատճառն էր այն, որ հայերը շատ վարժ չէին բաց դաշտի մէջ կուռելու: անոնք աւելի ընդունակ էին լեռնային մասեր կարենելու: Երրորդ պատճառ մըն էր այն իրողութիւնը, որ ուխտապահները աշխարհիկ յաղթանակի մը ոգեւորութեամբ չէին գացած կուռելու, այլ պարզապէս կը կուռէին զազափարի մը, իտէպի մը սիրտին, որ էր կրօնքի ապատութիւնը: Վարդանի և իր ընկերներուն համար նահատակութեան պատկը շատ աւելի ցանկալի էր այդ օրը, քան մարմնաւոր յաղթութիւնն մը դափնին:

Այս պայմաններուն տակ ուրիշ բացայայտ էր հայոց պարտութիւնը: Միայն հրաշքով մը կրնային անոնք խորտակել Սասանեան հսկայ բանակը: Եթէ հայերը դաշտ լըած էին՝ ատորնպատակն էր հասկցնել պարսից թէ հայերը չէին կրնար դիւրաւ լքել իրենց հողերը անկախութիւնը, զոր ձեռք ձգած էին այնքան դժուարութիւններէ վերջ:

Հայերը կրօնափոխ դառնալով արհամարհած պիտի ըլլային այն ճիւղերը զոր Մեսրոպ Մաշտոց թափած էր ի խնդիր հայ տառերու գիւտին, անարգած պիտի ըլլային այն աշխատութիւնները զոր Սահակ Պարթև և իր աշակերտները տարած էին Աստուածաշունչի թարգմանութեան և Հայ Եկեղեցւոյ պաշտամունքին հայացման համար, և ոտնակոխ ըլած պիտի ըլլային բոլոր այն ջանքերը որոնք եղած էին ձեռք բերելու Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան անկախութիւնը: Ուխտապահ զինուորներու անվիհեր գիմադրութեան նպատակն էր՝ գէթ պարսից հասկցնել հայ ժողովուրդի խոճի պարտութեան իրաւունքին անբարարարութիւնը: Հայերը նախապէս իրօքած էին այդ կէտը հասկցնել պարսից պետութեան վարիչներուն, գրով և խօսքով, բայց կրակապաշտները չէին ուզած կամ չէին կրցած ըմբռնել հայ քրիստոնէին հողովիճակը: Կետեարար կը մնար վերջին միջոց մը, այսինքն գէնքը, արիւնին վկայութիւնը:

3. — Վարդանանց եղբայր յեսագեթինը. — Մեր պատմութեան մէջ դարադրուի մը կազմող այս պատերազմին էութիւնը իր ամէն կողմերով ըմբռնելու համար պէտք է որ մեր նայուածքին կարկինը բանաճքի մը աւելի լայն, քանի մը տասնեակ

տարիներ դէպի ետ ու առաջ, և փորձենք տեսնել նախ այն յետագետիկը որ կարելի և անխուսափելի դարձուց այսպիսի ճակատամարտ մը:

Հինգերորդ դարուն սկիզբները հայերը, տէր գաղտնիով սեփական ալյուրակներ, բուռն թափող մը հայացուցին Աստուածաշունչն ու բոլոր նշանաւոր գլուխ գործոցները քրիստոնէական մատենագրութեան: Հայացած մեր Եկեղեցին դարձաւ հայ ազգութեան կեդրոնը: Ան մէկ կողմէն անբաժան անդամն էր ընդհանուր քրիստոնէութեան, միւս կողմէն անկեղծ կազմակերպութիւն մըն էր իր ինքնաւոր նուիրապետութեամբ: Հայ Եկեղեցւոյ պետը միանգամայն գլուխն էր հայ ազգին:

Յիշեալ դարուն սկիզբները Արշակունիաց Հարստութեան երեքացող գահը, նոյն դարուն երկրորդ քառորդին հազար թեաւ կոխած կը դորձնէր վերջնականորէն: Տասնամեակ մը հազիւ անցած վերջ կը գտնէր նաեւ հայրապետութիւնը Լուսաւորչեան պարթևազն տոհմին, որ այնքան մեծ և հեղինակաւոր հայրապետներով վարած էր Հայ Եկեղեցւոյ ղեկը:

Այս գոյգ խոշոր կորուստներուն թողած բացը լեցնելու կոչուած էին հայերը այն աշակերտներուն, որոնք մարգուած էին Սահակի և Մեսրոպի շուշուքով: Այս սերունդը, կրնանք յայտարարել, չունեցաւ իր նմանը մեր պատմութեան ընթացքին, ոչ իրմէ առաջ և ոչ ալ իրմէ ետքը: Այդպիսի հայրենասէր, հաւատացեալ, դիտակց, խանդավառ և ազատաշունչ սերունդ չեն տեսած հայերը: Ոսկեդարեան այդ սերունդը պիտի կրնար իր ուսերուն վրայ վերցնել հայ ժողովուրդի առաջնորդութեան պատասխանատուութիւնը, և իր ազգամանդեայ տոկոսնութիւնը ամբարտաւել պարսիկ բռնապետութեան ամբարտաւան ալիքներուն դէմ:

Մտաւորական այդ սերունդը իրեն գործակից պիտի ունենար հայ նախարարութիւնները, որոնք դեռ կը պահէին իրենց ոյժերուն և իրաւունքներուն մեծ մասը: Տակաւին կը տէէին Արշակունեաց արքունիքին կապուած գլխաւոր պաշտօնները, որոնց գլուխը գտնուող իշխանները կը շարունակէին որոշ հմայք և հեղինակութիւն

ի դորձ զննել իրենց ստորագանցողներուն և ժողովրդային զանգուածին վրայ: Այնպէս որ Հայոց Սպարապետը կրնար իր դրօշը բարձրացնել և անոր ներքեւ խմբել մի քանի տասնեակ հազար զինուորներ, որոնք Արշակունի թագաւորներու մականին տակ ծառայած էին ոչ շատ տարիներ առաջ կամ զաւակներն էին երբեմնի հայ բանակներու քաջակողով մարտիկներուն:

Արդարեւ կար հայութեան մէջ տեսակէտներու, աշխարհայեացքի և շահերու տարբերութիւն: Գաբրիէ ի վեր հայերու մէջ գոյութիւն ունեցող հոգովէասէր և պարթևասէր տարրեր կ'մտնէին ալ կը կազմէին երկու ընդդիմամարտ հոսանքներ՝ յունասէր և պարսկասէր: Անխուսափելի էր ատակա, քանի որ Հայաստան կը գտնուէր երկու հզօր կայսրութիւններու՝ Բիւզանդիոնի և Պարսկաստանի միջև. և ազգասէր տարրերու անբաժար ոյժերը — մանաւանդ Արշակունեաց գահին անկումէն և Լուսաւորչեան տոհմէն կաթողիկոսներու սպառումէն վերջ — դժբախտաբար ի վիճակի չէին հակադրելու այդ երկու հզօրներու քաղաքականութեան, և վարելու սեփական անկախ քաղաքականութիւն: Հինգերորդ դարուն կիսուն, պարսկասէր կուսակցութեան գլուխն էր Վասակ Սիւնին՝ Հայաստանի Մարզպանը: Իր կուսակցութիւնը կը համարէր քանի մը տասնեակ նախարարներ և կը կազմէր ոչ արհամարհելի ոյժ մը: Արդի պատմաբաններէն ոմանք փորձած են արդարացնել Վասակի ընթացքը իբրեւ անելի դիւանագիտական, և սակայն Վասակը պատապարտելի գտնուեցաւ ոչ միայն հայութեան խզճմանքին, այլ նաեւ պարսից պետական բարձրագոյն ատենանին առջև, թէև տարրեր պատճառներով: Իր գաղափարաւորութիւնը, հետեւաբար, կրնանք նկատել դատապարտութիւնը նաեւ իր վարած սխալ քաղաքականութեան:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչէն ասդին հայոց մէջ յունասիրութիւնը աւելի կը ծաւալէր, քանի որ մէկ կողմէն կար կրօնքի նոյնութիւնը, իսկ միւս կողմէն պարսից գահը զբաւող Սասանեան վեհապետները թշնամական աչքով կը դիտէին հայոց գահին վրայ դեռ ևս փայլող Արշակունի արքաները: Ոսկեդարեան սերունդը, առաւել

լապէս յոյն լեզուով և զպրօնական մը սնած և քրիստոնէական գաղափարներով տոգորուած, բնականաբար արհամարհանքով պիտի նայէր մոխրապաշտ պարսկներուն: Ինչպէս ղեկավար տարրը, նոյնպէս և ժողովրդական զանգուածը, սրտազին փարած էր իր ազգային մեծ հաստատութեան, այսինքն Եկեղեցիին, որուն պաշտպանութեան համար տառապանքներ կրել և աբեւն թափել սիրելի էր իրեն յայնքան, որքան էր քրիստոնէութեան հալածանքի դարերու մայրօրհոսներուն: Այսպէս ուրեմն պարսկները իրենց համար շատ աննպաստ ժամանակ մը ընտրած էին հայերը կրօնափոխ ընելու: Իր Եկեղեցիին հայացումովը հոգեւին խանգաւառուած ժողովուրդ մը իր եռանդին այդքան բորբոքուն մէկ վիճակին մէջ բաժնել իր պաշտելութեան առարկայէն՝ անկարելիութիւն մըն էր բնականաբար:

4. — Վաղղամանց պատերազմին հետեւանքները. — Այժմ ակնարկ մըն ալ նետնեք Վարդանանց պատերազմին անմիջական և հեռաւոր հետեւանքներուն վրայ: Ճակատամարտի միջոցին սպարապետին մահը և ապա հայ բանակին ցրուումը չէին նշանակեր թէ ընդդիմութիւնը խորտակուած էր և պայքարը վերջացած, այլ թէ սկիզբը պիտի գրուէր տարբեր մեթոտով պայքարի մը, որ պիտի շարունակուէր աւելի քան երեք տասնեակ տարիներ, յանգելու համար Նուարսակի դաշինքին:

Վարդանանց պատերազմէն վերջ պարսիկ բռնապետը կը թեթեւցնէր Հայաստանի հարկերը, վերադառնալով սրբազանելու համար իր չափաւանդներ. միւսինչ ատեն ցաւով կը դիտէր Հայաստանի աւերումները, զոր պատճառած էին Սասանեան գունդերու արշաւանքները. բան մը որ իրենց կրօնքն ալ կ'արգիլէր: Վարդանի եղբորորդին Վահան Մամիկոնեան բուռն թափով կը շարունակէր մանր կռիւներ մղել Սասանեան գունդերուն դէմ և յանկարծական յարձակումներով յոգնեցնել թշնամին Վահանի անխօնջ պայքարը վերջապէս ստիպեց պարսիկները որ խաղաղութեան գաղինքի առաջարկ ներկայացնեն: Նուարսակի դիւղին մէջ, 484ին, ստորագրուեցաւ համաձայնագիրը, ըստ որուն հայերը պիտի չբռնադատուէին հաւա-

տուրացութեան, այլ ազատօրէն պիտի պաշտէին իրենց կրօնքը: Այսպէս Վարդանանց ազատասիրական պայքարը կը պսակուէր Վահանեանց յաղթանակով:

Ասոնք էին անմիջական հետեւանքները Վարդանանց պատերազմին: Բայց հոս կանգ պիտի չառնէր այդ գիւցազնական ոգիին բոցավառումը: Ան ծնունդ պիտի տար գրականութեան մը որ իր կարգին պիտի ներշնչէր գալիք սերունդները: Ղազար Փարսպեցին, մանաւանդ Նղիշէն<sup>(\*)</sup> իր ոսկեղէն գրիչով պիտի պանծացնէր այդ կոիւնին հերոսները և անմահական գիւցազներգութիւն մը պիտի կտակէր հայութեան: Իր չքնաղ մատենանը պիտի կարգացուէր դարէ դար, պիտի խանգաւառէր Հայ ժողովուրդը և զայն պիտի մղէր ծառանալու՝ ամէն անգամ որ բռնապետ մը փորձէր ձեռք երկնցին: Բայ Եկեղեցիին, հայութեան հաւատքին սրբազան բերդին: Ան խիզախօրէն ոտքի պիտի կանգնեցնէր բովանդակ հայութիւնը պաշտպանելու համար իր հոգեւոր անկախութիւնը: Դալիք դարերուն հայ քաղաքական իշխանութիւնը կրնար վերականգնուիլ, կրնար ծաղկիլ պահ մը, և սակայն վաղանցիկ ճոխութենէ մը յետոյ պիտի իյնար օտար՝ բռնապետներու հարուածներուն տակ: Հայութեան հոգեկան անկախութիւնը սակայն պիտի տնէր մինչև վերջ, վառ պահելով նաև քաղաքական անկախութեան իղձը ազատատենչ հայութեան սրտին մէջ: Վարդանանց ընտրած գաղափարապաշտ ուղեգիծը հարազատ էր հայ հոգիին և ատոր համար Վարդան պաշտօնեցաւ և պիտի պաշտուէր իրրեկ սուրբ և իրրեկ հերոս: Ան մեր պատմութեան թմին վրայ պիտի փայլի յաւիտենապէս: Ինչպէս մենք, նոյնպէս նաև մեզմէ յետոյ գալիք հայ սերունդներ խորին պաշտումով պիտի խոնարհին իր լուսափայլ պատկերին առջև:

Ն. Գ.

(\*) Գեր. Ն. Ս. Ակիսեան, իր բարի ազդեցութեան համաձայն, փորձեց բռնազբօսիկ քաղաքացի Նղիշէն տանիլ իր ուղած տեղը, բայց ի զուր յոյնեցաւ և մնաց կէս ճամբան:



## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՅՐՈՒԹԻՒՆԸ

«Հայր մեր որ յերկինս ես»  
(ԱՍՏ. Զ. 9):

Յիսուս երկու նոր պատգամներ աշխարհ բերաւ: Իր բոլոր վարդապետութիւնները հիմնուած են այս երկու պատգամներուն վրայ: Երբ կ'ըսենք թէ Յիսուս նոր պատգամ բերաւ աշխարհ, նորութիւնը կը գործածուէր յարաբերական իմաստով միայն: Որովհետեւ բացարձակ իմաստով նորութիւն չկայ աշխարհի վրայ: Հրէից մեծ գիտունը, ասկէ՝ երեք հազար տարիներ առաջ, աշխարհի մէջ բացարձակ նորութեան մը հանդիպած չլլալուն համար կ'ըսէ. «Եւ ոչ է ամենայն առժամայն ընդ արեգակամբ, զի զոր խօսիցի ոք (եւ ասիցէ, ահաւասիկ այս նոր է» (Ժող. Ա. 10):

Քրիստոսն մը երկու տարբեր բաղադրութիւններ իրար խառնելով՝ նոր, ուրիշ բաղադրութիւն մը յառաջ կը բերէ անոնցմէ: Ասիկա նորութիւն մըն է, բայց ոչ թէ իրականապէս՝ այլ երեւութապէս: Նոյնպէս երբ զաղափար մը նոր կը կոչենք, ըսել չենք ուզեր թէ ատրկա բացարձակապէս նոր է, այլ նոր է անոր համար որ նոր իմաստով ու ըմբռնութեամբ զայն կը ներկայացնենք: Զոր օրինակ, երբ Յիսուս ըսաւ թէ «պատուիրան իմ տամ ձեզ» զի սիրելիք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ. զի և զուք սիրեսցիք զմիմեանս» (Յովհ. Ժ. 34), ասիկա նոր էր յարաբերական ըմբռնութեամբ և ոչ թէ բառին բացարձակ իմաստով: Քանզի Հին Ուխտի մէջ գրուած է. «սիրեցես զընկերքս իբրեւ զանձն քո»: Ուստի ասին մարդ պէտք էր որ սիրեր իր ընկերը:

Բայց հարց է թէ ո՞ր է մեր ընկերը: Հրեաներ հին ատեն ընկեր կամ զբոցի ըսելով կը հասկնային միայն իրենց ազգակիցները, Խորայէլի զաւակները, հետեալաբար մէկ կողմէն իրենց ազգակիցները սիրելով հանդերձ միւս կողմէն կ'ատէին իրենց կրօնքին չպատկանող ցեղերն ու թշնամիները: Իսկ Յիսուսի ըմբռնութեամբ, ընկեր բառը աւելի լայն իմաստ մը ունի. բոլոր

մարդերը իւրաւուն ընկերներ են. պէտք չէ մէկը սիրել և միւսը ատել, այլ՝ սիրել աւելնքը. մեր թշնամիները նոյնիսկ: Յիսուս ասիկա ոչ միայն կ'աւուցանէր,՝ այլև կը գործադրէր իր առօրեայ կեանքին մէջ:

Ահա այս իսկ պատճառաւ, Քրիստոս այս ուզողութեամբ իր տուած պատգամը նոր պատուէր կը նկատէ: Որովհետեւ նոր իմաստով զայն կը ներկայացնէ: «Սիրեցէք զիրար» կ'ըսէ, «ինչպէս ես ձեզ սիրեցի»: Մեր զբոցին կամ ընկերը Աստուծոյ սիրածին պէս սիրել՝ նոր ցեսակեք մըն էր, նոր պատուէր մը:

Յիսուսի աշխարհ բերած նոր պատգամներէն մին էր Աստուծոյ հայրութիւնը, իսկ միւսը՝ Աստուծոյ քաղաքացիութիւնը: Աստուծոյ սակայն հրեաներու համար օտար գաղափարներ էին: Հին Ուխտի հեղինակներն մարգարէներ գիտէին զանոնք, սա տարբերութեամբ միայն որ անոնք այս երկու գաղափարները կը բացատրէին հին իմաստով, մինչ Յիսուս, անոնց մէջ նոր իմաստ մը գնելով, կը ներկայացնէր զանոնք բուրովին նոր մեթոտով մը: Հրէից առաքիւններ իրենց ուսուցումները աւանդական ձեւով կը ներկայացնէին, իսկ Յիսուս նոր մեթոտով կը սորվեցնէր, գիտելով զանոնք իր հոգեւոր կեանքի փորձառութեան լոյսովը:

Ա. — Աստուծոյ հայրութեան ըմբռնութեամբ  
Հին Ուխտի մէջ: — Աստուծոյ ինքզինքը աստիճանաբար յայտնեց մարդոց: Մարդիկ դարբնու ընկացելն այնքան կրցան հասկնալ զԱստուծո՞՛ որքան իրենց իմացական ու կրօնական զարգացումը կը թոյլատրէր: Հետեալաբար տարբեր ժամանակներու մէջ մարդիկ տարբեր կերպերով ըմբռնեցին Աստուծոյ օտարոգելիները և Անոր մարդկային ցեղի հետ ունեցած յարաբերութիւնները, իրենց կրօնական կեանքի փորձառութեան լոյսովը գիտելով զանոնք:

Հրեաներ հին ատեն զԱստուծո՞՛ կը նկատէին իրենց պէս մէկը՝ որ կը բարկանար, կ'ատէր, կը տրամէր, կը զզջար, եւ այլն: Մենքոց գրքի հեղինակին համար կարծես՝ Աստուծո՞՛ պարտիպան մըն էր, որ առաււոտեան զով օդին կը պտտէր պարտէլին մէջ (Մենք. Գ. 8), Հրեաները ապա երբ քիչ մը զարգացան, նկատեցին, զինքը իբրեւ քիչն ազգային Աստուծո՞՛ որ կը պտտե-

բազմեր իրենց հետ և իրենց համար: Իս-  
րայելացիք բազմաստուածեան չէին. թէն  
կ'ընդունէին մէկէ աւելի աստուածներու  
գոյութիւնը, բայց Յնովան էր իրենց իրա-  
կան Աստուածը. միւսները կեղծ ու սուտ  
էին իրենց համար: Հրէից կրօնը այս իմաս-  
տով միաստուածեան էր: Եղիա մարգարէ  
օր մը ժողովուրդին այսպէս ըսաւ. «Դուք  
մինչև և՛ բրկու մտքի վրայ կը կազմա-  
եթէ Յնովա Աստուած է, անոր հետեւն գա-  
ցէք. իոկ եթէ Բահաղ է՝ անոր հետեւն գա-  
ցէք» (Գ. Թագ. ԺԶ. 21):

Հին Ուխտի մարդոց ըմբռնումով, Աս-  
տուած թագաւոր մըն էր և մարդիկ Անոր  
հպատակները. Աստուած արարիչ մըն էր և  
մարդիկ Անոր արարածները: Մարգարէնե-  
րուն Աստուածը քաւելի հոգեւոր և աւելի  
բարձր յատկութիւններով օժտուած էր:  
Մարգարէները զԱստուած կը համարէին իբրեւ  
հոգի, և ոչ թէ մարդու կերպարանքով  
չըլող էակ մը: Աստուած կրնար յայտնուիլ  
երբեմն մարգարէներուն, բայց հասարակ  
մարդիկ չէին կրնար որեւէ կերպով Անոր  
շնորհաց աթոռին մօտենալ:

Հրեաներ թէն Աստուծոյ հայրութեան  
գաղափարին տեղեակ էին, մարգարէներու  
օրով մանաւանդ, ինչպէս Յսայի. կ'ըսէ.  
«Տէր, հայր մեք», կամ ինչպէս Ներմիայի  
գրքին մէջ Աստուած կ'ըսէ. «Ձի եղէ Իս-  
րայէլի հայր, և Եփրայն անդրանիկ իմ է»  
(Երեմ. ԼԱ. 9), բայց այս գաղափարը  
լոկ անուանական էր իրենց համար: Հրեա-  
ներու համար Աստուած հայր էր իբրեւ  
իրենց ցեղին պահապանն ու պաշտպանը  
(Երեմ. ԼԱ. 9, Մլք. Ա. 6, Բ. 10): Այս  
իմաստով, Աբրահամ ալ հայր կը կոչուէր  
շատ մը ազգերու համար (Ծննդ. ԺԷ. 4,  
Հռովմ. Դ. 17-18):

Այս ընդհանուր իմաստով, Աստուծոյ  
հայրութեան գաղափարը հեթանոս կրօնք-  
ներու մէջ ալ կար: Զոր օրինակ, յոյներու  
Զևս (Zeus) աստուածը հայր էր բոլոր մար-  
դոց, և կը պաշտուէր հին ատեն յոյներու  
կողմէ իբրեւ հայր աստուածներու և արա-  
րածներու: Հռովմէացիներ Զևսին ձիրքի-  
թըր անունը կու տային և իրենց ալ գայն  
կը նկատէին իբրեւ աստուածներու զլիա-  
ւորը: Զևս մեր հեթանոս նախահայրերուն  
ալ ծանօթ էր Ուրմիդէ կամ Արամազդ պ-

նունով, և էր, Հայաստան աշխարհի մեծա-  
գոյն աստուածը, արարիչ երկնի և երկրի  
և հայր բոլոր արարածներու: Արամազդ  
հայրն էր նաև Անահիտ աստուածուհիին,  
Միհրին ու Նանէին՝ որոնք ծնած էին ա-  
ռանց Ժոր:

Այս հասկացողութեամբ, Աստուծոյ հայ-  
րութիւնը որեւէ կենսական առնչութիւն  
չունի անհատ հաւատացեալներու առօրեայ  
կեանքին հետ: Հեթանոս աշխարհի համար  
Աստուած հայր է իբրեւ աստուածներու մե-  
ծագոյնը լոկ և ոչ ուրիշ բան: Նոյնպէս  
Աստուած հայր է հրեաներուն համար իբրեւ  
ցեղին հաւաքական հայրը լոկ, առանց սա-  
կայն շփում ունենալու անհատ հրեաներու  
կեանքին հետ: Այս էր անհաւասրկ Յիսուսի  
ժամանակ Աստուծոյ հայրութեան մասին  
հին կրօններու, ինչպէս նաև Մովսիսական  
կրօնի ըմբռնումը:

Բ. — Աստուծոյ հայրութեան մասին Յի-  
սուսի տեսակէք: — Յիսուսի և հրէից միջև  
Աստուծոյ հայրութեան նկատմամբ եղած  
տարբերութիւնը ոչ թէ աստիճանի՝ այլ  
տեսակի տարբերութիւն էր: Հեթանոսին  
համար Աստուած կարողագոյն էակ մըն էր  
և հրեային համար՝ իր ազգին խնամակալը,  
բայց Յիսուսի համար հայր մը ոչ միայն  
հրէից՝ այլ մարդը մարդկութեան. ոչ թէ  
ցեղերու՝ այլ անհատներու: Ըստ Յիսուսի,  
ամէն անհատ Աստուծոյ զաւակն է և Աս-  
տուած ամէն մէկ անհատի հայրը: Ամէն  
անհատ իրաւունք ունէր զԱստուած հայր  
կոչելու և նոյնիսկ Անոր հետ շփում ունե-  
նալու և Անոր փառաց ու շնորհաց գահին  
մօտենալու, առանց հրեական կրօնի ման-  
ուսականացած ձեւակերպութիւններուն:

Այս իմաստով, Աստուծոյ հայրութեան  
գաղափարը ոչ միայն հեթանոս ցեղերու՝  
այլև հրեայ ազգին համար նորութիւն մըն  
էր: Ահա թէ ինչու Յիսուս, իբրեւ կրօնի  
հիմնադիր, կրօնից պատմութեան մէջ նոր  
գարազուիտ մը բացաւ, այս ըմբռնումը թէ՛  
իւր կեանքով և թէ՛ իր խօսքով ի լուր աշ-  
խարհի պատգամելով:

Իաղապատեցէ Հին Ուխտի մէջ աղօ-  
թելու ատեն գործածուած բանաձևները նոր  
Ուխտի բանաձևներուն հետ և պիտի գտնէք  
Աստուծոյ մասին երկու կտակարաններուն  
ըմբռնումի տարբերութիւնը: Իսաիթի Սագ-

մասաց գիրքը հրէից աղօթագիրքն է, և Դաւիթ, իբրև Աստուծոյ սրտակից մէկը, ջիւղմեանդ աղօթող մըն էր: Հոն աղօթքնէնը կը սկսին այսպէս. «Մ'վ Տէր, մինչև ե՞րբ բոլորովին զիս պիտի մոռնաս» (Աղմ. ԺԿ. 1): «Տէր, ո՞վ պիտի կենայ Գու վրանիդ մէջ» (Աղմ. ԺԵ. 1): «Մ'վ Տէր, քեզի կը կանչեմ» (Աղմ. ԻԸ. 1): «Ականջ դիր, ո՞վ Խորալիլի ճովիւր» (Աղմ. Զ. 1): Այս բանաւները ցոյց կուտան թէ Աստուած Սաղմոսերգուն համար Տէր է, և կամ Խորալիլի հովիւր, պաշտպանն ու խնամակալը: Դաւիթ զԱստուած Հայր չի կոչէր, այլ կը նկատէ զայն Խորալիլի հովիւր կամ հայրը:

Սողոմոն, Տաճարի նաւակատեաց հանդէսին առթիւ երբ իր ձեռքերը դէպի երկինք տարածեց և օրհնեց զԱստուած, իր աղօթքը սկսաւ հետեւել բաւերով. «Մ'վ Տէր՝ Աստուած Խորալիլի» (Գ. Թագ. Ը. 23): Ո՞վ Հայր չըսաւ: Դանիէլ, երբ Բաբելոնի պերսեանքէն մէջ Աստուծոյ կը խնդրէր որ Երուսաղէմը նորոգուի, իր աղօթքը սկսաւ այսպէս. «Մ'վ Տէր, մեծ և ահաբեկ Աստուած... ո՞վ Տէր, լսէ. ո՞վ Տէր, ներէ. ո՞վ Տէր, մտիկ ըրէ» և այլն (Դան. Թ. 4-20): Աստուծոյ համար Հայր բառը չգործածեց: Հրէից Մանասէ թագաւորը երբ դարձի եկաւ և ապաշխարեց, աղօթեց սա բաւերով. «Տէր ամենակալ, Աստուած Արահամու, Իսահակայ, Յակոբայ՝ և զաւակի նոցա արդարոց, ամենակալ Տէր, թող զմեզս իմ»: Աստուած իրեն համար ամենակալ Տէր էր միայն, և ուստի ան ալ զԱյն հայր չկոչեց:

Բայց երբ Յիսուս աղօթեց՝ ըսաւ. «Շնորհակալ եմ Գեղմէ, ո՞վ հայր, տէր երկնի և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն ու գիտուններէն ու աղոց յայտնեցիր: Այո՛, ո՞վ հայր, վասն զի Գու առջեգ այսպէս հաճեիր եղաւ» (Մատթ. ԺԱ. 25-26): Իր քահանայապետական աղօթքին մէջ, որ գրուած է Յովն. ԺԷ. զլիսուն մէջ, Յիսուս վեց անգամ պատեհութիւն կ'ունենայ Աստուծոյ անունը յիշելու, և ամէն անգամուն ալ զԱյն հայր կը կոչէ, տարբեր կերպերով: Զոր օրինակ՝ կ'ըսէ. հայր, ո՞վ հայր, արդար հայր, սուրբ հայր, և այլն: Գեթսեմանի պարտէզին մէջ իր աղօթքը այսպէս

կը սկսի. «Մ'վ հայր, արքա հայր, ամէն բան կարելի է Գու առջեգ»: Երբ իր աշակերտները իրմէ խնդրեցին որ իրենց աղօթք մը սորվեցնէ, Ան ըսաւ իրենց որ աղօթեն այսպէս. «Հայր մեր որ յերկինս ես...»:

Աստուծոյ մասին այս նոր տեսակետը առաջին օրէն Քրիստոնէական Եկեղեցւոյ ալ տեսակէտը դարձաւ: Առաքելներու գրութիւնները լեցուն են այս ուսուցումով: Պօղոս առաքել կ'ըսէ. «Մինչ մէկ Աստուած ունինք, հայրը, ուրկէ են ամէն բաները» (Ա. Կորն. Ը. 6):

Այս ճշմարտութիւնը ուրիշ կրօններու հիմնադիրներ չկրցան զգանալ: Ո՛չ Կոմիտիլիս; ո՛չ Զրադաշտ, ո՛չ Պուտտա, և ո՛չ ալ հրեայ աստուածաբաններ ու բարեպաշտ մարդիկ, և նոյնիսկ մարդաբաններ չկրցան յայտնաբերել. բայց Յիսուս պատգամեց զայն իր հօր լուսնովը: Դանիէլ Յիսուսի և անոնց կրօնական փորձառութեան միջև ահաբեկ տարբերութիւն կար: Յիսուս ամբողջ մարդկային ցեղի կրօնից պատմութեան մէջ եզակի գէմք մըն էր, և այնքան մօտեցած էր Աստուծոյ՝ որ նոյնացած էր Անոր հետ. այնպէս որ ինք և իր Հայրը մէկ էին և ոչ թէ երկու: Ուստի զարմանալի չէ որ կրօններու ամբողջ պատմութեան մէջ ինքն է միայն որ կրցաւ Աստուծոյ հայրութեան զառաքելը նոր իմաստով ու ճիշդ կերպով պատգամել մարդկութեան:

Գ. — Աստուծոյ հայրութեան գաղափարին գործնական արժէքը: — Եթէ Աստուած ամենուր հայրն է, ուրիշն պէտք է ապրինք այս աշխարհի մէջ որպէս Անոր զաւակները: Զաւակ մը պէտք է որ իր հօրը պատկերը կրէ իր վրայ: Մեր հոգին ուրիշ բան չէ բայց եթէ Աստուծոյ հոգին մէկ կայծր: Աստուած միշտ իր նմանութեամբը ստեղծած է: Եթէ մենք մեր Արարչին պատկերը կը կրենք, պէտք է որ ամբիծ ու անաղարտ պահենք զայն. հակառակ պարագային չենք կրնար Անոր զաւակները նկատուիլ և իրական քրիստոնեաներ համարուիլ: Միծն Աղեքսանդր երբ օր մը գետնէ մը կ'անցնէր, իր զինուորներին մին չկրցաւ անցնիլ. կայսրը հարցունց անոր թէ ձիւն է անունդ. անունն Աղեքսանդր է և պատասխանեց զինուորը. երկուսսարդ եր-

կրակալը իրեն դարձաւ և ըսաւ. «կա՛մ անուշ գոտի և կա՛մ անցիր այս գոտին. պէտք է որ իմ անունին անպատուութիւն բերես»: Համալսարանէ շրջանաւարտ փաստաբան մը երբ գործի կը ձեռնարկէր, իր ազգականներէն փորձառու ծերունի մը սախրատը տուաւ իրեն. «Յիւրէ՛ ամէն անգամ որ դուն հօդ գլուակն ես. անոր լաւ ամուսնին արեւս մի՛ բերես»: Ամէն քրիստոնեայ Աստուծոյ զաւակն է և պէտք է իր կեանքով փառաւորէ իր երկնաւոր Հօր անունը: Յիսուս այսպէս ըրաւ. Աստուած միշտ փառաւորուեցաւ իր կեանքով:

Յիսուս իսկապէս Աստուծոյ տիպար ներկայացուցիչն էր երբ կ'ապրէր այս երկրագունդին վրայ: Անոր նաողը վկասուած էր տեսներ: Փիլիպպոս երբ օր մը ըսաւ Յիսուսին թէ «հայրը մեզի ցուցուր», Յիսուս ըսաւ անոր. «Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, և զիս չճանչցա՞ր, Փիլիպպոս. այն որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ, և դուն ի՞նչպէս կ'ըսես թէ Հայրը մեզի ցուցուր» (Յովհ. ԺԳ. 8-9): Աստուծոյ զաւակը ըլլալու առանձնաշնորհումը վայելող ամէն ճշմարիտ քրիստոնեայէ կ'ակնկալուի (Աստուծոյ նմանիւ և Անոր կենդանի պատկերը ըլլալ այս աշխարհի մէջ: Ամէն մէկ հաւատացեալէ կը պահանջուի Յիսուսի հետքերուն վրայէն քալել և Աստուծոյ ներկայութեամբ օժտուած ապրիտակերպի մը հետեւիլ: Նոյնպէս Եկեղեցիի ամէն մէկ անդամէն կ'ակնկալուի մաքուր կենցաղավարութիւն, անշահասիրի ծառայութիւն, խոնարհ ոգի, ուղղամտութիւն և արդարաւորով ընթացք՝ որպէսզի երկնաւոր Հայրը փառաւորուի իր կեանքով:

Եթէ Աստուած մեր երկնաւոր Հայրն է, ուրեմն մենք իրարու եղբայրներ ու քոյրեր ենք: Սոյն է ահաւասիկ քրիստոնէական կրօնի տիեզերական եղբայրակցութեան վարդապետութեան հիմնաքարը: Յիսուս աշխարհ եկաւ հիմնելու համար տիեզերական այս եղբայրակցութիւնը՝ Աստուծոյ հայրութեան գաղափարին ներքեւ: Եթէ մարդկութիւնը պիտի ունենայ իր ոսկեղարը, խաղաղութեան ու ապահովութեան զարաշրջանը, ամէն ազգ ու ամէն անհատ պէտք է որ իր երջանկութիւնը փնտռէ իր դրացիին երջանկութեան մէջ: Իմ երջանկ

ըլլալու գործնականի մէջ արժէք մը չի ներկայացնէր եթէ իմ դրացիս զօրախտ է. փոխադարձաբար, իմ դրացիս երջանկութիւնը չի կրնար ձիաշուն ըլլալ եթէ ես ցուրտ ու տառապանքի մէջ կը տուայտիմ:

Համագործակցութիւնը տիեզերական եղբայրակցութեան էական պայմաններէն մին է: Այն թէ մէկ մարդու՝ այլ բոլոր մարդոց, ոչ թէ մէկ ազգի՝ այլ բոլոր ազգերու համիրաշխ գործակցութեամբն է որ աշխարհը գրախտավայր մը կը դառնայ: Այս է ահա Աստուծոյ հայրութեան գաղափարին գործնական նշանակութիւնը: Յիսուս աշխարհ եկաւ տալու համար մարդկութեան այս մեծ պատգամը: Ձեռք կրնար քրիստոնէութիւնը լիովին հասկնալ և ապրիլ՝ եթէ չընդդրկենք այս պատգամը և չգործադրենք զայն մեր աօրտալ կեանքին մէջ:

Օր մը տունէ մը պիտի ներկուէր. ներկը ըսաւ. «Եթէ ես չըլլամ՝ այս տունը չի ներկուիր»: Վրձինը ըսաւ. «Եթէ ես չըլլամ՝ անկարելի է որ տունը ներկուի: Սանդուխը ըսաւ. «Գուք երկուք ալ չարաչար կը սխալիք. եթէ ես չըլլամ՝ դուք բան մը չէք կրնար ընել: Երբ ներկաբարը լսեց այս վրձաբանութիւնը, սուրեմն ալլաւ, ինչ պէտք կայ ինծի հոս կենալու, ինծի որեւէ գործ չիօղուցիք» ըսաւ: Յետոյ տունը ներկուեցաւ: Բայց ներկը, վրձինը, սանդուխը, ինչպէս նաեւ ներկաբարը, ամէնքն ալ ունեցան իրենց բաժինը և գործը գլուխ հանուեցաւ ամէնուն գործակցութեամբը:

Մարդկային ընկերութիւնը չլիթայի մը կը նմանի: Ամէն անհատ օղակ մըն է այս չլիթային վրայ: Շղթային ոյժը օղակներու ոյժէն կախեալ է: Շղթային մէկ օղակը ամէնուն և ամէնը մէկուն համար է: Ուստի ամէն մէկ օղակ պէտք է որ իրմէ անկախ ու լաւագոյն գործակցութիւնը բերէ չլիթային ուժեղացման համար: Միեղունեւոր և մըջկենդան իրարու փոխադարձ աջակցութիւնը լաւագոյն օրինակներ են համագործակցութեան:

Ի՞նչ արժէք կը ներկայացնէ վկասուած մեր հայրը դաւանելը, եթէ ազգեր զիրար կը վարկաբեկեն: Ի՞նչ օգուտ ունի մեր Աստուծոյ զաւակ կոչուիլը, եթէ ամէն օր մենք զիրար կը նախատենք: Ի՞նչ հմայք ունի Գրիստոնէական Եկեղեցիին կողմէ

տիեզերական եղբայրակցութեան քարոզուելը, եթէ մենք՝ քրիստոնեաներս մեր գրացիի ֆլաոններէն կը ջանանք ապահովել մեր շահը: Միթէ ծաղրանք չէ՞ զԱստուած հայր կոչել, երբ մենք՝ քրիստոնեաներս իրարու հետ չ'ենք ապրիւր իրբե եղբայրներ և քոյրեր: Եթէ Աստուած մեր հայրն է, պէտք է որ Անոր անուան պատիւ բերող զաւակներ ըլլանք՝ որպէսզի արդարացնենք մեր գոյութեան իրաւունքը:

Քրիստոնէական սկզբունքներու հիման վրայ հաստատուած տիեզերական եղբայրակցութեան գաղափարը գործնականացնելու մէջ դժուարութիւնը ո՛չ թէ Աստուծոյ՝ այլ մեր կողմէն է: Աստուած, իբրեւ հայր, պատրաստ է ամէն ատեն խնամելու մեզ, ներելու մեր մեղքերը, փրկելու մեզ չափին տիրապետութենէն, ինչպէս նաև պա-

հելու մեզի հետ մտերմիկ յարաբերութիւն մը՝ որ մեզի համար խնայէս մեծ առանձնաշնորհում մըն է: Ան որ երկնից թռչունները կը հոգայ, որքա՞ն աւելի պատրաստ է մեզ հոգալու զւ պահպանելու ամէն փորձանքներէ, պայմանաւ որ մենք իրեն պարտաճանաչ ու հաւատարիմ զաւակներ ըլլանք:

Երբ ամէն անհատ ապրի որպէս Աստուծոյ զաւակ, այդ անհատներէն բաղկացած համայնքներն ալ կը հետեին անոր, և որով տիեզերական եղբայրակցութեան գաղափարը կ'իրականանայ աշխարհի վրայ՝ Աստուծոյ հայրութեան գաղափարին ներքեւ: Եւ ահա՛ այն ատեն է որ մենք իրաւունք կ'ունենանք ըսելու. « Հայր մեր որ յերկինս ես »:

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### Գ Ե Տ

Հերու այսֆան պղտոր չէիր, կամ ես պղտոր  
Սրտով ե որ բու ծփանքներդ կը դիտէի.  
Անոնք կարծես հեղեղներ են արիւնալի  
Դառնակսկիծ իմ յուեերուս մէջ հեռաւոր:

Ամեն տարի աւելի իյոր հետքդհետե  
Թախիծով քեզ պիտի աչխերս հետեւին  
Մինչեւ եզերքը՝ մեծաւոր արմաւենին՝  
Ուր դեռ երեկ սրտիս աւելնը կը զգայի:

Օր մ'ալ պիտի չկարենամ ափերուդ վրայ  
Նստիլ այսպէս. մըսամուր, անըջայած  
Երբալ հեռուն, ուր հորիզոնն ե կամարուած.

Եւ դուն ի զուր պիտի՝ ըսպասես որ դեռ բանայ  
Սիրքը քեզի հեք բանասեղծը մտերիմ՝  
Որուն երգերն ալիքներուդ մէջ կ'արիւնին ...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

# ՍԱՍՄԱՆՑ ՄԸՆԵՐ

(Ինչպե՞ս զգալ)

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## I

Մըհերը եկաւ Ջրգիրու բաղաք.  
Դեռ հեռուէն լըսեց աղմուկ - աղաղակ.  
Ու երբ մօտեցաւ, տեսաւ գետն յորդեր,  
Վիշապի մը պէս բաղաքը կ'ուտէր:  
Ամէն մարդ ծրգած տուն - տեղ, ըստացուածք,  
Քաղաքը ամբողջ իրար խառնուած.  
Կիներու ճիւղեր, ծերերու հառաջ,  
Ուխտարի մայիւն, կոկերու բառաջ...  
Կեցաւ, նայեցաւ ու խըղճաց Մըհեր,  
Ձին ասպանդակեց մէկէն դէպի լեռն,  
Բիւլուրի մը չափ ժայռ մ'ուսին առաւ,  
Ու բերաւ գետին մէջտեղը դըրաւ.  
Գետը երկու ճիւղ եղաւ մէջտեղէն,  
Եւ փրկուեցաւ քաղաքն հեղեղէն:  
Քաղքին իշխաններն եկան Մըհերին,  
Եկան թանկագին նուէրներ բերին.  
Խրնդրեցին մընար, իրլլար իրենց մեծն.  
Մըհերը անոնց խրնդրանքը մերժեց.  
Իսկ նուէրները բաժնեց խեղճերուն,  
Հըրածեղտ տըւաւ, քըշեց դէպ' Սասուն:

## II

Ձին քըշեց Մըհեր ու Սասուն հասաւ.  
Երկիրը աւեր - ամայի տեսաւ.  
Տեսաւ քաղաքներն, շէներն աւերակ,  
Տուններն ամայի, դուռները խորտակ:  
Շըրջեցաւ գիւղերն, բայց ամէն տեղ նոյն  
Պատկերը տեսաւ. մըտաւ տունէ տուն,  
Բայց մարդ չըզըտաւ. ամէն տեղ արիւն,  
Ամէն տեղ մոխիր, արիւն ու դիակ...  
Գայլերը միայն ազատ, համարձակ,  
Հաւաքուեր էին դիակներուն շուրջ...  
Կեցաւ Մըհերը, դիտեց լուռ ու մունջ.  
«Ձէ այս անարդար աշխարհը հիմէն,  
«Պիտի քանդեմ լես ու նորէն շինեմ»  
Խորհեցաւ Մըհեր, ու չքըշեց իր ձին  
Դէպի Մարութայ քարծր Աստուածածին:  
Ոչ քահանայ կար հոն, ոչ սարկաւազ,  
Տաճարը զըտաւ կիսով փրլատակ:  
Հոն ալ տեսաւ լոկ մոխիր եւ տրին...

Բայց միաբան մը գրտաւ մէկ անկիւնն,  
 Կիսամեռ ինկած. «Աստուծոյ սիրոյն,  
 Կաթիլ մը ջուր իմ այրող շրթներուն»  
 Կը շրշնջէր ան, լրսող ջրկար բայց...  
 Մըհեր, մէկ առ մէկ վէրքերը լրաց,  
 Զուր տըլաւ անոր. խուրճին վար առաւ,  
 Մէջը ինչ որ կար առջեւը դրաւ:  
 Քանի մը պատառ երբոր կերաւ ան,  
 Դոյն եկաւ դէմքին, ոյժ եկաւ վըրան:  
 «Ով ես դուն, ըսէ, բարի ուղեւոր»  
 Վախէն ղողալով հարցուց վիրաւորն:  
 — Մըհերն եմ, բայց նախ քիչ մ'հանգըստացիր,  
 Ըսաւ Մըհերը. «Կեր ու կըշտացիր,  
 Յետոյ կը պատմես թի՛ւնչ եկաւ անցաւ  
 Մեր երկրի գըլխէն: Ու երբ կըշտացաւ,  
 Մօրուքը սըրբեց, «Վառք քեզ տէր» ըսաւ  
 Ի՛ր պատմութիւնը այսպէս ըսկըսաւ:  
 «Զեմ յիշեր ե՛րբ էր եկաւ թըշնամին  
 «Ու Վանքը մըտաւ աղօթքի ժամին.  
 «Մըտաւ, կոտորեց—այրեց անխընայ.  
 «Պատարագիչը սեղանին վըրայ  
 «Ինկաւ, աղօթքը դեռ իր շըրթներուն.  
 «Ա՛լ չեմ գիտեր թէ ի՛նչպէս այս անկիւնն  
 «Եկեր—ինկեր եմ այսպէս կիսամեռ.  
 «Զեմ գիտեր Սասուն կա՞յ մէկը ողջ դեռ,  
 «Եթէ կան անշուշտ լեռներն են փախած  
 «Քարայրներուն մէջ ապաստան գըտած»:՝  
 Մըհեր ունկընդդեց, գոյն տըլաւ—առաւ,  
 «Հասկըցայ» ըսաւ ու ոտքի թըռաւ:

### III

Մըհերը ելաւ լեռան կատարին,  
 Նայեցաւ, հեղ մը, Սասմայ աշխարհին.  
 Լեռան կատարներն երկինք մըխըրճուած,  
 Իսկ անդունդները դըժոխքէն ալ ցած:  
 Նայեցաւ երկար ու սիրտը ելաւ.  
 «Զէ, պիտի քանդեմ աշխարհն անիրաւ,  
 «Պիտի քանդեմ այս աշխարհը հիմէն,  
 «Ու տեղը արդար աշխարհ մը շինեմ...»  
 Եւ ծայնը ծըգեց ու կանչեց երկար.  
 «Սասունցիք, ո՛ւր էք, ելէք յոյս աշխարհ:  
 «Ով ողջ է ելլէ թող ծակ—ծուկերէն,  
 «Շինէ հայրենի իր տունը նորէն»:՝  
 Մըհերի ծայնը երբոր ճանչըցան,  
 Մէկ—մէկ Սասունցիք լեռներէն իջան.  
 Ոմանք դուրս ելան քարերու տակէն,  
 Խոր անդունդներու ոմանք յատակէն.  
 Խըլուրդներու պէտ ծակերէն ելան,

Ամէնքն որ դեռ շունչ ունէին բերան :  
 Եկան Մըհերին շուրջն հաւաքուեցան  
 Եւ ըսպասեցին գըլխիկոր, անծայն :  
 Նայեցաւ անոնց Մըհերը երկար ,  
 Ու սիրտը ելաւ եւ ըսկըսաւ լալ :  
 Կիներ, մանուկներ վախէն կարծես խննդ՝  
 Վիրաւոր մարդեր, անթեւ ու անծեռք .  
 Մէկուն աչքը կոյր կամ ջարդուած ունքն ,  
 Մէկուն ոտքն կոտորած կամ առանց սրունգ :  
 Նայեցաւ անոնց Մըհերը երկար ,  
 « Զէ, պէտք է փոխեմ այս աշխարհը չար .  
 « Լաւ մըտիկ ըրէք, Սասունցիք » ըսաւ  
 « Զեր քաշածներուն չափը ա՛յ անցաւ ,  
 « Պէտք է որ քանդեմ աշխարհն այս հիմէն ,  
 « Եւ տեղը արդար աշխարհ մը շինեմ .  
 « Ուր գայլն ու գառնուկն ապրին իրր եղբայր ,  
 « Ուր մարդիկ այլեւս չըմորթեն իրար ,  
 « Ուր գետը այլեւս քաղաք չըբանդէ ,  
 « Մարդակեր պառաւ մ՛ուր այլեւս չուտէ  
 « Անթիւ - անհամար կիներ , մանուկներ .  
 « Կոպ դեւ մ՛ուր չաւրէ գիւղեր , քաղաքներ ...  
 « Որ ասկէ վերջ ով որ այս աշխարհ գայ ,  
 « Բաժինն իր առնէ ու յետոյ երթայ :  
 « Տէ՛հ գացէք - առէք ձեր բահն ու բըրիչ ,  
 « Եւ եկէք շուտով ու օգնեցէք ինձ՝ ,  
 « Որ այս անարդար աշխարհը քանդենք  
 « Հիմէն , տեղն արդար աշխարհ մը շինենք » :  
 Վերջացուց խօսքը ու լայն շունչ քաշեց  
 Մըհերն ու կեցած տեղը ըսպասեց :  
 Բայց բազմութենէն ոչ ոք շարժեցաւ ,  
 Մէջերնին միայն փրսփրսուք մ՛անցաւ .  
 Մէկը գըլխիկոր մօտեցաւ իրեն ,  
 « Զներ ուզեր որ դուն աշխարհն անօրէն  
 « Քանդես , թոթովեց , եթէ քանդես գայն ,  
 « Ամէնուս պիտի ըլլայ գերեզման :  
 « Զարին հետ կեանքն ալ առնէ պիտի վերջ ,  
 « Մըշտընջենապէս կեանքն է ելեւէջ .  
 « Զարը հեղեղի նըման պիտի գայ ,  
 « Սըրբէ ու տանի , բայց ով որ տոկայ  
 « Պիտի ըսկըսի ըսկիզբէն նորէն ,  
 « Արտը մըշակէ ու ցանէ ցորեն ,  
 « Մոխիրը մաքրէ եւ շինէ նոր տուն ,  
 « Մայրն նոր մանկան քով ըսպասէ անբուն ,  
 « Միջեւ նոր հեղեղ մը գայ ու տանի ...  
 « Դու չար ես Մըհեր , ծնունդ՝ սատանի ,  
 « Գոհ ենք մենք , գոհ ենք մենք մեր վիճակէն ,  
 « Թող ըլլանք գերի , բայց աշխարհն հիմքէն  
 « Պիտի չըքանդես ... Զներ ուզեր մինք քեզ ,  
 « Գընայ Սասունէն , դուն անիծուած ես » :



Ժողովուրդն ամբողջ ծայն տըւաւ իրեն,  
«Անիծուած Մըհեր, զընայ մեր երկրէն»:  
Ու հիմա միայն նրկատեց Մըհեր,  
Որ միաբանն էր զիմացն իր կեցեր:

## IV

Ձին հեծաւ Մըհեր, տըխուր, պարտըւած.  
Կապարի պէս հոգն ուսին էր նըստած.  
Ու զընաց հօրը շիրիմին՝ կեցաւ,  
Գըրկեց շիրիմն ու մանկայ մ'պէս լացաւ:  
«Խէրիկ ելիր վեր, խէրիկ ելիր վեր,  
«Ձի Սասմայ տունէն պէպահր են ըրեր.  
«Աշխարհը զընդան մ'է ալ ինծ' համար,  
«Վեր ելիր խէրիկ, Մըհերդ քովըդ առ»:  
Աստուծոյ ամրով ծէն ելաւ շիրմէն,  
«Տըղաս, գացեր է գոյնը իմ դէմքէն,  
«Թափեր են մազերն զըլխիս, մօրուքիս,  
«Ինկեր ոսկորները իմ կըմախքիս...  
«Գընա Հալէպ դուն, իմ Մըհեր խեղճուկ,  
«Հացըդ թըխուկ ի, շորերըդ կարուկ»:  
— Ձէ, խէրիկ, Հալէպ չեմ երթար ես ալ».  
Ու նորէն կանչեց երկար ու երկար,  
Բայց հօրը շիրմէն պատասխան չկար:

Ու զընաց մօրը շիրիմին՝ կեցաւ,  
Հողը համբուրեց, աղօթեց, լացաւ:  
«Մէրիկ ելիր վեր, մէրիկ ելիր վեր,  
«Ձի Սասմայ տունէն պէպահր են ըրեր.  
«Աշխարհը զընդան մ'է ալ ինծ' համար,  
«Ելիր վեր մէրիկ, Մըհերդ քովըդ առ»:  
Աստուծոյ ամրով ծէն եկաւ շիրմէն.  
«Տըղաս, գացեր է գոյնը իմ դէմքէն,  
«Թափեր են մետաքս մազերը զըլխիս,  
«Ինկեր ոսկորները իմ կըմախքիս.  
«Գընա Վանայ բերդ, իմ Մըհեր խեղճուկ,  
«Հացըդ թըխուկ ի, շորերըդ կարուկ»:

Ձին հեծաւ Մըհեր, տըխուր, պարտըւած,  
Կապարի պէս հոգն ուսին ծանրացած,  
Ու հողն իսկ ալ չէր վերջըներ զիրենք:  
Գընաց ու գրնաց, հասաւ Տոսպան բերդ,  
Բերդը բացուեցաւ, ներս առաւ Մըհերն...  
Ու մինչեւ հիմա, կ'ըսեն, հոն է դեռ:

Կ'ըսեն պիտի գայ բայց օր մը նորէն,  
Պիտի գայ քանդէ աշխարհն անօրէն,  
Եւ կ'ըսեն տեղը պիտի անպաւնդառ,  
Շինէ ՍՇԽԱՐՀ ՄԸ ՆՈՐ, ԲԱՐԻ, ԱՐԴԱՐ:

(Վերջը յաջորդիւ)

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՐԵԿԱՑԻՆ

ՆԱ

### ՇԵՏԱԳԱՅ ՇԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

I

ԺԲ. զարը տուրտարակ մեր միջնագարի գրականության և կուլտուրայի նշանակալից զարգացման շրջաններից մէկն է. այս այն շրջանն է, երբ հայ վերածնութիւնը, զուգադիպելով վրացական և ագրեթիզմական գրականութիւնների աննախընթաց զարգացմանը (Ռուսթափելի և Նիզամի), նորից վերելք է ապրում: Հանդէս են գալիս մի շարք գրական խոշոր դէմքեր, որոնք իրենց ստեղծագործութիւններով մեծապէս առաջ են մղում Եկեղեցուց անկատ գրականութեան պատմութիւնը: Բաւական է բերել Մխիթար Գօշի և Ներսէս Շնորհալու օրինակները: Սրանցից մէկը՝ Մխիթար Գօշը, իր առակագրքով հիմք է դնում աշխարհիկ զեղարուեստական արձակին և հանդիսանում անտիկ շրջանից յետոյ՝ միջնագարի առաջին առակագիրը. իսկ երկրորդը՝ Ներսէս Շնորհալին, իր «Ողբ եղեսիոյ» պոէմով խոշոր չափով զարգացնում է աշխարհիկ, ժամանակակից իրական ափսոսանքի, ժողովուրդի պակասը լիբ-էպիկական պոէմի ժանրը:

Այսպիսի մի ժամանակաշրջանում բնականաբար չէր կարող մեծ հետաքրքրութիւն չյուշալանալ դէպի վերածնութեան նախահօր՝ Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւնները և առաջացաւ Այդ հետաքրքրութեան կարեւոր արտայայտութիւններից են այն, որ գրւում են Նարեկի մեկնութիւններ (Սարգիս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի), Նարեկացու կենսագրականներ (Լամբրոնացի, Սկեռացի, Էայլն) և շատ գրիչներ բազմացնում են նրա ստեղծագործութիւնների ձեռագրերը, իսկ մանրանկարիչները նկարում են նրա երեակայական պորտրետները:

Բուն գեղարուեստական գրականութեան շրջանակներում հրապարակ են գալիս «Ող-

բերգութեան» և տաղերի բազմաթիւ նմանողութիւններ: Միաժամանակ այդ պոէմի գլուխների խորագիրը (Ճի խորոց սրտից խօսք ընդ (Աստուծոյ») դառնում է ընդհանուր և սեփականութիւն, և շատ կրօնական բանաստեղծներ այդ դարձնում են մի տեսակ բնաբան իրենց ստեղծագործութիւնների համար: Ժամանակի մտաւորականների համար այնքան սիրելի է դառնում և օրինակելի է համարւում Նարեկի ոճը, որ անգամ իրենց արձակ ու ոչ գեղարուեստական գործերը, մանաւանդ ձառները և «Եթըթերթը», գրում են այդ ոճով, յատկապէս ուշադրութիւն դարձնելով խօսքի սիմբոլիզմին: Գրիգոր Վկայասէրի «Եթըթերթը», որոնցից մէկը սկսւում է այսպէս. «Եթեւեւում բանից սակաւուց խնթկեալ ի նետից գաղտնիաց խորհրդոց, և երեւալ արտաքոյ բանից տոչորումս: Դարձեալ պաշտատիւ, և առաջի անկեալ աղաչեմ զամենառատոց և զյոքնապարգեզ . . .»: Եւ վերջանում է այսպէս. «Միացոյ զիս դարձեալ վերստին ի գլուխդ կենդանի»: Մի ուրիշը սկսւում է այսպէս. «Տառապեալ անձին, և խոցալից սրտի, անողջանալի հոգոյ, և գերեալ մտաց խօսք՝ ըստ կալիաց ցաւոց կարեւր բեկման առ ի միտս՝ աղերս մաղթանաց շարժեցան շրթանց՝ հեկեկանօք բայից դիտուին արկեալ առաջի որ տէրն է հոգւոց: Զինչ բարբառեցայց, և կամ զինչ ասացից առաջի քո որ տէրդ ես և դիտող սրտից . . .»:

«Ողբերգութեան Մատենախո» հետ նմանութիւնները միանգամայն ակնյայտ են:

Հէնց այս շրջանից էլ սկսւում է նաև Նարեկացու հեղինակութիւնն օգտագործումը Եկեղեցականութեան կողմից: Նարեկացու նշանաւոր պոէմը, որը վերջին հաշուով մարդկանց համար աւելորդ էր կացուցանում Եկեղեցականութիւնը, նոյն Եկեղեցականութեան յետադիմական ներկայացուցիչները աշխատում են մեկնաբանել իրենց օգուտի և հակադրել գրականութեան մէջ արտայայտուող նոր տրամադրութիւններին: «Մատենան Ողբերգութեան» պոէմում մուծւում են մի շարք վերնագրեր և ծանօթութիւններ, զուցէ և առանձին հատուածներ, այն իբրև կրօնա-բարոյական և դասնաբանական մի գիրք ներկայացնե-

լու նպատակով՝ Նոյնիսկ Նալխանը պնդում է, թէ՛ «Ողբերգութեան Մատենի» ընդարձակ վերնագիրը (որը մարդկանց սնանակատութեանն է ծառայիցնում գրուածքը) Նարեկացու գրածը չէ, այլ աւելացուած է Գրիգոր Սկեռացու ձեռքով. իր այս միտքը նա հիմնաւորում է այն փաստով, որ Սկեռացուց քիչ առաջ ապրած Սարգիս Ծնորհալուն՝ Նարեկի առաջին մեկնութիւնների հեղինակին, յայտնի չի եղել այդ վերնագիրը:

Նարեկացու ստեղծագործական տարրերի մասին ժի. գարի գրականութեան համար ունեցած բարեբար նշանակութիւնը ցոյց տալու համար բաւական է իւր օրինակ վերցնել այդ շրջանի կենտրոնական, խոշորագոյն գրական դէմքի՝ Ներսէս Ծնորհալու գրուածքները:

Ներսէս Ծնորհալին թողել է թէ՛ հոգեւոր և թէ՛ աշխարհիկ պոէմներ ու բանաստեղծութիւններ: Ամէնից առաջ նա շնորհիւ Նարեկացու հարթած ճանապարհի՝ դուրս է գալիս հին եկեղեցական բանաստեղծութեան ժանրային շրջանակներից և գրում է նոր տեսակի գործեր, թէկուզ գրանց բովանդակութիւնը շատ դէպքում գեւա մնում է կրօնական: Այսպէս է միջնադարում շատ տարածուած նրա պոէմներից մէկը, որի վերնագիրն է «Ողբերգութիւն վրայասանական ի տալից սրբոց» («Յիսուս որդի»): Ծնորհալին Նարեկացու նման միտակի չէ, նա Հայ եկեղեցու պաշտօնական գաղափարախօսներից է. բայց պոէմը կոչում է «Ողբերգութիւն»: Ի հարկէ, ստեղծագործական կարողութեան տեսակետից Ծնորհալին չի կարող Նարեկացու հետ համեմատուել և նրա «Ողբերգութիւնը» Նարեկի թոյլ և հեռաւոր արձագանքը կարող է համարուել միայն. բայց տուեալ դէպքում խնդիրը այս չէ, այլ այն, որ Ծնորհալին, Նարեկացու նման, իր այդ ընդարձակ պոէմը գրել է ոչ թէ եկեղեցական արարողութեան համար, այլ եկեղեցուց դուրս՝ ընթերցանութեան համար: Սա արդէն գրական-պատմական առումով նշանակալից երևոյթ է:

Հետաքրքրականն այն է, որ նոյնիսկ բուն եկեղեցական բանաստեղծութեան մէջ Նարեկացուց յետոյ մի թարմ շունչ է մտնում: Այդ բանը նկատուում է հէ-

եալ Ծնորհալու ստեղծագործութիւններից. նրա շարականները, երգերը և մեղեդիները պոէտիկական շատ նորոյթներ ունեն, պատկերները աւելի հիւսկեղ են ու բազմազան: Ծնորհալին, հետեւելով Նարեկացուն, նոյնիսկ այդ կարգի բանաստեղծութիւններում նկարագրութիւնների ժամանակ և իր տրամադրութիւններն արտայայտելիս յաճախ դիմում է բնութեան պատկերների օգնութեան: Օրինակ՝

Արեգակն արդար ըզնուր սիրոյ ծագեալ,  
Ջանհաւատութեան սառնքն ճեղաց հալեալ,  
Բանաւոր ծառոց երեւեցան ծաղիկք  
Երկնագագաղ գունով, անուշահոտ բուրմամբ,  
Գարուն հոգեւոր դալարացոյց զնոգիս.  
Գոսպեալ քրկնոց կանաչացան սաղարթք:

Կամ՝ մի այլ տեղ, Քրիստոսի ծննդեանը նուիրուած երգում.


Սիրամարգ ոսկիսիպ նրկար յոգի,  
Տաքեալ ողջախոն մաքուր աղաւնի:  
Էրեւեալ ծաղիկ զարնայնոյ  
Վարդ, մանիւշակ, բրնձ, շուշան վայելուչ,  
Սարդիոն յակիւնք դանձանակ,  
Յաւալիս, կարկիհան, զմուխս, շափիլայ...:

Իսկ շատ դէպքում էլ Ծնորհալին Նարեկացու նման դիմում է ժողովրդական բանահիւստութեան ձեւերին. այսպէս՝ նրա մօտ պատահում են այնպիսի երգեր, որոնց տները ունեն գուսանական առդերի ոճով կրկնակներ: Օրինակ՝

Սիրասնունդ սիրամարգ սրլարալի,  
Նրբափալլ ոսկերեւ տաքալի,  
Խռապոսակ իւրագլուխ ցանկալի,  
Հրեւեակ հրաւալեղ Հոփսիսիս:

Իսկունքն աղաւնի օդապար,  
Նոր նոյնան սալանն է քոյզ դադար,  
Յմաստան արագիլ դու արդար,  
Հրեւեակ հրաւալեղ Հոփսիսիս:

Ոչ միայն ժողովրդական առդերի ոճը, այլև լեզուն օգտագործում է Ծնորհալին. այդ նկատելի է յատկապէս նրա չափածոյ հաներուկների գրքում: Լեզուի հարցում նոյնպէս հետեւելով Նարեկացուն, Ծնորհալու պատմականորէն նրանից առաջ է անց-



Նրա ստեղծագործութիւնների լեզուն արդէն պարզ զգացնել է տալիս միջին հայերէնի սպասուող մօտաւուտ յաղթանակը գեղարուեստական գրականութեան մէջ:

Բայց վերջ ի վերջոյ Նարեկացուց ներշնչուելով՝ նրա գործը շարունակելու և զարգացնելու տեսակետից աւելի նշանաւոր են Շնորհաւու աշխարհիկ ստեղծագործութիւնները, յատկապէս «Ողբ Նիգեսիոյ» պոէմը: Նարեկում արտայայտութիւն գտած հայրենասիրական քաղաքական վիշտը իբրև աշխարհիկ մոտիվ՝ միջնադարում իր բաւական անմիջական և բաւական ցայտուն արտայայտութիւնն է գտնում Շնորհաւու այդ աշխարհիկ թիմա ունեցող պոէմում: Շնորհաւին թէպէտ իր «Բուն բարառնական», Տաղիւ չափեալ հոմերական, խօսեալ բանիւ ողբերգական պոէմում պատմում է «վասն Նիգեսիոյ մեծի առման», բայց հիմնականում արտայայտում է կիրևկիւայի հայերի հայրենասիրական քաղաքական տրամադրութիւնները, այն, որ նրանք չէին հաշտուում Բագրատունիների թագաւորութեան վերացման փաստի հետ: Այս իսկ պատճառով, չնայած այն բանին, որ Անին գետ չէր կործանուել, և քաղաքի ներքին կեանքը դեռ ուժեղ եռուցիւղ էր ապրում, սակայն Շնորհաւու պոէմում այն պատկերուած է որպէս Նիգեսիայի ողբակից մի «զարդի ծածկոյթը» պատուաւ քաղաք:

Շնորհաւին (ինչպէս և նրանից յետոյ բազմաթիւ այլ բանաստեղծներ) երբ իր պոէմի վերնագիրը գրել է «Ողբ», այդ բնու չի նշանակում, թէ նա բոլոր հեռանկարները կորցրած, աշոյա ողբասաց է: Նրան ողբասաց համարելը սխալ կը լինէր, ինչպէս կապիտ սխալ է եղել որոշ քննադատների կողմից Արափեանի «Ողբի» («Ողբ Հայրենասէրին») մասին այդպէս մտածելը: Շնորհաւու ողբի էական կողմը պատահած գծախտութեան դէմ պայքարի կոչն է ու խրախուսը և ապագայ լաւ օրերի հաւատքի ներշնչումը: Պոէմի վերջում, Նիգեսիան գլխաւորաբար հետեւեալ խօսքերն է ասում.

Անա սակաւ ինչ ժամանակ,  
Փոխե զպիտը զուրն ի յսակ,  
Սև քա ըմպել՝ դառնաճաւակ,  
Այնմ որ արքոյց իր զմզմակ,

Զվերջին մըրուրն կապուտակ,  
Աբուլցանէ նրմին բաժակ.  
Իսկ ինձ պայծառ եւ քաղցրունակ,  
Զանմահաւարն՝ ըմպել վսակ . . .:

Այս լաւատեսութիւնը յատուկ է միջնադարի մեր գրականութեան առաջաւոր ներկայացուցիչներին:

Շնորհաւին վերնագրում իր պոէմի համար գործածում է «Տաղիւ չափեալ հոմերական» արտայայտութիւնը. սա ուշագրութեան արժանի հանգամանք է. ուրիշ փաստեր էլ կան, որոնք ցոյց են տալիս, թէ Ժ. դարից սկսած, Հայաստանում Արտաշից առաջ ստեղծուել էր Հոմերոսի նկատմամբ մեծ հետաքրքրութիւն: Ժ. դարի սկզբների նշանաւոր բանաստեղծ և գրականական Յովհաննէս Սարկաւազ իմաստասէրը իր պոէմներից մէկում («Բան . . . առ ձագն որ կոչի Սարկի») նոյնպէս յիշատակում է Հոմերոսի անունը. «Հոմերական տաղիցն չափ քե ծանուցեալ լինի բազմաց . . .»: Ժ. դարից յետոյ՝ այսպիսի յիշատակութիւններ աւելի են շատանում. այսպէս՝ Ստեփանոս Օրբէլեանը իր պոէմի («Բան . . . ի զիմաց Վաղարշապատու . . .») մասին ասում է «Շարադրեալ չափարան բերմամբ հոմերական արհեստիւ . . .», Գրիգորիս Ողբամարցին իր սիրոյ երգերից մէկի վերջում գրում է. «Զքեզ գովեմ հոմերոսօրէն», Սիմէոն Աղաբաղցին իր պոէմներից մէկի («Ողբ ի վերայ Մեծոփայ Ս. Ուխտի») մասին ասում է. «Ոգեալ ոտիւք հոմերապէս . . .»:

Չնայած այս բոլոր յայտարարութիւններին, դրանց հեղինակներից և ոչ մէկը իսկապէս Հոմերոսի նման էպիկական պոէմ չի գրել: Զարմանալի կերպով ինչքան էլ նրանք սիրելի ու բարձր են գնահատել Հոմերոսին և ըստ երևոյթին ձգտում են ունեցել նաև իրենց ստեղծագործութիւնի էպիկական կողմն ուժեղացնել (յատկապէս պոէմներ գրողների մօտին է խօսքը), բայց այդ չի ստացուել: Վերոյիշեալ բոլոր պոէմներն էլ, դրանց թուում և «Ողբ Նիգեսիոյն», գերազանցապէս մնում են լիրիկական պոէմներ, որոնց վրայ թնամարած իշխում է ոչ թէ Հոմերոսի, այլ Նարեկացու շունչը և հանճարը:

ԺԳ. դարի առաջին կեսին Հայաստանը ընկնում է մոնղոլական լծի տակ. Ժողովուրդը ենթարկվում է չտեսնուած աղէտի. մոնղոլները սխտեմատիկաբար կոտորում ու տնտեսական դաժան կեղեքման են ենթարկում Ժողովրդին: Առանձնապէս նրանց գործած աւերածութիւններին ենթարկւում են Զաքարեանները: Երբեք չեն տակ գտնուած շրջանները: Կիրիկիան միայն գերծ է մնում նրանց ներխուժումից՝ շնորհիւ տեղի հայկական պետութեան վարած որոշ քաղաքականութեան: Ժ. դարում սկիզբ առած և ԺԲ. դարում նոր արտայայտութիւններ ստացած վերածնութեան գծերը այս կամ այն չափով շարունակուած են յարտենել Կիրիկիայում և յայտնի մի քանի վայրերում: Այդ շրջանում գեղարուեստական գրականութեան մէջ առաջաւոր գրողները արդէն մեռած գրաբարի գործածութիւնից հրաժարուած են, մի բան, որ շուտով տարածուած է ամբողջ Հայաստանում և դառնում է համարեա թէ ընդհանուր երևոյթ: ԺԳ. դարից սկսած, այլևս մեր բոլոր նշանաւոր բանաստեղծները գրում են միջին հայերէն լեզուով: ԺԳ.-ԺԶ. դարերում նարեկացու ստեղծագործութեան մի քանի գծեր շարունակուած ու զարգացնում են Ֆրիկը և Կոստանդին Երզնկացին: Ֆրիկը անձամբ ապրած լինելով մոնղոլական լծի ողջ սարսափները, իր ստեղծագործութեան առաջին շրջանում ծառանում է այդ սարսափների դէմ իրրե միստիկ նա իրրե միստիկ բանաստեղծ միանգամայն ինքնատիպ է թէ՛ ժանրով և թէ՛ պոէտիկական ողջ կուլուորայով: Տարբերելով նարեկացուց՝ նա գրում է ոչ թէ ընդարձակ լիրիկական պոէմ, այլ սովորական բանաստեղծութիւններ: Նա կարող է մեր գրականութեան մէջ ժամանակակից ըմբռնումով իսկական սուրբիկով լիրիկայի սկզբնաւորողը համարուել: Ֆրիկը իր առաջին շրջանի բանաստեղծութիւններում աշխատում է ծանր գրութիւնից փրկութեան յոյսը արտայայտել: Աստծուն միանալու հնարաւորութեան հաւատով. նրա երգած այս մոտիվը հիմնական գծերով նոյնն է, ինչ որ նարեկացուները:

Ֆրիկը մի բանաստեղծութեան մէջ դիմելով Աստծուն, ասում է.

Սրբ բացե՛ր զիմ զմիսս, որ ես կու գգամ,  
Վառեցաւ սեղոյ ի յիս, գերդ հուր կու եռամ:

Քանի որ այսպէս է, ապա բանաստեղծի հոգին ձգտում է հասնել Աստծուն, որպէս կենդանութեան աղբիւրի: Բայց այստեղ ծագում է ողբերգութիւնը, որովհետեւ նրան թւում է, թէ լոյսին ձգտելով՝ աւելի խաւարին է մօտենում:

Ջանացի թէ լոյսն ելեմ,  
ի խաւարն խիս մօտեցայ...

Իսկ ինչո՞ւ, դա պարզ է, չէ՞ որ ինքը ապրել է աշխարհիկ կեանքով, ուրեմն կորցրել է հոգու մաքրութիւնը և աղնուութիւնը. մի սեղ նա գրում է.

Յառաջ որ յաշխարհ եկի, հանց յիսակ էի,  
զինչ գնայի, Պանիկ մի վերայ կացի ժանգ առի, զինչ  
ըզպղնճի:

Իրեն համարելով պղնձի նման ժանգոտած, նա բռնում է անեղ դատաստանի ահով և ինչպէս սեպացած ամպ անձրևում է: Սակայն այսպիսի մի ըմբոստ խորհրդածութեամբ նա ամբապնդում է փրկուելու յոյսը, որից յետոյ նա հոգեպէս խաղաղուած հաստատ յայտարարում է.

Փափագել եմ ի ջուրն յուռով կու գնամ,  
Թէ հասնիմ յայն աղբիւրն, որ կենդանանամ:

Իր երկրորդ շրջանի ստեղծագործութիւններով՝ Ֆրիկը շարունակելով ու զարգացնելով նարեկացու քաղաքական և սոցիալական մօտիվները, արդէն նոր խօսք է ասում. նա հիմք է դնում բացայայտօրէն Ֆէոդալական կարգերի դէմ ուղղուած քաղաքական-սոցիալական լիրիկային: Այդ մօտիվներին անցնելիս Ֆրիկը ռէալ իրականութեան ըմբռնման մէջ այնքան է խորանում, որ միստիցիզմից հրաժարուելով՝ ըստ էութեան հասնում է Աստծու գաղափարի հերքման: Սպալտով, նա մեծ նորութիւն է բերում ոչ միայն ԺԳ. դարի մեր գրականութեան, այլև համաշխարհային գրականութեան մէջ:

Կոստանդին Երզնկացին նոյնպէս խոշոր նորարար է, ներշնչուած լինելով նարեկացուց՝ յատկապէս նրա սաղերից, նա նախ և առաջ մեր գրականութեան մէջ զարգացման աւելի բարձր աստիճանի հասցրեց բնա-

պաշտական բանաստեղծութիւնը: Երգեկան-  
ցու համար արարիչը՝ զերջին հաշուով բը-  
նութիւնն է, երկիրը. ամէն զեղեցիկի և  
բարիի ծննդեան պատճառը երկիրն է:

Երկիրս է մայր տննրմանի,  
Ձինչ գեղեցիկ իրք՝ ծրմանի,  
Շոտ բարութիւնք յիցք սրնանի.  
Հանց որ փոխն գեղեցկացել:

Իսկ երկիրը իր ստեղծագործ զեղեց-  
կութիւնը երեւան է հանում գարնանը, ուստի  
գարնան զովերգութիւնը պէտք է բնա-  
պաշտ բանաստեղծի հիմնական մոտիվներից  
մէկը դառնար, և, իրօք, Երզնկացու մօտ  
հանդիպում են գարնան մի քանի սքան-  
չելի օրհներգութիւններ:

Ձրմեռն բանդ եր եւ խաւար.  
Գարուն եհաս ու նոր բահար,  
Ի եռա ի մէջ գիշերն աւար,  
Ձի արեգակն է մեզ ծագել: ...  
Երբ որ ճնչեց ճողմըն հարաւ.  
Ձինչ օրհներգիւն՝ երկրէ տարաւ.  
Հանց որ չկա սեղ մի ծարաւ,  
Ամենն են բարութեամբ լցել:

Բայց չէ՞ որ երկրին ձմրան բանտից  
զուրս բերողը արեւն է, որը այսպիսով  
նախապատճառն է երկրի, բնութեան, մար-  
դու համար օգտակարութեան և կենսա-  
բեր գեղեցիկութեան. բնականաբար այստեղ  
բնապաշտ բանաստեղծը պէտք է իր ամբողջ  
հոգու ուժը հանդէս բերեր մեծ լուսատուին  
վեհ և մեղմամբարձ ռոնով օրհներգելու հա-  
մար:

Անա գիշերս եանց ճրեան եղել առաւօտուն.  
Աստղն պայծառ ծագեց, և ետևաւոր երեկ  
լուսոյն.  
Խաւարն հերեցաւ ու ցնծացաւ աշխարհիս  
ամեն,  
Երեկ ետուն միմեանց՝ որ արժանի եղին  
լուսոյն:  
Երկիր կենդանացաւ ու լեռն ու դաւոց կա-  
նաչ բուսան,  
Մաղիկ բերին ծառերն յարեգական ի մեծ  
լուսոյն.  
Մաղկունքն զարգարին ազգի ազգի գոյնը-  
գոյնով,  
Փռնի վարզն կարմիր յարեգական ի մեծ  
լուսոյն:

Ամբողջ բանաստեղծութեան մէջ այս-  
պէս՝ ամէն տան երկրորդ տողի վերջում  
կրկնուում է զյարեգակն ի մեծ լուստնն  
արտայայտութիւնը, ինչպէս երաժշտական  
գործի լիյամուտով, ոչ այնքան ուրիշական  
նպատակով. որքան իրէական բովանդակու-  
թեան մէջ էականը ընդգծելու մտադրու-  
թեամբ:

Երզնկացին զերջին խոշոր բնապաշտն է  
մեր միջնադարեան գրականութեան մէջ.  
Նա ինքը իր մի շարք բանաստեղծութիւն-  
ներով հիմք դրեց սիրային քնարերգու-  
թեանը, որը նրանից յետոյ իշխող տեսակը  
գարձաւ. եւ իսկապէս, սկսած ԺԴ. դարի  
վերջերից մինչև ԺԹ. դարը ներառեալ,  
մեր պոէզիայի խոշորագոյն դէմքերը ար-  
դէն սիրոյ երգիչներն են, որոնց թւում  
Յովհաննէս Թլկուբանցին, Գրիգորիս Աղ-  
թամարցին, Նահապետ Քուչակը, Նաղաշ  
Յովնաթանը և Սայաթ-Նովան:

Սիրոյ երգիչները արտայայտելով իրենց  
ստեղծագործութիւններում հումանիզմի ու  
բուհական տենդենցներ՝ շատ անգամ քացար-  
ձակապէս հակադրում են եկեղեցական  
աշխարհայեացքին, սիրոյ զգացումները  
մարդու մէջ աւելի ուժեղ և զօրաւոր հա-  
մարեւով՝ քան կրօնականը: Նրանք իրենց  
կենսախիղճ տաղերը գրելիս հետեւում են  
պոէտիկական այն ուղիներին, որոնք բա-  
ցել էր Նարեկացին իր տաղերով: Սիրոյ  
երգիչները աշխատում են այն միտքը վար-  
դացնել, թէ մարդու համար իսկական եր-  
ջանկութեան հասնելու նւարաւորութիւնը  
տրուած է այս աշխարհում և ոչ թէ հան-  
դերձալ կեանքում, ուստի նրանք իրենց  
տաղերում հետեւողականօրէն արտայայտում  
են մարմնական-աշխարհիկ վայելքների  
պաշտամունքը. այսպիսի պարագաներում  
մարդու, յատկապէս կնոջ ֆիզիքական գե-  
ղեցկութեան նկարագրելը պէտք է մեծ տեղ  
բռնէր նրանց բանաստեղծութիւններում և  
այդպէս էլ է: Նարեկացու «Մենդեան տա-  
ղերի» համեմատութիւնները և էպիտեո-  
ները, ինչպէս և Ժողովրդական բանահիւ-  
սութիւնը, դառնում են այն ամբողջ հիմքը,  
որի վրայ բարձրանում է ԺԴ.-ԺԹ. դա-  
րերի մեր սիրոյ երգիչների գործերի պոէ-  
տիկական գեղեցիկ կառուցուածքը:

Թլկուբանցու եօթ լաւագոյն սիրոյ եր-

գերից հնգի մէջ գործածուած է նարեկացիական «ծով» էպիտետը աչքերի գեղեցկութեան համար. «Ծով ծով աչքեր ու լուսքնար . . .», «Աչքերն է ծով. ունք է թուխ ամպ . . .», «Ախ սիրէ զիս, ծով աչքեր . . .», «Աչքեր ունք զինչ ծովերուք . . .», «Աչքեր է ծովեր խուճար ու միտտան . . .»: Այնուհետեւ՝ նարեկացու «Ծոցն լուսափայլ կարմիր վարդով լցնալ» պատկերին համապատասխան՝ Քլկուրանցու մօտ կայ ձոցդ է բաղչա վարդով ի լիս, կամ՝ «Բո ձոցդ է ձաղկոց . . .» պատկերները: Նարեկացու ռոտիցն ի գնալ շողն ի կաթիլ առնոյր արտայայտութեան համապատասխան՝ Քլկուրանցու մօտ կայ սշողայր կաթիլ լոյսն ի վզին» արտայայտութիւնը և այլն: Նոյնը և Աղթամարցու մօտ. «Աչքեր ծով ի ծով լինիս . . .», Յովսէփի Սեբաստացու մօտ. «Աչքն է ծովեր, վարսերն ոսկեր, Ղազար Սեբաստացու մօտ. «Ծով աչք, ա՛մ քանի նայիս խոլորով և այսպէս անվիր, նարեկացուց որեւէ բան անպայման պատահում է սիրին երգիչների կողմից օգտագործուած, առանց սեփական ինքնատպօթիւնը աննշան չափով իսկ փնտ հասցնելու:

Վերին աստիճանի հետաքրքրական մի փաստ է ներկայացնում իրենից Դրիգորիս Աղթամարցու սիրոյ երգերից մէկը, որը ցոյց է տալիս, թէ ինչպէս նարեկացու ոչ միայն տաղերի, այլև Մատեան Ողբերգութեան» պոէմի կուլտուրան օգտագործուել է սիրային բանաստեղծութիւնների համար: Աղթամարցին ոչ միայն մի բառական գեղեցիկ ակրոստիքոս է գրել նարեկի բուն ոգով («Եղուկ մի վայ, որ միզօք աղտեղեցայ. զեկերս ի ծով ի իջեայ և հողմով չարին փարեցայ»), նոյն նարեկի ոճը, արտայայտութիւնները օգտագործել է նաև իրեն սիրոյ երգիչ:

Մասց աչօք ինձ երեւիս.

Բնակեալ ես դու յիմում սրճիս,  
Ծրարեալ ունիմ զեգ ի հոգիս:

Բանաստեղծն իր համարձակութեան մէջ այնքան է առաջ գնացել, որ սիրուհու և նրա նկատմամբ տածած իր զգացմունքների մասին խօսում է այնպէս, կարծէք թէ Աստուծո մասին խօսելիս լինի: Միջնադարեան սիրոյ երգերում պատահում է և սրան հակառակ դէպք. բանաստեղծը ցանկանում է նարեկացու նման «մեղայններ ասել ու դիմում է Տիրաժօրը՝ միաժամանակ գովերգելով նրան». բայց այդ գովերգութիւնը այնպէս է ստացւում, որ կարծէք թէ իր սիրուհու մասին գրելիս լինի (օրինակ՝ Թուր Բուշակի «Բան զղջական» բանաստեղծութիւնը):

Այսպէս՝ նարեկացին իր հմայքը շարունակում է պահպանել միջնադարի ողջ ընթացքում: Երբ սկսում է հայկական տպագրութիւնը՝ մի քանի տասնեակ տարի անցած հրատարակում են նրա «Մատեան Ողբերգութեան» պոէմը և ներբողները: Չնայած տպագրական գործի այն ժամանակուայ դժուարութիւններին, նարեկացու Մատեանը շատ անգամ վերահրատարակւում է. իսկ եթէ հաշուենք այդ գրքի նաև նոր հրատարակութիւնները, ապա գրանցքանակով՝ անցեալի հայ տպագրութեան մէջ երեւի ոչ մի գիրք չկարողանայ մրցել նրա հետ: Ճիշդ է, նարեկի հրատարակչները հետապնդում էին կրօնական-յետադիմական տենդինքներ և այդ պոէմը ներկայացնում էին որպէս լաւագոյն ազօթագիրք. բայց միեւնոյն է, մեր կուլտուրայով բարձր գրողների համար այն մնում էր ստեղծագործական ուսուցանութեան լաւագոյն աղբիւր:

Մ. ՄԿՐԵԱՆ

(Շարունակելի՝ 16)



Դեղեցկագեղ ֆայցաբաբառ,  
Սեբ քո ունի խորհուրդ անհառ,  
Իմանալի արեւ պայծառ,  
Լուսաւորեա միս իմ խաւար:  
Դրախտ վայելուչ, ծառ պսղաւոր,  
Քաղցրանաւակ եւ գինի նոր.  
Սիրով արբեալ քո անաւոր.  
Ի սենեկին խորհրդաւոր:  
Սքէ յաչաց մարմնոյս ծածկիս,

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

### ԽՆԴՐԱԿԱՏԱՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Խնդրակատար Ս. Աստուածածնի Վանքը կը գտնուէր Բաղէշէն զէպի արեւելք հազիւ կէս ժամ հեռու, Ամպ գիւղին դիմաց. — Հմատ. Կիւլէսէրեան, Կոլոտ, էջ 146: 2. Հ. Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Գ. Մաս, 1947, էջ 925, որ կը զետեղէ «Բաղէշ քաղաքին հարաւակողմը», մինչ Հ. Ն. Ակինեան ալ կ'ըսէ «Բաղէշի արեւմուտքը» (Հանդէս Ամսօրեայ, 1951, էջ 187-8): — Եւ տակաւին կ'ըսեն թէ հայերը անմիաբան են:

Այս Վանքին հնագոյն մէկ յիշատակութիւնը կը տեսնենք 1458ին, երբ Մուրատի որդի Յովհաննէս Գրիշ կ'օրինակէ Թովմայ Մեծոփեցւոյ Աղօթամատոյցը. — Խաչիկեան, ԺԵ. Դարի Յիշտ., Մասն Բ., էջ 109:

Սօֆ (Շահ Իսմայիլ, 1499-1525) անուն բռնաւոր մը, 1511ին, Պարսկաստանէն կու գայ և ի միջի այլոց կ'աւերէ Խնդրակատար Ս. Աստուածածնի Վանքը. — Բանասէր, 1905, էջ 293:

Խնդրակատարի Առաջնորդներուն ցանկը, ԺԶ. դարու սկիզբէն մինչև ԺԸ. դարու Բ. կէտը, տրուած է Վանքին Յիշատակաց Մատենանին մէջ. տես Բանասէր, 1905, էջ 291-303:

Ա. — 1514-1526-ը. — Առաջնորդ Ներսէս վրդ. Մատաղ — աշակերտ Արճիշեցի Գրիգոր Վարդապետի՝ մականունն Զորթան — բարեացակամութեամբ Ամիր Շարաֆի (+ 1533), գործակցութեամբ Ներսէս բաբունապետի և օգնութեամբ խոջայ Թումաշանի, կը վերանորոգէ Վանքը, կը շինէ գպրոց, կը հաստատէ դասատուն, և կը հաւաքէ շատ աշակերտներ. — Բանասէր, 1905, էջ 293-4:

Ներսէս վրդ. Մատաղի գրչէն ծանօթ են երկու գանձեր.

1. — Գանձ Վարդապետի. — Նախախնամող Աստուած յայտնեցար. — Ձեռ. ԹԿ. 1505. — Հանգ. Ամս., 1951, էջ 191:

2. — Գանձ Վարազայ Ս. Խաչիկ. — Նշան օրհնեալ և փառաւորեալ. — Ձեռ.

ԹԿ. 1505. — Ս. Կանայեանց, Յուցակ Ձեռ. Ներսիսեան Եպրանոյցի, Թիֆլիզ, 1893, Թ. 2, էջ 15 (84):

Բ. — 1526-ը-1575. — Ներսէս Բարունապետ Բաղիսեցի. աշակերտ Մատաղ Ներսէսի: Ծնած է Մոկք, բայց երկար ժամանակ ապրած է Բաղէշ, Հայրը քահանայ էր Յակոբ անունով, մայրը կը կոչուէր Շնորհաւոր: Իր աշակերտներէն յիշուած են Ներսէս վրդ. Ամկեցի՝ մականունն Բորիկ, Հերապետ վրդ. Գումաննեց, Դաւիթ վրդ. և Յովհաննէս վրդ.: Թաղուած է Խնդրատար Վանքը. — Թ. Աղաբար, Բ., էջ 255, 257, 260: Բանասէր, էջ 293: Թ. Թովհանեան, Յուցակ Ձեռ. Խաչիկ վրդի, Վաղարշապատ, 1898, էջ 99:

Իր շրջանին Հերապետ գրիշ կ'օրինակէ մէկ Քարողգիրք Գր. Տաթեացւոյ, Բ. Հատոր, 1534ին. «Ի վայելումն Ներսէս Բաղիշեցւոյ» (Հանգ. Ամս., 1951, էջ 195): Ապահովարար Նոյն Հերապետը, մականունն Գումաննեց, որդի Վարդանի և Խոնդքարի, դարձած վարդապետ, վերստին կը նորոգէ և կը կազմէ Ոսկեփորիկ մը, 1547ին. — Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ Ձեռ. Վենետիկի, Բ., էջ 860: — Նոյն տարին յիշատակի համար Վանքի մատենադարանին կը նուիրէ մէկ Յայտնաւորք, մէկ Կանոնգիրք և մէկ Աղօթամատոյց. — Բանասէր, էջ 294:

Դարձեալ այդ շրջանին, Յակովբ Սարկաւազ — որդի Վարդանէսի, Ներսէս Ամկեցիի հղբօր — որ գրչութեան արուեստը ուսած է Ամկեցի Աստուածատուր Վարպետի մօտ, իր հօրեղբոր պատուէրով օրինակած է մէկ Ագաթանգեղոս Ժողիշէ, 1569-70ին. Կար. Յուցակ Ձեռ. էջ 179, Թ. 1615: Հանգ. Ամս., 1951, էջ 198:

Գ. — 1575-1587-ը — Ներսէս վրդ. Ամկեցի, Բոքիկ, որդի Մհերի և Քնքուշի, աշակերտ Բաղիշեցի Ներսէս Վարդապետի: Իր օրով ալ շատեր կու գան աշակերտելու Ս. Գրոց ուսման: Իր աշակերտներէն առնուով յիշուած են, Տէր Մկրտիչ, Յովհաննէս վրդ. Ծարեցի, Յովհաննէս վրդ. Բաղիշեցի՝ Յովիկ, Յովհաննէս վրդ. Ոստանցի՝ Բրգոթեանց, և Ագարիա վրդ. Շահկերտցի (Ջուղայեցի). — Թ. Աղաբար, Բ., էջ 260: Բանասէր, էջ 293-4:



Դ. — 1587? — 9. — Յովհաննէս Բրօնցի.  
— Բանասէր, էջ 293:

Ե. — 9 — 1623. — Կարապետ Վրդ. Փար-  
խընկեցի, աշակերտ Ապարանցի Սիմէոն  
վարդապետի: Վանքին նուիրած է մէկ լաւ  
Աստուածաշունչ. — Բանասէր, էջ 293-4:

Իր աշակերտներէն Ներսէս Վրդ. Մոս-  
րաբերդցի, վարդապետական իշխանութիւն  
առնելէ ետք, քարոզչութեամբ կ'երթայ  
մինչև Կաֆայ, և հոն կը վախճանի: Բայց  
իր աշակերտին՝ Ղուկիկի Հայրապետ Վար-  
դապետի ձեռքով նուէր կը զրկէ պատուա-  
կոտ գոհարազարդ սկիչ մը. — Նոյն:

Փարխընկեցիի միւս աշակերտներն են  
Պետրոս Վրդ. Գաւաշցի և Բարսիլ Վրդ.  
Աթախցի:

Կարապետ Վրդ. Թաղուած է Խնդրա-  
պատար Վանքի գերեզմանատունը. — Յ.  
Թօփնեան, Յուցակ, էջ 99: — Իր զբու-  
թիւններէն ծանօթ է «Կարգ Վարդապե-  
տաց». — Զանգ. Ամս., 1951, էջ 177-8:

Զ. — 1624? — 9. — Պետրոս Վրդ. Գա-  
ւաշցի, աշակերտ Փարխընկեցի Կարապետ  
վարդապետի. — Բանասէր, էջ 293:

Է. — 1630? — 9. — Յակոբ Վրդ. Բաղի-  
եցի, Ժականուն Միբունենց. — Բանասէր,  
էջ 293-4:

Ը. — 1639? — 1673. — Դաւիթ Վրդ. Բա-  
ղիեցի: Սա բանաստեղծ էր և անձանձիր  
քարոզիչ: Աշակերտ Մեսրոպ վարդապետի,  
Իր ունեցած ձեռագիր զրբերը կը թողու-  
նէ Վանքին: Գրած է Համառոտ Ժամանակա-  
գրութիւն մը: Վախճանած է Լիմ Անապատը  
և թաղուած անդ. — Բանասէր, էջ 293-4:  
Յ. Թօփնեան, Յուցակ, էջ 96: Զ. Զ. Ոսկե-  
եան, Վասպուրականի Վանքերը, Գ., էջ  
933:

Թ. — 1673 — 1710. — Աւետիք Վարդա-  
պետ, աշակերտ Դաւիթ վարդապետի, ձեռն-  
տուութեամբ իր աշակերտին՝ Աբրահամ  
վարդապետի, 1693ին հիմնովին կը վերա-  
շինէ Խնդրապատար Ս. Աստուածածնի Եկե-  
ղեցին: Աւետիք Վրդ. կը վախճանի 1710ին  
և կը թաղուի տաճարի փակողմեան դա-  
սին մէջ. — Բանասէր, էջ 296: Կիւլէսէր-  
եան, Կոլոս, էջ 146: Զ. Զ. Ոսկեան,  
Վասպուրականի Վանքերը, Գ., էջ 925:

Ժ. — 1710 — 1723. — Աբրահամ Վրդ.  
Ալամեցի, որդի Սարգսի, կը յաջորդէ իր

## ԳՐԱՆՈՍԵԱՆՆԵ

### “ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ԳՐԱՌԻԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ”

Հեղինակ՝ ՊՐՈՖ. ԱՇՈՏ Գ. ԱՏԻՍԱՆԻԱՆ

Երևան, 1959

«Հայ Գրի եւ Գրչութեան Պատմութիւն»ը  
և անոր հեղինակը գուրս կը մնան այն հո-  
սանքէն՝ որուն ձգտումն է, առանց արդար  
պատճառներու, հրատարակել հաստատօր  
գիրքեր: Արդարեւ, Պրոֆ. Աշոտ Գ. Աբրա-  
համեանի ներկայ աշխատութիւնը կոնկրե-  
հատոր մըն է, ուր առանց աւելորդաբա-  
նութիւններու՝ ժուժկալ ու գոհացուցիչ  
կերպով արուած են Հայ Հնագրութեան

ուսուցչին, և իբրեւ վաստակաւոր պաշտոն-  
եայ կը թաղուի տաճարի ձախակողմեան  
դասին մէջ. — Բանասէր, էջ 296-7: Ոսկե-  
եան, էջ 925:

ԺԱ. — 1723 — 9. — Երեմիա Արքեպիս-  
կոպոս, որդի Զիկցի Յոհանի, կը յաջորդէ  
իր ուսուցչին: Իր օրով Շէրվընցիք կը թա-  
ւանեն Վանքը և շատ աւերներ կը գործեն.  
— Բանասէր, էջ 297:

ԺԲ. — 9 — 1749. — Աբրահամ Վարդա-  
պետ, որդի Տէր Ղուկասի, իր ուսուցչին կը  
յաջորդէ անոր կենդանութեան իսկ: Վախ-  
ճանած է 1749ին. — Բանասէր, էջ 297:

ԺԳ. — 1749 — 1760. — Սահակ Արքե-  
պիսկոպոս, որդի Փարխընկեցի Պարթէլի և  
աշակերտ Կաղնոնց Սահակ վարդապետին:  
Պաշտօնի կը ձեռնարկէ 1749 Գեղեցեմբեր.  
25ին և կը վախճանի 1760ին. — Բանասէր,  
էջ 297, 299:

ԺԴ. — 1760 — 9. — Վարդան Վարդա-  
պետ, աշակերտ Երեմիա վարդապետի.  
Վանքին ունեցած 7 քսակ պարտքէն 6  
քսակ կը վճարէ և կը մնայ մէկ քսակ:  
Կը նորոգէ Վանքը և կը ճոխացնէ ամէն  
կերպով. — Բանասէր, էջ 299:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

տեղիքն ու խնդիրները: Եւ ասիկա անշուշտ գիրքին կարեւոր մէկ առաւելութիւնն է:

Հնագրութիւնը Հայ Բանասիրութեան անմշակ մէկ մարզը է: Թատկապէս 1850—1950-ի հարկւրամեակի ընթացքին, հայ հնագրութեան զանազան հարցերուն մասին հրատարակուած են բազմաթիւ յօդուածներ ու գիրքեր, որոնց կարեւորագոյններն են՝ Հ. Յակոբոս Տաշեանի «Ակնարկ մը Հայ Հնագրութեան վրայ», Գարեգին Կթղ. Յովսէփեանի «Գրչութեան Արուեստը Հին Հայոց Մէջ» և Հրաչեայ Աճառեանի «Հայոց Գրերը» ու «Մեսրոպ Մառնոյ» (էջմիածին): Այս մեծ հեղինակութիւններուն կը միանայ աւելի Խ. Աբրահամեանի, որ արդէն հայ հնագրութեան ձեռնարկ մը հրատարակած է երկուսը (1940 և 1949)՝ «Հայկական Պալեոգրաֆիա» վերնագրով:

«Հայ Գրի եւ Գրչութեան Պատմութիւնը» յիշուի նոր ու ամբողջական հրատարակութիւնն է «Հայկական Պալեոգրաֆիա»-ին: Միայն չհասկցայ թէ ինչո՞ւ Պրոֆեսորը իր աշխատութիւնը չէ խորացրած «Հայ Հնագրութիւն»: Հատորը կը բացուի «Ներածութեամբ» մը (էջ 5—16), ուր հեղինակը կը պարզէ Հնագրութեան առարկան և Հայ Հնագրութեան պատմութիւնը:

Առաջին գլխուն մէջ (էջ 17—32), «Հայաստանում այլ նշանագրերով և լիզուներով գրուած գրութիւնները», — Աբրահամեան կը ներկայացնէ «էճապատկերները, Հիթիթներու և Ուրարտացիներու գրութիւնները, և արամէական, յունական և լատինական արձանագրութիւնները Հայաստանի մէջ»:

Երկրորդ գլուխն է՝ «Հնագոյն տեւեալներ նախամեսորոպեան գրի և գրականութեան մասին» (էջ 33—46), Այստեղ քըննարկուած է նախամեսորոպեան գրի ու գրականութեան հարցը, յիշատակուած են զանազան հայագէտներու կարծիքները խնդրի մասին և յառաջ բերուած են փաստեր՝ ի նպաստ այն թէզին թէ Մեսրոպ Մաշտոցէն առաջ գիր ու գրականութիւն կար Հայաստանն աշխարհի մէջ: Պրոֆ. Աբրահամեան արդարօրէն կ'ըսէ. «Ամփոփելով մեր կարծիքը նախամեսորոպեան հայ գրի և գրականութեան մասին, մենք գալիս ենք վճռական այն եզրակացութեան, որ հիթիտու

սական Հայաստանում գոյութիւն է ունեցել հայկական մեհենական գիր և գրականութիւն, որը ոչնչացուել է ամբողջապէս քրիստոնէութեան կողմից: Գրիստոնէութիւնը Հայաստանում ճանաչուելուց յետոյ մի քանի դար շարունակ գործ են ածել յունական և ասորերէն տառանիշերը» (անդ, էջ 46):

Երրորդ գլուխը նուիրուած է հայկական գրի ստեղծման (էջ 47—65), Հոս, Մաշտոցի ծննդավայր Հացեկաց գիւղին Փաւստոս Բուզանդի կողմէ տրուած «կարճագատ» բառը, Պրոֆեսորը կը մեկնաբանէ իբր սահմանափակ ազատութիւն ունեցող գիւղ, և ապա կ'նշարկացնէ. «Բոլոր դէպքերում... սկզբնաղբիւրների հիման վրայ մենք կարող ենք միայն հաստատապէս ասել, որ Մաշտոցը եղել է աշխատաւոր գիւղացու որդի» (անդ, էջ 49): Կը զարմանամ այս եզրակացութեան համար, որովհետեւ սկզբնաղբիւրները մեզի երբեք իրաւունք չեն տար «հաստատապէս ասելու» որ «Մաշտոցը եղել է աշխատաւոր գիւղացու որդի»: Ընդհակառակը, Անանիա Շիրակացի Մեսրոպի համար յստակ կերպով կ'ըսէ թէ «յազատ տանէ» (= աղնուական տուն) էր<sup>(1)</sup>, և Փաւստոս ալ «կարճագատ» եզրը կ'ընձեռէ մեզի: Այս բառին լատգոյն մեկնաբանութիւնը տուած է Հրաչեայ Աճառեան (տես «Մեսրոպ Մառնոյ»), ըստ որում «կարճագատ = երկրորդական կարգի աղնուական» կը նշանակէ: Միւս կողմէ, Կորիւնի վկայութիւնը, թէ Մաշտոց «Հացեկաց գիւղէն էր», հաստատուն փաստ մը չի կրնար ըլլալ՝ ըսելու թէ հայ գիրերու յօրինողը աշխատաւոր գիւղացու որդի էր», քանի որ բազմաթիւ գիւղերու մէջ աղնուականներ կ'ապրէին՝ իբր հողատէրեր: Հուսկ ուրեմն յիշենք այլ նշաններ՝ Մաշտոցի աղնուական ծագման. — 1) Հայրը Տարօն գաւառի Հացեկաց գիւղէն էր և վարդան կը կոչուէր. ուրեմն և հաւանաբար Մամիկոնեան և աղնուական էր: 2) Մեսրոպ բարձր կրթութիւն ստացած էր և Արքունիքի մէջ զինուորական մեծ պաշտօն ունէր՝ իբր քարտուղար և զօրական: Իրական

(1) «Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը», հրտ. Ա. Աբրահամեան, Երևան, 1944, էջ 389:

նութիւնն է որ այդ ժամանակ հասարակ մարդոց չէր տրուեր նման դիրք ու դործ։

Արքահամեան, հայերէն գրերու գիւտին որպէս միակ զրգապատճառ կը նշէ ազգայն- լին ազգակը, թէ Միսրոպ գիր ստեղծեց պայքարելու համար յունական և ասորական միասակար ազգեցութիւններու դէմ։ Այս պատճառ մըն էր, բայց ոչ միակը։ Կորիւնի յատակ վկայութիւններուն համա- ձայն<sup>(2)</sup>, Մաշտոց մտածեց հայկական գիր հնարել՝ հայերէն լեզուով Ս. Գիրք տալու համար ժողովուրդին ձեռքը և վայն դաս- տարակելու քրիստոնէական գրականու- թեամբ<sup>(3)</sup>։

Ճիշդ է Պրոֆեսորին պնդումը որ հայ- կական քրիստոնէական գրերու գիւտին ստոյգ տարիթիւնն է 406<sup>(4)</sup>։ Վերադառ- Պակիդասո յարակցումը կամ սրբադրու- թիւնը, որ յիշուած է յանուն Հ. Ներսէս Ակինեանի (1935 թ.), առաջին անգամ 1913 թուին կատարած է Ժողէֆ Մարկուարտ<sup>(5)</sup>։

Հայերէն այբուբենը ատաղձին առնու- չութեամբ, Արքահամեան կը յառաջագրէ դանիէլեան տառերու սրբացման տեսու- թիւնը։ Սա արդէն հին ու մերժուած կար- ծիք մըն է, որովհետեւ չի համապատաս- խաներ ճշմարտութեան։ Ժամանակակից և ստուգապատու մատենագիրը՝ Կորիւն կ'ըսէ թէ դանիէլեան գիրերը իբր անկասար՝ մէկգի թողուեցան և Մաշտոց դարձեալ նոյն մտահոգութեան և ջանքին մէջ ինչա- լով՝ ինք անձամբ և... հայրական չափուն ծնեալ ծնունդս նորով և սքանչելի՝ սուրբ աշտին իւրով, նշանագիրս հայերէն լեզուին, այսինքն, «Որպէս հայր՝ իր սուրբ աշով ծնաւ նոր և սքանչելի ծնունդներ, — հա- յերէն լեզուի նշանագիրներ»<sup>(6)</sup>։ Դանիէլ- եան տառերը ոչ միայն օգուտ չունեցան,

այլ և ընդհակառակը միասակար եղան՝ ու- շացնելով հայկական այբուբենը գիւտը։ Եւ արդէն, տրուած ըլլալով որ հայերէն տառերը յունականի վրայ կերպաւորուած են, դանիէլեանները չէին կրնար օգտակար հանդիսանալ, վստիքի արամեական և կամ այլ սեմական գիրեր էին։ Դանիէլեան նշա- նագիրներու սեմական ըլլալուն փաստներն են. — ա) 22 տառեր էին. բ) Հայերէն լեզ- ուի բոլոր ձայները արտայայտելու կարո- ղութիւնը չունէին. զձեռք աւական նշանա- գիրքն՝ ողջ ածել զսրբագրոյս — զկապս — հայերէն լեզուոյն<sup>(7)</sup>։

Դ, Ժ, Խ, Ծ, Հ, Զ, Զ, Զ, Յ տառերու ծագման մասին Պրոֆեսորին տուած բա- ցատարիթիւնները վիճելի են։

Չորրորդ գլուխ. Հայկական գրերի տե- սակները և նրանց դործածութեան ժամա- նակը (էջ 66—109)։ Հեղինակը հայերէն գրերը կը դասաւորէ այսպէս. — Բուն մեսրոպեան բոլորագիր, միջին և ուղղան- կիւն երկաթագիր, բարբաղի, նոսրագիր և շղագիր։ Ծատ լաւ։ Էջ 69—70, Հ. Վարդան Հացունիի հետեւողութեամբ՝ յառաջ բեր- ուած է սխալ ու սարսափելի մեկնաբանու- թիւնը Կորիւնի հետեւալ խօսքին. «Եւ ան- դէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն՝ ըզ- ներագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զեր- կայնն, զառանձինն և զկրկնաւորն միւսն՝ զամայն յօրինեալ և յանկուցեալ...»<sup>(8)</sup>։ Ժամանակին, Հացունին բարձր տեսակէտ մը յայտնած ըլլալու մեծամտութեամբ, հնչական կամ ձայնաբանական մեկնութիւն մը տուաւ Կորիւնի «ներագոյնն», «լայնա- գոյնն», «կարճն», «երկայն», «առանձինն» և «կրկնաւոր» բառերուն, հիմնուելով Դիո- նիսիոս Թրակացիի Քրիստականութեան վրայ<sup>(9)</sup>։ Եթէ հայերէն տառերու առաջին Դանիէլ Ասորին հայթիկեց, և եթէ գի- րերու ձայնաբանական արժէքն ալ Սամու- տացի Հռոփանոսը ճշդեց, ինչո՞վ հայերէն գրերու հնարողն է Մեսրոպ Մաշտոց...։

(2) Վարդ Մաշտոցի, Կորիւն, հրատ. Մ. Արեւ- եան, Երևան, 1941, էջ 40 և 42։

(3) Հմմտ. Ոսկեդարի Գրականութիւնը, Երևանի Տ. Միւստեան, Երևան։

(4) Հայերէն գրերու գիւտի ստոյգ տարիթիւի մասին եւ ալ համեմատ յօդուած մը հրատարակած օւնիսմ Պէլլուսի Շիլակոյ առաջգրին մէջ (1956)։ Ըստ երևոյթի, այս գրութիւնը վերպած է Պրո- ֆեսորին ուղարկութենէն։

(5) Պատմութիւն Հայերէն Նշանագրերու եւ Վարդ Ս. Մաշտոցի, Վիեննա, 1913։

(6) Վարդ Մաշտոցի, Կորիւն, նոյն անգ, էջ 48։

(7) Նոյն անգ, էջ 46։

(8) Նոյն անգ, էջ 48 և 50։

(9) Տես Ուղղագրութիւն եւ Առաջանութիւն Հայե- րէնի, Հացունի։

Յրբաւի ոչ մէկ կապ կայ Վաստացի Վարժարանի եւ Դիւնիւրի միջոցով թրակաւնութեան միջև, — գիրք մը՝ որ Կորինթի վարժաւորներու տարիներ հոգ թարգմանուած է հայերէնի, Կորինթի նշուած բառերուն ճիշդ քաջատարութիւնները տուած են Մանուկ Արեղեան<sup>(10)</sup> եւ Նրաչեայ Անառեան<sup>(11)</sup>, որոնք կ'ըսեն թէ «նուր», «լայն» եւ այլ բառերը կը վերաբերին գրիբուռ ձեւերուն: Եւ արդարեւ Հռուփանոս համեստ գեղազիր գրիչ մըն էր, երբիչ ոմն հելլենական զբոս-բարձրներ, — հաւանաբար հայերէնի ալ անծանօթ, — ե ոչ աւելի ինչ, որ օգնեց Մաշտոցի նորահայր հայերէն տառերը գեղեցիկ ճաշակով ու վերջնականապէս ձեւաւորելու:

Գլուխ Ե.՝ «Համառոտագրութիւն» (էջ 110—128): Գլուխ Զ.՝ «Թուանշանների գործածութիւնը» (էջ 129—138): Գլուխ Է.՝ «Փաղափարագրութիւն» (էջ 139—173): Ընդարձակ ու շահեկան գլուխ մը՝ ուր քննուած են «Իմաստոց նշանագիրներու վերաբերող հարցերը: Պրոֆեսորը երեւանի Պետական Մատենադարանին մէջ նորոգ դրած է 39 ձեռագիրներ՝ որոնք կը պարունակեն «նշանագիրներ»: Հետաքրքրական է որ ան «Իմաստոց նշանագիրները համեմատած է եզրագրական հիերոգլիֆներու եւ հնդկական նշանագիրներու հետ եւ նկատած՝ որոշ նմանութիւններ: Այս խնդրին քննութիւնն ու համեմատութիւնները ես ալ կատարած եմ, եւ աւելի խոր: «Հայ Հնագրութիւն» ձեռագիր աշխատութեան մէջ, երկար ուսումնասիրութիւններու իւր արդիւնք՝ յանգած եմ հետեւեալ եզրակացութիւններուն:

1. — «Իմաստոց նշանագիրներուն մէջ վերապրած կան մեր մեհնական գրիբը:

2. — «Իմաստոց նշանագիրները խառնուրդ են. անոնց մէջ հայ հին մեհնական գրիբուռ հետ համախառնուած են նոր կապ-գրիբը, գաղափարագրութիւններ ու համառոտագրութիւններ:

3. — Հայ մեհնական գրիբը տրամաբանական որոշ նմանութիւն ունին եզրագրական հիերոգլիֆներու, հնդկական եւ այլ

նշանագիրներու հետ, սակայն անոնցմէ չեն ընդօրինակուած եւ կամ ազդուած: Հայկական մեհնագրութիւնը ինքնատիպ սխառնմ մըն է եղած, որ աւելի նմանութիւն ունի հիերոգլիֆներու հետ: Նոյն բաները տարբեր երկրներու մէջ՝ բնականաբար կ'ուենան որոշ նմանութիւններ. հայ-եզրագրական-հնդկական նշանագիրներու նմանութիւնները այդքան են միայն:

4. — Մաշտոց մեհնական գրիբը, օգտագործած է հայ քրիստոնէական այբուբենի յօրինման մէջ: Յունարէնի պակասող հայկական հնչուածներու համար՝ ան առած է հայ մեհնական գրիբը: Եւ ըստ ինծի, մետրոպեան այբուբենի մօտաւորապէս տասը տառերը հին մեհնական նշանագիրներ են: Արդարեւ, նոյնն է պարագան Դպտիներու մօտ: Անոնք ալ յունարէնի վրայ ձեւած են իրենց այբուբենը, եւ ախտեղ ուր պակ-սած է յունարէն գրիբ՝ դրած են եզրագրական հիերոգլիֆ:

Գլուխ Ը.՝ «Եկտագրութեան եւ տուգանութեան նշանները» (էջ 174—185): Հետաքրքրական գլուխ մը՝ «Հայկական ծածկագրութիւնը» (էջ 186—242): Գլուխ Թ.՝ «Տարեթուերի, ամսաթուերի եւ օրերի հաշուածները» (էջ 243—300): Գլուխ ԺԱ.՝ «Փաղափարագրութիւն» (էջ 301—311): Գլուխ ԺԲ.՝ «Ջարդանկարութիւնը եւ զարդագրութիւնը» (էջ 312—337): Գլուխ ԺԳ.՝ «Գրանիւթը եւ գրեկական պիտոյքները» (էջ 338—355): Գլուխ ԺԴ.՝ «Աղաւաղութիւնը եւ աղճատումներ» (էջ 356—366): Գլուխ ԺԵ.՝ «Գրչան գրութիւն» (էջ 367—392): Եւ «Ձեռագրերի գրտական նկարագրութիւնը» (էջ 393—397):

Ընդհանուր եզրակացութիւն. — Գրախօսողիս դատումով՝ Պրոֆ. Աշոտ Գ. Արաբահամեանի «Հայ Գրի Եւ Գրչութեան Պատմութիւնը» առհասարակ ճշգրիտ տեղեկու-թիւններով ու ճշմարիտ տեսութիւններով կառուցուած արժէքաւոր գործ մըն է: Այս աշխատութեան թէ՛ միջոցն է եւ թէ՛ բուն վանդակութիւնն է շատ բան ունին սորվելիք ուսանողներին ու գիտականները միաժամանակ, մանաւանդ անոնք՝ որոնք կը զբաղին հայ մատենագրութեամբ եւ ձեռագիրներով:

(10) Տես Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն, Հատոր Ա.:

(11) Տես Մետոյ Մատոց, «Էջմիածին» ամսագրի մէջ:

# “ԼԵԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

### ՀԱՄԵՍԱՏՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵԶՈՒՆԵՐԻ”

Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀՐԱՋԱՑ ԱՃԱՌԱՆ — ԵՐԵՎԱՆ — 1955, էջ 655

Շատ մը լեզուներ ունին սեռը, և զանազան վերջաւորութիւններով կ'արտայայտեն զայն: Օրինակ, լատեր, փայտը, սեւանը կամ գրչածայրը արական են, իգական թէ չէզոք: Ուրիշ լեզուներ, աւելի քիչագոյն շրջաններուն, եղակիի և յոգնակիի կողքին կ'ընդունին նաև երկակի թիւը, որ նոյնպէս սեռով կ'արտայայտուի և զանազան ձևեր կը ստանայ: Իրաւամբ, Աճառեան, այս բոլորը մարդկային մտքի «աւելորդ ծանրաբեռնութիւն» կը նկատէ, և անոնք որքան ալ ճոխութիւն, զարդ, գեղեցկութիւն կամ շքեղութիւն համարուին, հակառակ են լեզուի պարզութեան և դիւրմբանելիութեան: Որքան որ ակնյայտ է չինարէնի ձևադրկութիւնը, նոյնքան ալ աւելորդ է սանսկրիտներէն կամ արաբերէնի ձևերու ճոխութիւնը: Լեզուն գործիք չ'մն է մարդկային մտքի ճշգրիտ արտայայտութեան համար. անհրաժեշտ է որ այդ գործիքը աւելորդ զարդերով և նկարներով խճողուած ըլլայ: Բաւ է որ նուազագոյն ճիշդով և հանգարտութեամբ արտայայտենք մեր միտքը: Լեզուի ճոխութիւնը հակառակ է պարզութեան գաղափարին:

22) Լեզուի համառոտութիւնը: — Ժիգերու նուազագոյն չափն է որ լեզուն ի գործ կը գնէ որ և է գաղափար մը արտայայտելու համար: Գրաբար դից և աշխարհաբար աստուծներու բառերը նոյն իմաստը կ'արտայայտեն, բայց առաջինը երկրորդէն չորս անգամ աւելի կարճ է: Որքան կարճ ըլլան լեզուի բառերը, այնքան ալ համառոտ կ'ըլլայ լեզուն և նուազ ոյժ կը պահանջէ: Բառերու երկարութեան հետ, անշուշտ, աղբւրս մը չունի երկարաբանու-

թիւնը՝ որ ռճաբանութեան կը պատկանի: Ոմանք կտրուէ լոճ կը գործածեն, իսկ ուրիշներ աւելորդ կրկնութիւններով կը ծանրաբեռնեն խօսքը: Միջակը լուազոյնն է:

23) Լեզուի սեղմութիւնը: — Լեզուի սեղմութիւնը կը կայանայ ձևերու կարճութեան մէջ: Գրաբարի դից բառին մէջ յոգնակի սեռականի նշանը ց' միայն մէկ հնչուով կամ մէկ տառ է, իսկ աշխարհաբարի աստուծներու բառի ներքև հոլովակերտ սեռականի յոգնակին երկու ամբողջ վանկերէ կամ չորս հնչումներէ կը բաղկանայ: Կարգ մը լեզուներ քերականական քանի մը երևոյթներ միասին կ'ամփոփեն մասնիկի մը մէջ, իսկ ուրիշներ իւրաքանչիւր երևոյթ կը ներկայացնեն առանձին մասնիկով: Առաջինները կը կոչուին համագրական լեզուներ, իսկ երկրորդները՝ վերլուծական: Այսպէս, վերոյիշեալ օրինակին մէջ, գրաբար ցն միաժամանակ յոգնակիի և սեռականի նշան է, իսկ աշխարհաբար ներքև կազմուած է, երկու անջատ մասերէ, ներ (եր) յոգնակիի նշան, իսկ ու՝ սեռականի: Ընդհանրապէս թեքական լեզուները կը հետեին առաջին սկզբունքին, այսինքն մէկ մասնիկի մէջ կը միացնեն քերականական զանազան դասերը, իսկ կցական լեզուները կը հետեին երկրորդին՝ քերականական իւրաքանչիւր դասը ներկայացնելով առանձին մասնիկի մը մէջ:

24) Լեզուի կանոնաւորութիւնը: — Լեզուի կանոնաւորութիւնը կը կայանայ կանոններու միօրինակութեան մէջ: Երբ լեզու մը իր ընդունած ափսոյն կամ այնինչ կանոնին դէմ կը հանէ խումբ մը բացառութիւններ, յաճախ տասնականներով, հազարակ կ'ընթանայ կանոնաւորութեան սկզբունքին: Այսպէս, գրաբարի մէջ, յատուկ անուններ կը վերջանայ, այդ է ձայնը կը փոխուի եր: — Հռիփսիմէ, սեռական՝ Հռիփսիմայ: Բայց այս կանոններուն դէմ իբրև բացառութիւն ունինք Գրիգոր, սեռական՝ Գրիգորի, նաև Գրիգորոյ. Յովսէփ, սեռական՝ Յովսէփու, և այլն: Գրաբարի հոլովման նման անկանոն երևոյթքիչ կայ լեզուներու մէջ: Կանոնաւորութիւնը լեզուի մէջ այն սկզբունքն է՝ որով

լիգուռն կը ձգտի մէկ պաշտօնի համար յատկացնել միմիայն մէկ նշան, իսկ մէկ նշանին տալ միմիայն մէկ պաշտօն:

25) Լիգուռն յատկութիւնը: — Յատկութիւնը լիգուռն այն յատկութիւնն է՝ որով գրուած քը կ'արտացոլացնէ ընթերցողին առջեւ ինչ որ մտածած է հեղինակը և տեղի չի տար ոչ մէկ երկդրիսի իմաստի: Շատ յաճախ, գրուած քին մթութիւնը կախում ունի հեղինակէն և ոչ թէ լիգուռն թերութիւնէն: Իսկ երբեմն երկդրիսութիւնը կը յառաջանայ նոյնինքն լիգուռն ոգիէն: Աճառեանի համաձայն, «յատկութեան իտէալը» պիտի կայանար իւրաքանչիւր բանին տալով միայն մէկ նշանակութիւն, իւրաքանչիւր նշանակութիւն արտայայտելով միայն մէկ բանով, և իւրաքանչիւր քերականական ձևին կամ մասնիկին տալով միայն մէկ արժէք, ինչ որ պարագան է բոլոր արուեստական և գիտական լիգուռնութեան: Սակայն այդ «յատկութեան իտէալը», ըստ Աճառեանի, լիգուռն պիտի վերածէր անկիզբան գոյութեան մը, չոր ուսողական բանաձևի մը: Այս հաստատութիւնը վերջ, հարկ էր ուրիշ մասնանշում մը ընել: Դժուար պիտի ըլլար իւրաքանչիւր բանի մէկ նշանակութիւն վերագրել և իւրաքանչիւր նշանակութեան մէկ բան, որովհետեւ լիգուռն սենսուքիւնը հիմնուած է նուազագոյն ճիշդ վրայ:

26) Լիգուռն պարզութիւնը: — Լիգուռն պարզութիւն ըսելով կը հասկնանք այն իրողութիւնը՝ որով ընթերցողը առանց իր միտքը չարչարելու, առանց յաւելեալ ճիշդեր թափելու, կը հասկնայ գրուած քի մը իմաստը: Պարզութիւնը կախում ունի քերականութիւնէն, համաձայնութիւնէն, շարահիւստութիւնէն, բայց մասնաւոր՝ ոճէն: Բարդ են հին յունարէնի, լատիներէի, սանսկրիտերէնի և գրաբարի քերականութիւնները, համաձայնութիւնները և շարահիւստութիւնները: Ընդհանուր աւամար, հին լիգուռնը պարզ չեն: Նորիւրն են որոնք այս ուղղութեամբ մեծ յառաջդրիսութիւն արձանագրած են: Անգլերէնի և պարսկերէնի քերականութիւնները, համաձայնութիւնները և շարահիւստութիւնները ծայրագոյն պարզութեան հասած են: Բայց ամենէն աւելի նկատողութեան արժանի է ոճի

պարզութիւնը: Այս պարագային ալ, շատ յաճախ հեղինակին պատճառաւ, գրուած քը կը դառնայ բարդ ու մթին: Հեղինակներէն ոմանք այդ բարդութիւնն ու մթութիւնը առաւելութիւն կը համարեն, իսկ կարգ մը մակերեսային ընթերցողներ զանոնք խորհրդագանիչ կը նկատեն: Երկուքն ալ կը սխալին: Բարդ ու մթին ոճ կը կիրարկեն անոնք՝ որոնք իրենց միտքը արտայայտել կամ զգալափայտելու զատուորիւ չեն կրնար, որոնք իրենց նիւթին լաւ չեն տիրապիտած և չեն գիտեր թէ ինչ կը խօսին կամ կը գրեն: Իսկ կան գիտութիւններ՝ որոնք իրենց նիւթին բերումովն իսկ զժուարժմը չեն ինչպէս իմաստաորոշութիւնը կամ ուրիշ ծանրակշիւ մասնագիտական առարկայ մը: Այս նիւթերը յաճախ խճողուած կ'ըլլան մասնագիտական բառերով՝ որոնք միայն իրենց ծանօթ են: Բայց այդ բառերէն դուրս, հեղինակը պարտաւոր է գործածել այնպիսի ոճ մը՝ որ կարելիութեան սահմանին մէջ պարզ ըլլայ: Ընդհակառակը, սովորական է տեսնել հեղինակներ՝ որոնք ոչ թէ իմաստաորոշական կամ մասնագիտական նիւթ մը, այլ պարզ խօսակցութիւն մը անգամ կը պատեն մթութեան քողով: Մեր հին հեղինակներէն ամենէն աւելի խթնագիրն է Մաքիստրոսը: Ահա հատուած մը իր հանելուկային խթնութիւնէն: —

Բառական բաղդատական բաղադան-  
 եալ բարգաւաճեալ,  
 Բարառաբար բախոհական ներքուն  
 բայի շարահանեալ,  
 Բարհիւսմ բուժող հլու բարձր գեղոյ  
 ձեզ ընձեռեալ,  
 Բիգեկ բազմակ բեղուն բակեղեթիւ  
 քեզ նուիրեալ,  
 Ներուն նամակ նիտան նորին նաքը  
 անբուժական,  
 Նախքուն նուէր նիսեան նմին նետու  
 անփտական,  
 Ներձուն նպաստ նաջան նեռին նարին  
 կիզողական,  
 Ներշուն նաւթ աննակին նոյեան նմին  
 իւր պահապան:

Շատ յաճախ, իթէ ոչ միշտ, մուծ սճի համար պատասխանատու են ոչ միայն լեռ-

գուները, այլ նաև հեղինակները՝ որոնք չեն կրնար պարզ ու յստակ գրել:

27) Լեզուի մաքրությունը — Աճառեան կը քննադատէ դանիացի լեզուաբան Եսթերսընի տեսակէտները լեզուի մաքրութեան առնչութեամբ: Ապա կ'ուրուագծէ պատմականը հայերէնին, և մաքուր իբրև շափանիչ կը նկատէ հոտեեալ պարագաները: — ա) Լեզուի գրական լեզուի մէջ ուղիղ են այն բոլոր բառային ձևերը՝ որոնք նոյնն են գրաբարի հետ: Բ) Օտար են այն բոլոր այլալեզու բառերը՝ որոնք համապատասխանները արդէն գոյություն ունին հայերէնի մէջ: Գ) Եթէ օտար բառ մը գործածուած է գրաբարի մէջ, առ այլևս օտար չէ: Կախով ոճերուն, դարձուած քերական և խնդրաուսութեան, մաքուր կը համարուի այն՝ որ կը համապատասխանէ ընդհանրապէս հայերէն ժողովրդական բարբառներու մտածողութեան և ոգիին: Ըստ անշուշտ Աճառեան ջատագովը չէ հայերէնը ստուսերէնով հարստացնելու և ճապարակ անհետքի կեցուած քին՝ որ կը ջատագովուի լորձնաշուրթին կարգ մը Հայաստանեան նորիւն լեզուաբաններու կողմէ:

28) Լեզուի յատկացումները և կատարելությունները: — Դժուար է որոշել թէ ինչ է լեզուի կատարելությունը: Ոչ ոք անկողմնակալ է այս հարցին մէջ: Իւրաքանչիւր անհատ կը կշռադատէ որեւէ լեզու մը չափանիշ ունենալով իր լեզուն: Ան կը քննադատէ նոյնիսկ անգլատկաբար, որովհետեւ իր լեզուն և անոր մտածողությունը անբաժանելի են իր կեանքէն: Եսթերսընը քննարկելով միայն հնդեւրոպական լեզուները, լեզուի յատկացումները և կատարելությունները կը բանաձևէ ըստ հոտեեալին.

Ա. — Լեզուները կը դիմեն գէպի համաօտություն: Սրինակ՝ կոթերէն habaide-deima բառը եղած է անգլերէն had «ունեցալ». լատիներէն augustus «օգոստոս» > Փրատներէն août. լատիներէն metipsimum «նոյն» > իտալերէն medesimo, սպաներէն mismo, Փրատներէն même. հայերէն արսառու > արցունք, մեծացուցանել > մեծցնել, սիրեցուցանել > սիրցնել, հարսանիք > հարսնիք, բերանի > բերնի, եայլն: Երկար ձևերէն կարճ ձևերու վերածումը յառաջդիմութեան նշան է, որովհետեւ մեզի կու

տայ ժամանակի և ուժի խնայողութիւն: Հաւագոյն լեզուն այն է՝ որ նուազագոյն ջանքով մեծ արդիւնքի կը հասնի:

Բ. — Հին լեզուները բաղաձև են, նորերը շատ աւելի պարզ: Օրինակ՝ նոյն անգլերէն had ձևը կը ներկայացնէ ոչ միայն կոթերէն habaide-deima, այլև նոյն բայի միւս ձևերը որոնք են՝ habaida, habaides, habaiedu, habaieduts, habaiedum, habaiedut, habaiedun, habaiedjau, habaiedeis, habaiedi, habaiedeiwa, habaiedeits, habaiedeima, habaiedeið, habaiedeina, ալիսինքն կոթերէն 16 ձևերու գէժ անգլերէնը ունի միայն had, մնացեալը բացառելով դերանուններու օգնութեամբ:

Գ. — Հին լեզուները ունին բաղաձիւ անկանոնություններ, որոնք բացառություն կը կոչուին, և որոնք անհետացած են նոր լեզուներէն:

Դ. — Հին լեզուները համադրական են, նորերը՝ վերլուծական: Առաջինները առանձին բառով մը շատ բան կ'ըսեն, իսկ երկրորդները՝ իւրաքանչիւր բառ զատ զատ: Այսպէս, լատիներէն cantaveram «երգած էի» բառին գէժ անգլերէնը ունի I' had sung: Հաւագոյն է վերջին ձևը, որ թոյլ կու տայ չեղար ըստ պահանջի փոխելու, ինչպէս I' had sung, I ha'd sung, I had su'ng: Ժամանակ, վերլուծական ձևի մտածողությունը քերականական հասկացողությունը աւելի ցայտուն կը դարձնէ: Երբ կը հոլովենք լատիներէն dominum, dominos, dominis, dominorum, գիտենք որ բոլորն ալ յոգնակ են, բայց յոգնակի ըլլալու գաղափարը յայտնապէս մատնանշող նշան մը չկայ: i, is նշանները կրնային նաև եղակիի նշան ըլլալ, ինչպէս որ rex «թագաւոր» բառը իր եղակի ձևերուն մէջ ունի regis, regi, եայլն: Ընդհակառակը, անգլերէնը գործածելով s նշանը, իսկայն կը յայտնէ յոգնակի գաղափարը բոլոր հոլովներուն մէջ:

Ե. — Վերլուծական դրությունները ընդունելով, քերականական ձևերու թիւը կը նուազի, որով կը խնայուի մտքի չփոթումները: Նոյնպէս կարելիութիւն կը ստեղծուի անոնցով նորանոր խառնուրդներ և բաղադրություններ կազմելու: Օրինակ՝ պիսի գրեմ, գրեմ պիսի, պիսի գրեմ, գրած պիսի ըլլամ, գրած պիսի ըլլայի, գրած ելած պիսի

ըլլամ, գրած եղած պիտի ըլլայի, գրած պիտի ըլլամ եղբւր, և այլն:

Ձ. — Հին լեզուներու շարահիւսութիւնը ազատ է: Բառերը զորովի ճաշակին կամ քմահաճոյքին համաձայն ըստ կամս կը տեղափոխուին և կը պահանջեն ընթերցողէն լարուած ուշադրութիւն, որպէսզի ան կաշտեայ իմանալ թէ ո՞ր բառը ո՞ր բառին հետ պէտք է կապել, իմաստը սխալ չհասկնալու համար: Սակայն յառաջդիմութեան այս երևոյթները յատուկ են միայն հնդեւրոպական լեզուներուն և ընդհանուր չեն:

Վերոյիշեալ օրինակներուն դէմ հակափաստեր չեն պակսիր: Ինչպէս Աճառեան դիտել կու տայ, Մարադայի բարբառին մէջ 20է աւելի կանոններ գոյութիւն ունին յոգնակիր կազմութեան համար: Արդարեւ, լեզուն շարունակական շարժման մէջ է: Ան երբեմն կը դիմէ անջատականէն դէպի կցական, ապա դէպի թիքական, յետոյ վերստին դէպի կցական ու անջատական, և այդպէս շարունակաբար: Անցման շրջանները միշտ խառնակ և անկանոն են: Կատարեալ կարելի է համարել այն լեզուն՝ որ իր մէջ կը պարփակէ նախորդող զուխնեւրո՞ւ մէջ նկարագրուած յատկութիւնները: Բայց այդ անկարելի է, որովհետեւ այդ յատկութիւններէն մի քանին իրարու հակասական են, և չենք հանդիպիր անոնց մէկտեղուած որեւէ լեզուի մէջ: Այս պատճառաւ, աշխարհի մէջ չկայ կատարեալ լեզու: Սակայն Աճառեան, ընդհանուր լեզուներու քննարկումէն վերջ, հետեւեալ պայմանները կ'առաջարկէ ապագայ «կատարեալ» լեզուի իրագործման համար.

Ա. — Այն լեզուները որոնք ունին սեռի քերականական կարգը կատարեալ չեն կրնար կոչուիլ: Օրինակ՝ ֆրանսերէնը, գերմաներէնը, իտալերէնը, յունարէնը, ռուսերէնը, եւրոպական լեզուներու մեծ մասը, և ինչ:

Բ. — Այն լեզուները որոնք քանի մը տեսակ հոլով և խոնարհում ունին, մանաւանդ հին համագրական դրութեամբ, կատարեալ չեն կրնար կոչուիլ: Օրինակ՝ հայերէնը, ֆրանսերէնը, գերմաներէնը, իտալերէնը, յունարէնը, ռուսերէնը, և այլն:

Գ. — Այն լեզուները որոնք կը կիրարկեն դասանիշերու դրութիւնը, մասնիկներ

ու նախամասնիկներ ներմուծելով, կատարեալ չեն կրնար համարուիլ: Ինչպէս՝ ափրիկեան լեզուները:

Դ. — Այն լեզուները որոնք շեշտ ունին, մանաւանդ անկանոն շեշտ, կատարեալ չեն կրնար համարուիլ: Ինչպէս՝ անգլերէնը:

Ե. — Այն լեզուները որոնք քերականական կապեր չունին և զօւրկ են հոլովումէ ու խոնարհումէ, կատարեալ չեն կրնար նկատուիլ: Ինչպէս՝ միաժամկային լեզուները:

Ձ. — Այն լեզուները որոնք բառերու նշանակութիւնները զանազանեցու համար ձայնաստիճան կը գործածեն, կատարեալ չեն կրնար նկատուիլ: Ինչպէս՝ չինարէնը և աննամերէնը:

Սակայն որեւէ լեզու չ'իրականացներ իր մէջ այս բոլոր կէտերը: Հետեւաբար կատարեալ լեզու գոյութիւն չունի. որովհետեւ լեզուն միշտ շարժուն է և իր կեանքը փոփոխութիւններու շարք մըն է:

29) Օտար ազդեցութիւններ: — Լեզուաբանութեան տեսլականը այն պիտի ըլլար որ իւրաքանչիւր լեզու, առանց ենթադրուելու որեւէ արտաքին ազդեցութեան, ձերբազատուած ուրիշ լեզուներու յարաբերութենէն, ապրած ըլլար անկախ ու անշեղ, որպէսզի կարենայինք հասկնալ լեզուի բնական աման ընթացքը և վախճանը: Բայց նմանօրինակ երևոյթ մը գոյութիւն չունի: Այդ տեսլականը բոկ ցնորք մըն է: Աշխարհի մէջ չկայ ժողովուրդ մը որ իր գոյութեան ամբողջ ընթացքին բոլորովին անջատ ու առանձին ապրած ըլլայ: Բոլոր ժողովուրդներին ալ փոխադարձ յարաբերութեան մէջ են իրարու հետ, և այդ յարաբերութիւններէն կախում ունի լեզուներու ճակատագիրը:

Յիշեալ յարաբերութիւնները կը ստորաբաժնուին հետեւեալ ձևով.

Ա. — Երկու ժողովուրդներ իրրեւ դրացի կ'ապրին, երկուքն ալ անկախ, իրարու հետ մշակելով բարեկամական, տնտեսական և քաղաքական յարաբերութիւններ:

Բ. — Երկու ժողովուրդներ դրացի չեն իրարու, բայց երկուքն ալ կ'ազդուին իրարմէ, բայց ան, կրթական, քաղաքական և կրօնական մարպիտու մէջ:



Գ. — Ժողովուրդ մը որ կ'ապրի ուրիշին հպատակութեան տակ, կամ փոքրիկ գաղութ մը կը կազմէ ուրիշ երկրի մը մէջ, ուրիշի իշխանութեան ներքեւ:

Դ. — Երկու ժողովուրդներ կ'ապրին իրարու հետ միասին, երրորդի մը հպատակութեան ներքեւ:

Ե. — Ապագայի մէջ իրականանալիք հազուադէպ օրինակ մը. երբ երկու կամ աւելի ժողովուրդներ կ'ապրին իրարու հետ միասին, բոլորն ալ անկախ, մշակութային և պետական հաստատար պայմաններով:

Լեզուն ըլլալով ընկերային հընոյթ մը, չի կրնար զերծ մնալ այս պայմաններէն:

Երբ նուաճուած ժողովուրդ մը միասնաբար ապրելով կ'ընդունի նուաճողի լեզուն, պէտք է ենթադրել շրջան մը. երբ նուաճուած ազգը երկլեզուեան է. այսինքն կը խօսի թէ՛ արիողնիւրու և թէ՛ իր մայրենի լեզուն: Եւ քանի որ երկու լեզուներ գործածելը մտքի ծանրաբեռնութիւն է, ուստի մէկը կը ջնջուի. ու այդ մէկը կ'ըլլայ սովորաբար նուաճուած ժողովուրդի լեզուն: Ինչ որ ալ պատահի սակայն, նուաճողներու լեզուի ազդեցութիւնը իրենց աշխարհագրական սահմաններէն դուրս չ'անցնիր, մինչդեռ քաղաքակրթութեան ազդեցութիւնը լեզուն իր սահմաններէն դուրս կը տանի: Այսպէս, թուրքերէնի ազդեցութիւնը կը տարածուի թուրքիստանէն մինչև Պալէստինայի և աւելին չ'անցնիր, իսկ յուսնաբանի ազդեցութիւնը սփռուած է ամբողջ աշխարհի վրայ:

ԱՆՈՒՇԱՒԱՆ ՎՐԴ. ԶԳԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 4)



## ՀԻՆ ԷՋԵՐ

S. Ա. Ղ.

Սոյն տաղը, նմանաձայն բառերով յերևրուած, արտագրուած է Ս. Աթոռոյս Թիւ 807 Զեռագրէն, որ օրինակուած է 1732 թուին, որուն համաձայն հեղինակն է Սուլիմա Վարդապետ: Նոյնը կը գտնուի նաև մեր Թիւ 677 Զեռագիր ժողովածոյին մէջ «Օրհնութիւն Ռաւնաւորակերպ» վերնագրով, Աղիսանդր Վարդապետի անունով, և 1734 թուականով: Այս վերջինին կարևոր տարրերով թիւնները կը նշանակենք լուսանցքի վրայ:

Տաղս այս չափեալ ի նըւասեւ, <sup>(1)</sup>  
ի մեկապատը Սուլիմա, <sup>(2)</sup>  
սնուամբ միայն բանասիրեւ,  
սոսկ ձայնութեամբ վարդապետէ: <sup>(3)</sup>  
Ըստ այբուբենից տառից բերեւ  
թէ զինչ սնուն Տեառն կոչեւ,  
ձեզ տեսողաց վիճից ժրեւ  
բանս արգելի <sup>(4)</sup> թերեւս իցեւ:

Այն օրհնութիւն տայ արարչին  
անուր, աներբ, անսահմանին,  
անեղ, անհաս, անքանակին, <sup>(5)</sup>  
անճառ, անբաւ, անվաղջանին: <sup>(6)</sup>

Բնն ըղիւէ բարբառ բանին  
բնութեան <sup>(7)</sup> բարոյ բարեբարին  
բանականաց բաշխող զբարին  
բարեխնամող բազմողորմին:

Գնմն գովէ զգլուխ գոյին  
զեր գերաբուն գերադունին  
գեղազինեայ <sup>(8)</sup> գերաշխարհին  
գտիչ գթած գեղազույնին:

- (<sup>1</sup>) Տաղաչափեալ ի նուասեւ:  
(<sup>2</sup>) Ի մեկապատը յԱղեքսանդրէ:  
(<sup>3</sup>) Սուկաձայնեալ վարդապետէ:  
(<sup>4</sup>) Երգելի:  
(<sup>5</sup>) Անհատ անբաւ անվաճանին:  
(<sup>6</sup>) Անժամ և անկէտ անսկզբանեանին:  
(<sup>7</sup>) Բնութեամբ:  
(<sup>8</sup>) Գերազինեայ:

Դայն դաւանի դատաւորին  
զատող դիտող գործոց ներքին  
դառնացելոց մեղօք դրդին  
դնել հայցէ զգեղ դիրին:

Են երգէ զեռ երանին  
երեքանձնեայ եզականին  
երեքսրբեան երգ՝ երկնային  
եզանակէ յերկնաւորին:

Ջայն զարթուցեայ զամենեսին  
զարմանալ տայ ընդ գործս անքնին  
զինուորութիւնք զուարթնոց զարմին  
զամենազօրն օրհնէ զօրին: <sup>(9)</sup>

Էն է ասէ էականին  
էակցին իւր եւ փառակցին  
որ էն եւ է ըստ կոյս թըլին  
էից էակ եօթանց դասին:

Ըթն ընթադրեալ ընդ ընկերին  
ընտրէ զընտիր ք[ան] <sup>(10)</sup> ընտրողին  
ընծռելով ընծայ ըղծին  
ընդհանրակերտ ընդունողին:

Թօն թարգմանէ գանուռ մեծին  
թագազարդեալ թագաւորին  
թախանձանօք թախծեալ սրտին  
թող Տէր ասէ զմիւս անծին: <sup>(11)</sup>

Ժէն ժամանեալ ժրութեամբ նովին  
ժուժկալ ժրտէ վասն իւր անծին <sup>(12)</sup>  
առ Տէր Յիսուս Հօր միածին <sup>(13)</sup>  
զի կապ մեղացըն լուծանին: <sup>(14)</sup>

Ինք իսկ ասէ իսկականին <sup>(15)</sup>  
եւ ինքնակամ ինքնազոյնին  
ինքն ինքեան ինքնիմաստին  
եւ ի սկզբանց ի սկզբանին:

Լիւումն լոյս լսի լաւին  
լուսեղինաց լուսաստեղծին

լուտացելոց լուացողին  
լուսապայծառ լուսաւորին:

Խէն խոստովան խորոց սրտին  
խօսի գխորհուրդ խնամողին  
խրախոյս խրախճան խնկեալ խայրին  
խաղաղութեան խրատ խոնարհին:

Ծայն ծաւալէ ծիր ծաղկածին  
ծղիք ծիրան ծոցոյ ծննդին  
ծիծաղական ծածկագիտին  
ծախիչ ծննդոցըն ծանակին:

Կենն կամաց կենարարին  
կամակատար կարեկցողին  
կրկնալըտակ կայթուած <sup>(16)</sup> կողին  
կոթող կանգնեալ կաղկանծողին:

Հօրն հետեւեալ հօր հրգօրին  
համարծակի առ հուպ հոգին  
հրաշապարոյր համբոյր հարսին  
հեղիկ հայցէ հառաչագին:

Ջայն ձօնելով ձրաձեռին  
ձեռնածգեալ ձայնարծակին  
ձանձախարիթ ձանձոյթ ձեւին  
ձեռն տուեալ ձիւնացուցին:

Ղատըն ղեկով ղեկավարին  
ղօղորդեալ ընդ ծով կենցաղին  
ղօղանդողաց ղօղեալ ղեղին  
ղամպարափայլ ղորդեալ յերկինս:

Ճէն ճշմարիտ ճանապարհին  
ճօխ ճառագայթ ճաճանչ արփին  
ճակատամուղ ճողոպրողին  
ճպպուճ <sup>(17)</sup> ճաշակ ճարակետողին:

Մենն մաննայ մեզ մարգողին  
մանուկ մատաղն է <sup>(18)</sup> միածին  
մարմնով Մանուէլ մարդկան միջին  
մեծ մխիթար մարդասիրին:

Թին Թիսուսի յարակալին  
յաւէտ յարգիչ յարմարողին  
յոյս յորդորիչ յարկըն վերին  
յաւիտենից յաւիտենին:

(9) Ջի ամ. զօրն օրհնէ էգօրին:

(10) Բանս:

(11) Թող Տէր ասէ զմեզս իմ անծին:

(12) Ժուժկալ ժրտէ առ ժտօղին:

(13) Ժամանակս այս վատ ժայռքողին:

(14) Ժառանգեցօ զկենսն վերին:

(15) Ին իսկ յամէ իսկականին:

(16) Կաթված: (17) Ճպպուկ: (18) մատաղ է:

Նուէն ներքողիչ նորոգողին  
նոյն եւ նրման նախաստեղծին  
նուագունէ<sup>(19)</sup> նիշ ներքողին  
նախախնամող նախնակերտին:

Շայն շարադրէ շարունակին  
շարժուն և անշարժ շարագրողին  
շնչականաց շարժ շնորհողին  
շնորհածիր շնորհազարդին:

Ոն ովսաննայ ողոգումին  
ուրախութեամբ գովէ զորդին  
որդ որդորն<sup>(20)</sup> ողորմածին  
ողբս ողորբէ ողորմագին:

Ձայն չնաշխարհիկ չքնաղ բարին  
չիք չափ բարւոյ չար չունողին  
միշտ յարաժամ հետեւողին<sup>(21)</sup>  
եւ առ բարիս ցանկացողին:<sup>(22)</sup>

Պէն պատմագիր պատուոյ պետին  
պարապարփակ պետականին  
պանծայ պանտուղ պարզեւողին  
պերճապանոյճ պատուականին:

Ջէն ջատագով ջահաւորին  
ջնարաշար ջոկամանին<sup>(23)</sup>  
ջանիւ ջրոյ ջերմ արտասուին  
ջնջիւ ջլլեալ միւր ջովթակին:

Ռան ռաւացի ռահ գործողին  
ռամիկ ռամուտ ռամէ ռետին  
ռոնիկն ռատ<sup>(24)</sup> իւր ծառային  
ռակեցելոց բաշխէ ռարին:

Սէն սրովբէիւ<sup>(25)</sup> սրբասացին  
սարսափելի եւ սոսկալին  
սխրասարաս եւ սքանչելին  
սուրբ սուրբ սուրբ Տէր Սաքաւօթին:

Վեջն վերին վարդապետին  
վայելչակերպ<sup>(26)</sup> վճիտ վիմին

վերամբարծեալ վեհագունին  
վերականցաղ վաղփութունին:

Տիւնն տնտես տիրականին  
տնօրէնութեան Տեառն տօնին  
տննչալի տուր տեղ տարափին  
տարածատիպ տես տննչալին:

Րէն բարունւոյ բննատեսին  
բարունաբար բետոր բամին  
բամեալ բազիկ բախջան բոտին  
բամկականաց բնականին:

Յօն ցնծութեան ցոյցք ցանկալին  
ցօղէ ցնցուղ ցօղ ցաւալին  
ցորբան ց' ըանցեալ<sup>(27)</sup> ցեղ ցուցանին  
ցաւակցութեամբ ցանկ ցնծասցին:

Իիւնն իւթիւ զմեզ իւթողին  
իւսէ իւսմամբ իւս ներքողին  
իւծեալ իւնօք իւսանդ հոգին  
իւսեա իւթս իւթ[ը]աբանչին:

Փիւրն փողէ զփառքս Փրկչին  
փղծկեալ փարի առ փեսային  
փութայ փրկել զփործեալ փրկին  
փայլականփառ<sup>(28)</sup> փայլեալ յարփին:

Բէն Բրիստոսի բաւեցողին  
բարոզ քնար քաղբա<sup>(29)</sup> քրքմին  
քաւ քեզ Բրիստոս քննիչ սրտին  
քանցել անքաւ զանքաւելին:<sup>(30)</sup>

Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ



(19) Նուագանուէր: (20) Որթ յորջորջեալ:

(21) Ձարչարանօք անչարչարին:

(22) Ձանարդ չարեաց չուտս յերկին:

(23) Ջնարանար ջոկ ամենին:

(24) Ռոնիկ առատ: (25) Սերբէք:

(26) Վայելչաւեւ:

(27) ցանցեալ:

(28) Փայլահնափայլ:

(29) քաղբան:

(30) Տաղս այս չափեալ աւարտեցաւ:  
Հաղար հարիւր թիւ ցանգեցաւ:  
Երբեայտանիկ մօտ հոգեւորիկն բարդեցաւ:  
Եւ երեքիկ ընդ այսոցիկ չաղկապեցաւ:

## ՊԵՏՐԱԿԱՆ

### ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԸ ԷԶՄԻԱԾԻՆ (\*)

Էջմիածինը Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մայր Տաճարն է և Ամենայն Հայոց կաթողիկոսի Աթոռանիւսը: Յետապայտում իր անուշով կոչուեց նաև այն քաղաքը, որի սահմաններին մէջ շինուած էր Մայր Տաճարը: Պատմական անցեալում Էջմիածինը կոչուում էր նաև Վաղարշապատ:

Քաղաքը հիմնուած է Վաղարշակ թագաւորի օրով (140—117 թ. Ք. առաջ), հին Վաղարշապատի տեղում, հրրորդ և երկրորդ (Ք. առաջ) դարերի սկզբում, այսպէս կոչուած Շրէշ—Բլուր բարձունքում, Վարդգէսի ջանքերով՝ որը Արարատեան թագաւորական ընտանիքի փեսան էր:

Տրդրան Բ. (95—55 Ք. առաջ) թագաւորի օրով այստեղ հաստատուած էին հրէական այն զաղթականները, որոնք տեղահանուած էին Պաղեստինից իր արշաւանքի պատճառով:

Հայ գասական—պատմաբան Մովսէս Խոբնեացին, գրելով Վաղարշապատի հիմնադրման մասին, պատմում է որ Վաղարշակ թագաւորը քաղաքը շրջապատեց պարիսպներով, խրամատներով և անուանեց զայն Վաղարշապատ՝ ինչպէս նաև նոր—Քաղաք: Այսպէսով Վաղարշապատն իր հիմնարկութեան օրից օժտուած էր պարիսպներով, խրամատներով և ուրիշ պաշտպանողական

(\*) Սոյն յօդուածը աւուում է «Ա. Էջմիածին» իտաղուում պատկերազարդ գրողէ մը՝ հրատարակուած ճարտարապէս Պր. Վ. Յարութիւնեանի ուսումնասիրութեան ի Մոսկու, 1958ին, Ռուսերէլ լեզուով: Գրողը 40 գեղեցիկ յաւանկարներով մի պատկերայն ապշու է: Ան ծանօթացնում է մեր փառաւոր յուսարձանների պատմական անցեալը եւ ներկայ դրութիւնը:

Փափաքեմի պիսի լինէր որ նման մի աշխատանք իր ամբողջութեան մէջ հրատարակուէր նայեւեկ լեզուով: Գրին Յաղաքաբանը (էջ 5—22, երկու մասերէ կը բաղկանայ): Առաջին մասը վերաբերում է Վաղարշապատի կառուութեան ժամանակներին: Երկրորդ մասը, որ դեռ թարգմանուած չէ, մամբամանօրէն անգրադաւումում է Մայր Տաճարի լիւ պատմութեան եւ ճարտարապետական մամբամանօրէններին:

Ծանօթ. Թարգմանիչ

միջոցներով, որոնք բնորոշում էին հնագործական քաղաքների պաշտպանողական եւ պահակը:

Մի ուրիշ հայ պատմագէտի՝ Ազատանգեղոսի ահղկութիւնների համաձայն, քաղաքի պարիսպները օժտուած էին մուտքի դուռներով, որոնք ուղղութիւն էին տալիս քաղաքին մօտեցող ճամբաներին: Այդ դուռներից մէկը բացուում էր այսպէս կոչուած Արտաշատի գլխաւոր ճամբուն վրայ, իսկ ուրիշները յատկապէս հարաւային կողմերը բացուում էին զէպի գետը եւ նրա վրայ դրածուող կամուրջը: Հարաւային կողմից քաղաքը պաշտպանուած էր խորունկ խրամատով, որը կոչուում էր «Փակէն—փոս» և հեղեղում էր Մեծամօր գետի ջուրերով: Այս լճացած ջրերը պաշտպանում և ներփակում էին քաղաքը հարաւ—արեւմտեան կողմից և ամենայն հաւանականութեամբ մեծ գիր են խաղացել քաղաքի պաշտպանութեան գործում:

Հիւսիս—արեւելեան կողմից, քաղաքի պարիսպներին բաւական մօտ, տարածուած էին ընդարձակ խաղողի այգիներ, որոնք մեծ գիր էին խաղացել քաղաքի տնտեսական կեանքում: Տրդատ Գ. թագաւորի (273—330 Ք. յետոյ) պաւտը գտնուում էր քաղաքի բարձր մասում, որը շրջապատուած էր պարիսպներով: Բացի պաւտից, այնտեղ կային նաև ուրիշ շէնքեր՝ որոնք իրարու հետ կապուած էին պարիսպից ներս գտնուող փողոցներով:

Այսպէսով, Վաղարշապատն ինքն իրեն կառուցուածքով ներփակում էր քաղաքաշինական արհեստի յատկանշական գծեր, որոնք նմանուած էին Արարատեան ուրիշ քաղաքների ձևին: Պաշտպանութեան ձեւը պարունակում էր պարսպային շրջափակերո, հողային թուրքեր, խրամատներ և փոսեր՝ լեցուած ջուրով:

Եթէ նկատի առնենք այն հաղամանքը որ Վաղարշապատը օժտուած չէր բնական պաշտպանողական միջոցներով և դիրքով, ինչպէս պատմական Հայաստանի մի շարք ուրիշ քաղաքները, ապա վերսրիշուող պաշտպանողական միջոցները — ամրութիւնները — մեծ գիր պիտի խաղացած լինին քաղաքի պաշտպանութեան և ապահովութեան գործում:

Այս դրութիւնը անպայմանօրէն գնահատութեան է արժանացել Հռոմէականացիներին կողմից, որոնք Արտաշատի կրկնակի աւերածումից յետոյ, 163 թուին, հաստատուեցին Վաղարշապատում և կոչեցին զայն Keine Polis և յայտարարեցին որպէս Հայաստանի մայրաքաղաք։ Դառաքի պատմութեան այս դարձըմանի մասին, քացի անմիջական պատմագրական յիշատակումներով, մեզ պատմում և ապացուցում են Տնայած յուշարձաններին վկայութիւնները, որոնցից ամենաշատ հետաքրքրութիւն են յայտարարում երեք քարերի վրայ փորագրուած արձանագրութիւնները։ Արանցից մէկը յունարէն է և միւս երկուսը լատիներէն։ Եւրոպէնը գիրեզմանաքարի արձանագրութիւն է նշնեցիալին ուղղուած, իսկ Տնայած երկու լատիներէն արձանագրութիւնները նուիրուած են քաղաքում հաստատուած հռոմէական բանակի արած շինարարական աշխատանքին։ Այս գործունէութիւնը երկար չէ տեւած սակայն վերսկսուած հայկական ապստամբութիւնների ճնշումից և Արտաշատի կործանումից յետոյ, որ տեղի ունեցաւ Մարցիոս Վերյի հրամանատարութեամբ։ Այս ապստամբութիւնները տեւեցին մինչև 185 թուականը։ Տնայած այդ արձանագրութիւնները չեն նշում շինարարական աշխատանքների տեսակի և չափի մասին, բայց պիտի ենթադրել որ այդ տեղում հաստատուած Հռոմէական բանակը վերականգնեցրել և կատարելագործել է զինուորական կեդրոնը՝ ըստ հռոմէական սովորական մեթոտների։

Վաղարշապատի նշանակութիւնն աւելի ուժեղացաւ և զարկ առաւ երբ Հայաստան պաշտօնապէս ընդունեց քրիստոնէական կրօնը 301 թուին։ Այսպէսով Վաղարշապատը դառնում է ոչ միայն մայրաքաղաք վարչական տեսակէտով, այլ նաև հոգեոր կենդրոն։

Քաղաքի կենդրոնում բարձրանում է Ս. Էջմիածին Եկեղեցին, ինչպէս և Գայլանէ, Հսիփսիմէ և Շողակաթ մատուռները։

Այս նոյն շրջանում սկիզբն է առնում և տարածում աւատապետական դրութիւնը, որը իր կարգին անգրագոնում է աւատապետական քաղաքակրթութեան տարածման և կազմակերպման։ Մեծագոյն

դէպքը որ տեղի ունեցաւ այս շրջանում, Հայերէն տառերի գիւտն էր Մեսրոպ Մաշտոցի միջոցաւ, Դ. դարի վերջում՝ որն իր կարգին պատմանդան եղաւ Ե. դարի պատմագրական և գրական առաջացման։

Երկրի զարգացումն իր ամբողջութեան մէջ ընթացել և գունաւորուել է արեւելքի և արեւմուտքի յափշտակչների գրաւումների պայքարով, որն անշուշտ արգելք և սպառնալիք է հանդիսացել նրա խաղաղ և արդիւնաւէտ կեանքին։

Պարսից թագաւոր Շապուհ Բ-ի յարձակումների շրջանում, 364-369 թուերին, հայկական մի շարք քաղաքներ, որոնց թւում նաև Վաղարշապատը, կործանման ենթարկուեցին։ Այս պատճառով, հայերը Ե. դարում Մայր Աթոռը փոխադրեցին Դուին՝ որպէս նոր մայրաքաղաք։

Մշտական և անհաւասար պայքարները շատ թուլացրին Արշակունեան թագաւորութեան կեցումը, որը վերջնականապէս վերջ գտաւ 429ին։

Այս դէպքից յետոյ, Հայաստանը մըրցակցութեան դաշտ է դառնում Սասանեան Պարսկաստանի և Բիւզանդական կայսրութեան միջև, որի անմիջական հետեանքն եղաւ Հայաստանի քաժանուում Արեւելքի և Արեւմուտքի մէջ։ Այս բոլոր կորուստներից, կործանումներից յետոյ էլ ազատասէր և անյաղթելի Հայ ժողովուրդը շարունակեց իր անհաւասար բայց հերոսական պայքարն իր ազատութեան և անկախութեան համար։ Ժողովրդական ապստամբութիւնների շնորհիւ (451, 481, 485 թ.), Պարսից տիրապետները ստիպուած եղան հրաժարելու իրենց անկուշտ, բռնակալ և կործանարար գործունէութիւնից և ճանաչեցին Հայաստանի ներքին անկախութիւնը։ Պարսիկների այս նոր քաղաքականութիւնը Հայերին հնարաստութիւն տուեց հետեւելու իրենց յառաջդիմական գործունէութեան։

Եթեկերորդ դարը յայտնի եղաւ իր շինարարութեամբ։ Այդ զարթոնքի մի շրջան էր, բնորոշուած իր աւատապետական ճարտարութեամբով։ Էջմիածնի Տաճարը հիմնական վերաշինութեան ենթարկուեց։ Հսիփսիմէի, Գայլանէի և Շողակաթի մատուռների փոխարէն հաստատուեց եկեղեցիներ շինուեցան։

Հուարթնոցի հոյակապ շէնքը կառուցուեց անյախի մի ծրագրով, որ նա միանոյն ժամանակ ներփակում էր իր մէջ ներառէ Պ. Ի. Վիհարան-Պալատը, ուր և է. զարր կէսերում կաթողիկոսի աթոռանիստը Դուրից փոխադրուեց և հաստատուեց:

Եօթներորդ զարր կէսում տեղի է ունենում Հայաստանի գրաւումը Սրաքնիւրի կողմից: Սրան յաջորդող զարրի շրջանում Վաղարշապատը պատմագրութիւնների մէջ աւանդականօրէն յիշուում է որպէս քաղաք. որովհետեւ նա կորցրել էր այլևս իւր առաջուան փառքն ու ազդեցութիւնը:

Իսկարատուեանց Հարստութեան շրջանում (ժ. - ԺԱ. դար), երբ Հայերն ազատուեցին Արաբական լուծից. Վաղարշապատի մէջ նշուում է որոշ շինարարական գործունէութիւն և զարթոնք, բայց այն էլ ԺԴ. դարում, Մանդուկան արշաւանքների հետեանքով, երկար չի տեց և Վաղարշապատը նորից անկումի և կործանման ենթարկուեց: Մայր Տաճարը հրդեհի և կողպուտի ճարակ եղաւ, բնակիչների կէսն էլ բնաջնջման ենթարկուեցին: Այս արհաւիրքի բերումով, կաթողիկոսական Սթոուր Կիրիկիա փոխադրուեց:

ԺԵ. դարից սկսած, նորից սկսում է իշխմամբն վանքի վերակենդանութիւնը. այն էլ այն հնագիտական, որ 1375 թուին Կիրիկիայի թագաւորութեան անկման պատճառով, Մայր Աթոռը նորից Ս. Էջմիածին է փոխադրուում: Կիրիկիայ իշխանութեան անկումը պատճառ եղաւ նաև հոն գտնուող Մայր Աթոռի ազդեցութեան թուլացումին և ոչնչացումին մայր երկրի զանգուածների մէջ: Քաղաքական որոշ հաշիւներով թուրք-մենական տիրապետները, որոնք հաստատուած էին Սրահումում, յարմար համարեցին վերակենդանացնել Հայկական Սկիզբիցին և օգնել վերակառուցելու Էջմիածինը իր իսկ սահմաններին մէջ: Այս շրջանում վերաբացում, վերակենդանանում են հայկական եկեղեցիները, կատարում են շինարարական աշխատանքներ, աւերում են Սրահ Աթոռի կուսակցութիւնը, ինչպէս և զարգանում է վանքի իւրաքանչեւ տնտեսական վիճակը:

Պարսկական կառավարութեան անտանելի լուծի տակ, ԺԶ. դարուց սկսած, հայ

ժողովուրդի կրօնական, կրթական, հոգեկան կենդանի Էջմիածինը շարունակեց իր առաջնորդող դերը հայութեան տարող պատմութեան ընթացքում և կամոց կամաց վերստանալու իր նախկին ժողովրդականութիւնը:

1828 թուին, Սրահումում Հայաստանը գրաւուեց Ռուսաստանի կողմից և սրանով վերջ գտաւ բազմադարեան պարսկական տիրապետութիւնը, որն իր հերթին մի կարևոր անկրկնապարծ էր իայ ժողովուրդի պատմութեան և կեանքի համար: Այս պայմանների թերութիւնով, տնտեսական ընդհանուր վերելքի ընթացքում սկսուեցին զարգացման ուղիի մէջ մանիլ Երևանը, Արեւիկան, Սրահումը, Վաղարշապատը և ուրիշ քաղաքներ: Սրանց հետ միասեղ զարգանում է նաև Էջմիածնի տնտեսական, հոգեւոր և կրթական ուժը, ինչպէս և իր ժողովրդականութիւնը:

Նին Վաղարշապատի և միջնաբերդի ճշգրիտ սահմանները դեռ չեն յայտնաբերուած, սակայն ենթադրուում է որ նա գրաւում էր ներկայ Էջմիածնի տեղը:

Մովսէսական իշխանութեան տակ, Վաղարշապատը դառնում է հանրապետութեան շրջանային կենդանիներից մէկը և զգալիօրէն փոխած է իր արտաքին տեսքը: Ընդհանուր շինարարական և վերակազմման ծրագրերի կիրարկումով, Էջմիածինն այժմ կերպարանափոխուած է: — Քաղաքի վերահիշուեցնում ծրագրերը կազմուած էին 1939 թուին՝ ճարտարապետ Ս. Մանուկեանի միջոցով. սակայն ներկայիս, հսկայ առաջացման չափին նայելով, նախկին ծրագրերը անբաւարար է նկատուում և այդ պատճառով փոփոխութիւնների պէտք է զգացուում:

Քաղաքի զլխաւոր պողոտաների վրայ, Միասնիկեանի և Աթաբէգեանի անուններով, կառուցուած են մեծ քանակութեամբ բնակութեան և հանրային սպասարկութեան շէնքեր: Նրանցից շատերը օժտուած են ճարտարապետական բարձր որակով, ինչպէս, օրինակ՝ Կոլխոզների կրթական տունը, Կուսակցական, շրջանային ճանապարհների գրասենեակը, և այլն:

Նին թաղերի վերանորոգութեան ընթացքին, նորարաց պողոտաների վրայ շինուել

## «ՍԻՈՆ»Ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### Ս Ի Ջ Ի Ն Ք

Թէհրանէն Պր. Մ. Ս., Սիոնի կմբա-  
գրութեան ուղարկած իր փետր. 16 թուա-  
կիր նամակին մէջ կը գրէ.

«Կը փափաքեմ իմանալ Միջինք բուսա-  
ծը, այսինքն մեծ պահքի ճիշդ մէջնեղի  
չորեքշաբթի օրը, կրօնական, եկեղեցա-  
կան տեսակէտով ի՞նչ նշանակութիւն  
ունի կամ կրնայ ունեցած ըլլալ անցեա-  
լին մէջ. հաւատացեալ հայ ժողովուրդին  
որ եւ ըսն կը թելադրէ՞ կամ կը պար-  
տադրէ՞ այս առթիւ. ի՞նչ են եղած ընդ-  
Պանրոպէս մեր աւանդական սովորու-  
թիւնները այս օրուան համար եւ այլն:  
Նաեւ կարելի՞ է ընդունիլ այս օրը իբր  
ուրախութեան եւ խրախմանքի օր նոյն  
իսկ անոնց համար որոնք ոչ ծոմ է ոչ  
ալպահք պահած են մեծ պահքին օրերը:  
Շատ շնորհապարտ պիտի կացուցանէք  
զիս եթէ բարեհաճէք այս մասին փոքր  
բացատրութիւն մը տալ Սիոնի յառաջի-  
կայ մէկ թւին մէջն:

են հանգստաւէտ բնակարաններ, Նիկիային  
էջմիածնի բնակչութեան թիւը հասնում է  
մօտ 20,000-ի:

Քաղաքի գետինների վրայ տեղաւոր-  
ուած են «Ելիսոփ Միլիոնատէր» եւ մի քանի  
արդիւնարեւրական ձեռնարկներ, շրջանային  
եւ բաւական թուով կրթական հիմնարկներ,  
ինչպէս Մանկավարժական Տիւնիկուսը եւ  
երաժշտական դպրոցները: Մշակութային  
զարգացման հիմնարկների շարքում կարելի  
է նշել Կոլիսոփ (Մշակոյթի Տունը, բանաս-  
տեղծ Յովհաննէս Յովհաննէսեանի Տուն-  
թանգարանը, սինէմայի շէնքը եւ հանրային  
պարտէզը՝ մշակոյթի եւ հանգստի համար):  
Այսպէսով, էջմիածինը վերափոխուում է եւ  
դառնում Հայաստանի Հանրապետութեան  
ծաղկող քաղաքներից մէկը:

ՎԱՐՍԱՋԻԱՏ ԹԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ  
(ձարսարապէս)

Թրգմ. ԳՐԻԴՈՐ ԱԼԵԱՆԱՔՔ՝ Պաղտս

Յարգելի նամակագրին հարցադրու-  
թիւնը չափով մը գոհացուցած ըլլալու  
համար կու տանք հետեւեալ ծանօթութիւն-  
ները եւ բացատրութիւնները:

Եկեղեցական տեսակէտէ Միջինքի չո-  
րեքշաբթի յիշատակելի է անով որ ա՛յդ  
օր կը սկսի երգուիլ մէկ տուն ստեղի  
շարական խաղաղական ժամերգութեան  
վերջը:

Աղաղակական տեսակէտէ կ'արժէ յիշել  
թէ կորէ մը հոյակապ գաւառներու մէջ  
սովորութիւն կար որ նշանուած երիտա-  
սարդներու տուններէն իրենց հարսնե-  
ցուին տունը փոքր նուէր մը կը զրկուէր  
այդ օրը: Կրնե՞ն ալ կը պատրաստէին  
պահոց յատուկ քաջառիկ կերակուրներ,  
մանաւանդ անուշեղէններ, կամ հատիկ  
— խաշած ցորեն — խառնուած ընկոյզով  
եւ շաքարով:

Միջինքի յատուկ ուրախութիւնները  
իրաւունքն են անոնց՝ որոնք պահքի եւ  
արամութեան օրերը կէս ըրած են եւ հասած  
յիշատակելի հանգրուանի մը: Իսկ անոնք  
որոնք մեծ պահքի շրջանին ոչ ծոմ է ոչ  
ալ պահք պահած են մինչեւ այդ օր, եթէ  
այդ օրը իրենց սովորական սահմանազանց  
խրախմանքներէն հրաժարելով ուղեն մաս-  
նակցիլ պահեցողներուն օրինակսը ուրա-  
խութեան, այդպիսիներուն մասնակցու-  
թիւնը կարելի չէ մերժել: Թերեւս ասիկա  
առիթ մը կը հանդիսանայ որ իրենք ալ  
խառնուին պահեցողներու խումբին եւ միտ-  
սին շարունակեն պահել մինչեւ Զատիկ:

Հաւատացեալ հայ ժողովուրդին ուղ-  
ղուած թելադրութիւն մը եթէ ուզենք  
գտնել Միջինքի մէջ, այդ պիտի ըլլար  
յարատեւութիւն պահեցողութեան մէջ,  
զգուշանալով ոչ միայն արգիլուած կե-  
րակուրներ ձուլակելէ, այլ նաեւ զգուշա-  
նալով արգիլուած խօսքեր — հայոցու-  
թիւն, անէծք, սուտ, երգում եւ այլն —  
արտաբերելէ, եւ արգիլուած գործեր —  
գողութիւն, յափշտակութիւն, կռիւ եւ  
այլն — ընելէ: Եւ այսպիսի պահեցողու-  
թեան մը թելադրութիւնը կը կարծենք  
թէ անարժէք չէ:

Ն. Ե.

## Ս. ՅԱՎՈՐԻՆ ԴԵՐՍԵՆ

### ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Հեռահայր տրոբերենէ բարգմանեալ պատկերներ է Տ. Փետր. Յ. Սուրեն Արեւիկայի կողմէ, Արարական (Ջարթովի) սօնին առիթով, Նորին Վեհ. Հիւսէյն Թագաւորին ուղղուած հեռագրին. —

«Յանուն իմ, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի Հայ համայնքին, կը ներկայացնեն Ձեզ ջերմ շնորհակալութիւններ՝ Արարական Ջարթովի սօնին առիթով, մաղթելով Ձեզ երկար եւ երջանիկ տարիներ եւ մեր սիրեցեալ Յորդանանին բարգաւաճում եւ ճարտար նշանակութիւններ ընդ հովանեալ Հաշմուկեան փառապանծ Գահին, Ձերդ Վեհափառութեան անցեղ առաջնորդութեան եւ Յորդանանի իմաստուն Կառավարութեան»:

ՍՈՒՐԵՆ ԱՐԵՎԻԿԱ. ՔԵՄԱԶԵԱՆ  
Տեղապահ Պատրիարքութեան Հայոց  
Նոնապետին

Հեռահայր տրոբերենէ բարգմանեալ պատկերներ է Տ. Փետր. Յ. Սուրեն Արեւիկայի կողմէ, Բաղրաբի Վեհ. Կառավարչին ուղղուած հեռագրին, անոր շնորհակալութեան առիթով. —

«Յանուն իմ, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի Հայ համայնքին, կը շնորհակալուեմ Ձեզ Վեհափառութեան յայտնաբերեալ Ձեր վայելած ամբողջական վստահութեան համար, որուն շնորհիւ արժանացած էք Կ. Կարգի «Ջարթովի» շնորհակալութեան, եւ կը մաղթեմ Ձեզ նորանոր յաջողութիւններ ընդ հովանեալ Նորին Վեհ. Հիւսէյն Թագաւորին»:

ՍՈՒՐԵՆ ԱՐԵՎԻԿԱ. ՔԵՄԱԶԵԱՆ  
Տեղապահ Պատրիարքութեան Հայոց  
Նոնապետին

Ի պատասխան, Գերշ. Տ. Սուրեն Արեւիկայ. ստացած է հեռահայ գրութիւնը. —

«Հասան Քերիպ, Կառավարչի Նոնապետին եւ Մոնաքի Սուր Տեղեաց, իր շնորհակալութիւնները կը յայտնէ Ձերդ Մրցակցութեան, Ձեր բարեմաղորութեանց համար: Թող Աստուծո շնորհէ մեզ յաջողութիւն մեր երկրի ծառայութեան նուիրում մեր գործերուն մէջ, մեր սիրեցեալ եւ փառապանծ Թագաւորի հովանիին ներքին»:

Փետր. 16 իմ, Գերշ. Տ. Սուրեն Արեւիկայ. շնորհակալութեան գրեք ուղղեց հեռահայ Արարական Ջարթովի սօնին առիթով, իրենց աստիճանի բարձրացման առիթով. —

Ն. Վեհ. Շերիք Մոհամմէ Հաւելի, Մէյնք-ճէ-ճէրայի դիրքին, եւ Ն. Վեհ. Քաղէմ Ապու Ղազարի, Մոհամմէ Սուրէյմաթի եւ Անիկ Պապանի իրենց «Գրիկապետի» աստիճանին բարձրացման առիթով:

Ջարեն տալ ստացուեցան փոխադարձ շնորհակալագրեր:

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 3 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասերան մէջ, ժամատարին էր շոգը. Տ. Ներսէս Վրդ.:

● Բշ. 4 Յուն. — Կէսօրէ վերջ, շքեղօրէն դարգարուած Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ վաղուան տօնին հանդիսաւոր Նախատօնակը՝ Գերշ. Տ. Սուրեն Արեւիկայի Նախագահութեամբ, Արարողութեանց աւարտին, «Որհնեցեք զՏէր» շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

● Գշ. 5 Յուն. — Ս. Դարի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեքոր տօնին առթիւ, Գերշ. Տ. Նորայր Նայ. Պողոթեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ եւ քաղեց, մաղթանքներ ընելով Ս. Աթոռայ պաշտօնութեան անաստօնութեան համար: Ըստ սովորութեան, Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռայ բոլոր հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար, Նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրեն Արեւիկայի:

● Գշ. 6 Յուն. — Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ Ս. Ասեփանապի հանդիսաւոր Նախատօնակը՝ Գերշ. Տ. Սուրեն Արեւիկայի Նախագահութեամբ: Տօնին բարձրակարգ վարդապետներն էին շոգը. Տ. Ներսէս Վրդ. Բապուհեան եւ շոգը. Տ. Դարիք Վրդ. Սահակեան:

● Եշ. 7 Յուն. — Ս. Ասեփանապի նախակալին: Առատօտեան ժամերգութեան պահուն, կատարուեցաւ Սարկաւազաց մանաւար հանդէսը: Ա. Նալը, Թիւով չորս, եւ չորս Ուրարակները, առաջնորդութեամբ երկու բուրժանակիր վարդապետներուն, մարգարտագրով սաղաւարտեց ընդ երթաթագամ չափկներով զգեստաւորուած, տապանակ եւ բուրժան ի մեղին, հատարեցին ժամերգութեան վերջին բաժինը, Կոտաքի բարձունքին սկսեալ մինչև Ս. Պատարագի սկիզբը: Հանդիսութեան կը Նախագահէր Գերշ. Տ. Սուրեն Արեւիկայ. Ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Մայր Տաճարի առանկատան Ս. Ստեփանոսի խորանին վրայ Պատարագեց շոգը. Տ. Դարիք Վրդ.:



- Ուր. 8 Յուն. — Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ Գլխաւոր Առաքելոց՝ Պետրոսի եւ Պողոսի հանդիսաւոր նախատօնակը՝ Գերշ. Տ. Սուրբէն Արքեպօս. նախագահութեամբ:
- Եւր. 9 Յուն. — Ս. Պետրոսի եւ Պողոսի առաքելոց տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի մէջ, Կատարել վերնամասերէն մէջ՝ ժամաւարն էր Լոզշ. Տ. Օհան Արք.:
- Կիր. 10 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լըքշտակապետի ժամաւարն էր Լոզշ. Տ. Մաշտոց Վրդ. Ռարիլուսեան: Քարողից Լոզշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղիւսեան: Ս. Պատարագի ընթացքին, Ս. Թարգմանչաց Վարժարանի բովանդակ ուսանողութիւնն ու ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ տարբար վարժարաններու հայ ուսանողները ստացան Ս. Լազարոզութիւն:
- Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ հանդիսաւորապէս պաշտօնեցաւ Ողորդ Ռոսմամ տօնի նախատօնակը՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրբէն Արքեպօսկոպոսի:
- Բշ. 11 Յուն. — Տօմ Ս. Ողորդն Ռոսմամ: Թուրան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Գլխաղորի մատարն մէջ մատուց. է բարոզից Գերշ. Տ. Սուրբէն Արքեպօս. Տէմանեան, խօսելով օրուան տօնելի երկու ուղիներուն մասին ու հայեցում Ս. Գլխաղորի պաշտպանութիւնը վանական այս Սրբազան Հաստատութեան վրայ: Յետ Ս. Պատարագի, Գերշ. Սրբազան տաղանջովանի Ներքեւ, Ս. Խաչափառքի մատուցելի ձեռնին, նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած եւ աղագարձ մեծանշանդէս թափօրին, որմէ ետք Միաբանութիւնն է ժողովուրդ ընդէն յետ: Թանջ շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատարագարանին դահլիճը, ուր Գերշ. Սրբազանը իր օրհնութիւնը տալէ ետք բաշխեց բոլորին մէկական Ս. Պատարագի նշխար:
- Եշ. 14 Յուն. — Կաղանջ: Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագից ժամուրնը Լոզշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Քարողից Լոզշ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան, մաղթելով որ աստուածային իմաստութեանն է սիրոյ յոյսով պայծառանան բոլոր սիրտերը, որպէսզի նոր տարին նշմարիտ խաղաղութեանն է սիրոյ երջանկութիւնը բերէ աշխարհի: Ս. Պատարագի աւարտին, Միաբանութիւնն է ժողովուրդ շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատարագարանը, ուր Լոզշ. Տ. Կիրեղ Վրդ. ի գլխից Միաբանութեան, շնորհաւորական խօսքեր ուղղեց Գերշ. Տ. Սուրբէն Արքեպօս. Ապա, Ընծայարանի է ժառ. Վարժարանի ուսանողութեան ի գլխից, Ուրարակիր Տիր. Զաւէն Գալայեան կարգաց խնամուած ուղղեց մը՝ շնորհաւորելով Միաբանութեան նոր Տարին, որմէ յետոյ, Ս. Թրգմ. Վարժարանէն փոքրիկ մը ժողովութեան ընդ միասնորի պաշտան կարճ ուղիքի մը արտասանեց: Ժառանգաւոր տանին, Պր. Ասանկ Գալայեանին ղեկավարութեամբ, երգեցին Ամանորի ձմեռած երկու երգեր: Ամենէն ետք խօսք առաւ Գերշ. Տ. Սուրբէն Արքեպօս., որ աւուր պատշաճի շնոր-

հաւորական արտայայտութիւններէ ետք կոչւեցաւ Միաբանութեան որ միակամ գործակցութեամբ նուիրուին ազգային - հոգի որ այս Տան պայծառութեան, աւարտեց իւրորին մէկական ներքին:

● Կիր. 17 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Կարուսթիւն, մեր վերնամասերէն մէջ, Պատարագից է քարողից Լոզշ. Տ. Ներքեւ Վրդ. Պապանքան, յայտնելով թէ ինչպէս որ բուսական է կենդանական աշխարհի մէջ կայուն վիճակ չկայ, այլ բնական երեւոյթ է աճումը, աշխատէ ալ քրիստոնէի հոգեկան աշխարհէն ներս պէտք է որ շարունակ տեղի ունենայ նման յառաջխաղացք մը՝ լաւէն ղեպի լաւագործն ու կատարելը:

● Բշ. 18 Յուն. ճաղալոյց Ս. Ծննդեան: Ս. Ծննդեան տօնը այս տարի եւ կատարուեցաւ աւանդական կարգով: Առաւօտեան ժամը 10ին, Միաբանութիւնը, զխաւաքութեամբ Գերշ. Տ. Սուրբէն Արքեպօս., ինքնաշարժեալ թափօրով ուղևորեցան ղեպի Անթիպէմ, առաջնորդուած զինուորական ինքնաշարժով: Երկինքը պայծառ էր և օդը տաքուէլ ու համեղին: Անթիպէմի հին և նոր համբարներու միացման կէտին: Անթիպէմի է շրջակայ գիւղերու մասիներէն զիմաստութեան եկած էին, որոնք իրենց յարգանքը մատուցանել ենք Գերշ. Տ. Սուրբէն Արքեպօս. ի, պատուասիրութեան ըմպելով: Ապա օրհնութեանը և աւելի երկար շարանով մը ճամբան շարունակուեցան: Այս կէտին, չորս զինուորական ծառարաններ ընդհարացան թափօրապետ Սրբազանի կողքին: Զանգակներու ղողանջին հետ է ժողովուրդի բազմութեան ընդմէջէն պատկանելի այս թափօր մասը գործեց Ս. Ծննդեան կողքը՝ երգելով ժորհուրդ մեծ շարականը: Դիմաստութեան եկողներ պատուասիրութեան վանուց տես շարանի մէջ:

— Կէսօրէ վերջ ժամը 2.30ին կատարուեցաւ շարափառով հանդիսաւոր մատք Ս. Ծննդեան Տաճար: Ս. Այրի ուխտէն ետք, Տաճարի հայկական բաժնին մէջ պաշտօնեցաւ ճրագաւոյցի արարողութիւն, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Այրին մէջ, ժամաւարն էր Լոզշ. Տ. Օհան Արք. Գալայեան: Ապա պաշտօնեցաւ Սուրբ Ծննդեան նախատօնակ՝ որմէ ետք ժորհուրդ մեծն երգելով Միաբանութիւնը բարձրացաւ մեր վանքի մատուղը, յետոյ իշաւ սեղանատուն՝ ընթրիքի:

— Գիշերուան ժամը 10ին սկսաւ առաւօտեան պաշտամունքը Տաճարի հայկական բաժնի մէջ:

● Գշ. 19 Յուն. — Ծննդեան եւ ՅԱՅՏՏՆՈՒԹԻՒՆ: Կէս գիշերին, Միաբանութիւնն է ներկայ հաստացանքին իշաւ Ս. Այրը՝ ուր կատարուած արարողութիւններէն մաս մը, մէկ ժամուան տեսողութեամբ, ձախսափուեցաւ Յարգանքի շաշմաղան Ռատիօկայանի միջոցաւ, որու ընթացքին Գերշ. Տ. Սուրբէն Արքեպօս. տուաւ իր պատգամը՝ որ կ'երկն Սրբին ներկայ թիւի սկզբը և որ ուղղուած է Լայց. Եկեղեցւոյ բոլոր զաւակներուն, ի Յարգանքն և ի սփիւռս աշխարհի, և ապա վերադարձաւ Երուսաղէմի իսկ մնացեալ ա-

րարողութեանց նախագահեց Գերշ. Տ. Առողիկ Նպու, որ, Տաճարի մեր բաժնին մէջ, Հոգը. Տ. Յովսէփ Վրդ. է մատուցեալ Ս. Պատարագէն յետոյ, հանդիսապետեց Ջորճնէքի արարողութեան, քարոզեց օրուան տօնին շուրջ՝ ներկայացնելով Քրիստոսի Մննչը իբրև տիեզերքի պատմութեան կարեւորագոյն անկիրնագործը և առաւօտեան դէմ մատոյց հանդիսաւոր Ս. Պատարագի տրեւածագին՝ Ս. Մննչեան հայալմանքին մէջ կատարուած Աւետարանի ընթերցումով։

— Սոյն արարողութեանց, ըստ աւանդական սովորութեան, ներկայ գտնուեցան Երուսղէմի Վոնմ. Կառավարիչը, Ընդհ. և Հին Քաղաքի Ոստիկանապետները, Բնթղիկի Գալմազմն ու Ռոտիկանապետը, ինչպէս նաև Անկիթան Գերշ. Արքեպիսկոպիտը՝ իր հետագործերով և Քրիստանական Հիւպատոսարանի կազմէն ներկայացուցիչներ։

— Ժամը Տիւն, ինքնաշարժեալ Նոյն Թափօրով, Միաբնութիւնը վերադարձաւ Երուսղէմ ուր հառու ժամ մը ետք ու բարձրացաւ Պատարագարան, ուր Գերշ. Տ. Սուրէն Արքեպիս. և Միաբնութեան անու մնացող անդամները ընդունեցան եկեղեցիներ, օրոնք, Պատարագիչ Գերշ. Տ. Առողիկ Նպու. Հաղարեանի բարեմով, բերին Ս. Մննչեան աւետիւրը։ Ապա, Գերշ. Տ. Սուրէն Արք. Վարդապետի ղեկավարեց աղանդեց ամենքը, Երուսղէմի մէջ, Ս. Մննչեան ձրադարձոյցի արարողութիւնները կատարուեցան, ըստ սովորութեան, Ս. Յարութեան Տաճարին մէջ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, Պատարագեց Հոգը. Տ. Դուսիկ Արք.։ Ապա Ս. Գերեզմանի առեանին մէջ պաշտուեցաւ Ս. Մննչեան նախատեսակը՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Նպու, որմէ ետք Տաճարի մեր Տեղապետին մէջ վերջ գտան արարողութիւնները Մննչեան Աւետարանի ընթերցմամբ և Վառք ի բարձունքի երգեցողութեամբ։

— Իսկ յաջորդ առաւօտ ժամը հին պաշտուած ժամերգութեանէն ետք, հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց վանեց ամօժ. Տեառնը՝ Հոգը. Տ. Անուշաւան Վրդ., որ նաև քարոզեց օրուան խորհրդին շուրջ։ Ս. Պատարագէն ետք, Գերշ. Տ. Նորայր Նպու. Գողարեան նախագահեց Ջորճնէքի արարողութեան։

Ի բացակայութեան Ժառանգաւոր սաներու, Թէ՛ երեխ և Թէ՛ այսօր, երգեցողութիւնները կատարուեցան տեղայն աղայայիններու կողմէ։

● Դշ. 20 Յուն. — Յիւստակ մեռիլոց։ Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագեց Աւագ Թարգման Հոգը. Տ. Յուսիկ Արք. Պաշտասեան։ Ապա կատարուեցաւ հոգեանկատեան պաշտօն՝ ընդհանուր մեռելոց համար։

● Կիր. 24 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, մեր վերնամատրան մէջ, Ժամարարն էր Հոգը. Տ. Յուսիկ Արք.։

Լոյս մեծ, և բաղդատականը ընելով նախաքրիստոնէական և յետքրիստոնէական քաղաքակրթութեանց ու հոգեւոր արժէքներու նկատմամբ տոյժովուրդներու ունեցած ըմբռնումին։

● Բշ. 25 Յուն. — Նախատեսակին ի Ս. Յուսիկը նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպիս.։

● Գշ. 26 Յուն. — Տօն Անուանակոչութեան։ Առաւօտեան ժամը 8.30ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպիս. զիխաւորութեամբ, Միաբնութիւնը Վերապիւստում մատուց գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, Պատարագեց Գերշ. Տ. Հայրիկ Նպու. և քարոզեց Գերշ. Տ. Առողիկ Նպու, ընաբան ունեցալով Վնկչեցի անուն Նորա Յիսուս։ Վանք վերագործին, Հայոց Թաղի մատուէն, Վոյս ի խնայող չարակալին երգեցողութեամբ, Միաբնութիւն ի տոյժովուրդ բարձրացան Պատրիարքարան, ուր Գերշ. Տ. Սուրէն Արքեպիս. նախագահութեամբ կատարուեցաւ Վերանէքի արարողութիւն։ Օրհնուեցան Ս. Աթոռայ բարիքները։ Ապա, Թափօրը, զիխաւորութեամբ Վանեցա ժամօրհնող Հոգը. Հոր, մեկնեցաւ Վանքի մատանը, փառք։ Խոսնացը և սեղանատուէր, անդ ևս կատարուեւ համար Նոյն արարողութիւնը։ Օրհնուեցաւ նաև օրուան յատուկ հերիալի ուսանողական հարը։

● Դշ. 27 Յուն. — Նախատեսակին ի Ս. Յուսիկը նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպիս.։

